



ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ

- **ՀՀ ԴԱՏԱՆԱԶՈՒԹՅՈՒՆԸ 95 ՏԱՐԵԿԱՆ Է**
Հոբելյանական միջոցառումների խրոնիկա
- **ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒԴՂԱԾ ՀԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ**
- **ԿՈՐԴՈՐԱՏԻՎ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ**
Հետազոտություն
- **ՊԱՌԱՄԵՆՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ**
- **ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ` ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐ**
Տեսության հարցեր

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ



Այս տարի լրանում է Հայաստանում դատախազական ծառայության հիմնադրման 95-ամյակը: Այդ տարելիցին նվիրված հոբելյանական միջոցառումներն սկսվեցին 2013 թվականի հունիսի 28-ին՝ ՀՀ գլխավոր դատախազության վարչական շենքի պատին տեղադրված Հայաստանի դատախազության հիմնադիրներից մեկի, պետական գործիչ ՊԵՏԻԿ ԹՈՐՈՍՅԱՆԻ հարթաքանդակ-հուշաքարին և ՀՀ նախկին գլխավոր դատախազ ՀԵՆՐԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ անունը կրող դպրոցի բակում տեղադրված կիսանդրուն ծաղկեզամբյուղներ դնելու արարողությամբ:

Այնուհետև, ՀՀ դատախազության կուլտուրայի նիստերի մեծ դահլիճում դատախազության աշխատակիցների և հյուրերի մասնակցությամբ կայացավ հոբելյանական երեկո:

Բեմում էին ՀՀ վարչապետ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ, ՀՀ գլխավոր դատախազ ԱՂԱՆ ՀՈՎԱԵԹՅԱՆԸ, ՀՀ ԱԺ փոխնախագահ ՀԵՐՄԻՆԵ ՆԱԴԴԱԼՅԱՆԸ, ՀՀ արդարադատության նախարար ՀՐԱՅՐ ԹՈՎՄԱՍՅԱՆԸ, ՀՀ պաշտպանության նախարար ՍԵՅՐԱՆ ՕՂԱՆՅԱՆԸ, ՀՀ ոս-

տիկանապետ ՎԼԱԴԻՄԻՐ ԳԱՍՊԱՐՅԱՆԸ, ՀՀ ազգային անվտանգության ծառայության պետ ԳՈՐԻԿ ՀԱՎՈՐՅԱՆԸ, ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահ ԱՐՄԱՆ ՄԿՐՏՈՒՄՅԱՆԸ, ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ ՎԱՀՐԱՄ ՇԱՀԻՆՅԱՆԸ, ՀՀ դատախազության վետերանների հասարակական կազմակերպության նախագահ ՌԱՖԱՅԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ:

Երեկոն ներածական խոսքով բացեց ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, արդարադատության երկրորդ դասի պետական խորհրդական ՄԱՅՅԱԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ:

Ողջունի խոսքով հանդես եկավ ՀՀ գլխավոր դատախազ, արդարադատության պետական խորհրդական ԱՂԱՆ ՀՈՎԱԵԹՅԱՆԸ:

№77

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՂՈՒԹՅՈՒՆ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՂՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՀՐԱՏԱՐԱՎՎՈՒՄ Է 1997 ԹՎԱԿԱՆԻՑ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԱՐՄԵՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ - նախագահ
ԳՈՒՐԳԵՆ ԱՄԲԱՐՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ
ՎԱՅՐԱՍ ՇԱՅԻՆՅԱՆ
ԳԱՌՆԻԿ ՍԱՖԱՐՅԱՆ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝ Գ. ԱՄԲԱՐՅԱՆ

Խմբագրության հասցեն.
375010, ք. Երևան, Հանրապետության փ., 85
Հեռախոս՝ 52-33-76, Ֆաքս՝ 56-76-72
www.genproc.am

© Համակարգչային շարվածքը,
ոճը, տառաձևերը և էջադրումը՝
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ»

Հանձնված է արտադրության՝
04.07.2013 թ.
Ֆորմատ՝ 70 X 100 1/16
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 8 պայմ. մամուլ
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է
«Պոլիգրաֆ բիզնես» ՍՊԸ տպարանում
Երևան, Գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2013 թ.

2013

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ)
կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.)
և դոկտորական (2002թ.) ատենախոսությունների
հիմնարդույթների հրատարակման համար թույլատրելի
գիտական պարբերականների ցանկում:

ԱՌԱՆՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՏԱՀՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԶԷ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՊԱՅՔԱՐԵԼ ՀԱՆՅԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ

*ՀՀ գլխավոր դատախազ, արդարադատության պետական խորհրդական, իրավաբանության գիտությունների դոկտոր ԱԳՎԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ելույթը
ՀՀ դատախազության 95 ամյակին նվիրված հանդիսավոր նիստում*

Մեծարգո հյուրեր
Յարգելի գործընկերներ և վետերաններ
Այս տարի լրանում է Հայաստանում դատախազական ծառայության հիմնադրման 95-ամյակը և մենք այսօր հանդիսավորությամբ նշում ենք ոչ միայն դատախազու-

ծելաոճով և համամարդկային բարձրագույն արժեքներին ու ձևավորված լավագույն ավանդույթներին հավատարիմ մնալու և դրանք խորացնելու կարողությամբ:
Ասածիս լավագույն վկայությունն են միջազգային կառույցների կողմից Հայաստա-



թյան աշխատողի օրը, որը Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանվել է 10 տարի առաջ, այլ նաև՝ այդ նշանակալից հորեյանը:
Իր շուրջ մեկդարյա պատմության ընթացքում Հայաստանի դատախազությունը տարաբնույթ ժամանակներ է ապրել, սակայն միշտ էլ առանձնացել է իր կայուն գոր-

նի առաջընթացի արձանագրումը փողերի լվացման և թրաֆիքինգի դեմ պայքարում, հետևողական և նպատակասլաց աշխատանքները, որ տարվում են տարբեր ոլորտներում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման և թմրանյութերի ապօրինի շրջանառության հաղթահարման ուղղությամբ: Նկատելիորեն ակտիվացել ու առավել գործնակն է

դարձել իրավապահ այլ մարմինների, քաղաքացիական հասարակության ինստիտուտների հետ դատախազության համագործակցությունը՝ ուղղված օրինականության ամրապնդմանը: Ընդլայնվել ու կազմակերպարված դակային նոր որակ են ստացել կապերը ինչպես ԱՊԶ անդամ երկրների այնպես էլ արտասահմանյան այլ պետությունների դատախազական կառույցների և միջազգային կազմակերպությունների հետ: Դրա ցայտուն հավաստումն է նաև այն, որ Հայաստանի դատախազության հոբելյանական հանդիսությունների մասնակցելու համար երևան են ժամանել մեկ տասնյակից ավելի երկրների և միջազգային կառույցների պատվիրակություններ:

Հարգելի գործընկերներ:

Դիմակայելով արդիականության բարդ մարտահրավերներին, Հայաստանի դատախազությունը տարաբնույթ գործընթացներում ելակետ է ընդունում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների, պետության շահերի պաշտպանության, հետաքննության ու նախաքննության նկատմամբ դատախազական հսկողության, դատարաններում մեղադրանքի պաշտպանության, օրինականության և իրավակարգի ամրապնդման իր գործառույթները, որոնց կեն-



ՀՀ գլխավոր դատախազ Ա. ՅՈՎԱՆԻՍՅԱՆԸ վետերանների հետ

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳՐԵՐՈՎ

**ՀՀ նախագահի հրամանագրով
Կոտայքի մարզի դատախազ
Էդուարդ Անդրիկյանը և
թիվ 1 կայազորի զինվորական
դատախազ
Արսեն Սարգսյանը
պարգևատրվել են
«Մխիթար Գոշ» մեդալով:
Հանրապետության նախագահի
մեկ այլ հրամանագրով ՀՀ
գլխավոր դատախազության
միջազգային իրավական
կապերի բաժնի պետ Նելլի
Հարությունյանին, ՀՀ գլխավոր
դատախազության
կազմակերպական-
վերահսկողական վարչության
պետ Արտակ Հարությունյանին
և ՀՀ գլխավոր
դատախազության ավագ
դատախազ Ջոն Ֆարխոյանին
շնորհվել են
արդարադատության երրորդ
դասի պետական
խորհրդականի դասային
աստիճաններ:**

սագործունը ժողովրդավարության հենքի վրա իր պետականությունը կառուցող մեր երկրի յուրաքանչյուր դատախազի մասնագիտական պարտքի ու պատվի գործն է:

Ինչպես անցյալ տարվա աշնանը իրավապահ մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ Հայաստանի դատախազությունում կայացած խորհրդակցությունում նշեց Հանրապետության Նախագահը. «...բարեխիճ և ազնիվ դատախազները, որոնք համակարգում քիչ չեն, գիտակցում են հանրության և պետության առջև ստանձնած իրենց առաքելությունը և այդ առաքելությունն իրականացնում են

սրտացավորեն»:

Սա պարտավորեցնող, թերությունների և սխալների հանդեպ սթափ անհանդուրժողականություն պահանջող գնահատական է:

Անառարկելի է, որ դատախազությունը Սահմանադրությամբ և օրենքներով իրեն վերապահված լիազորությունները և իր առջև դրված խնդիրները կարող է հաջողությամբ իրականացնել միայն այն դեպքերում, երբ ունի բանհմաց, սկզբունքային, գործունյա ու անկաշառ դատախազներ: Եվ հենց դա է պատճառը, որ մենք առանձնակի կարևորում ենք կադրային քաղաքականության բարելավումը, համակարգը բանհմաց ու մասնագիտական բարձր որակներով

օժտված կադրերով համալրելու խնդիրը և մշտական ուշադրություն ենք դարձնում կադրերի ուսուցմանը և վերապատրաստմանը:

Յուրաքանչյուր դատախազ պետք է գիտակցի, որ ինքը հանրապետությունում իրականացվող քրեական քաղաքականության առանցքն է՝ դրանից բխող բոլոր պարտականություններով:

Հարգելի գործընկերներ:

Մեր համակարգի լավագույն ավանդույթներից է նաև դատախազական ծառայության վետերանների շարունակական աջակցությունը և ներդրումը դատախազության գործունեության բարելավման, երիտասարդ աշխատակիցների կրթության և դաստիարակության գործում: Այդ ամենի համար ես իմ երախտագիտությունն եմ հայտնում նաև մեր վաստակաշատ վետերաններին՝ իրենց բարեխիղճ, անձնվեր աշխատանքի համար, մաղթում նրանց երկար տարիների կյանք և հաջողություններ:

Հարգելի ներկաներ:

Հայաստանի դատախազության մարմինները իրենց ինը ու կես տասնամյակների կենսագրության ընթացքում զարգացման բարդ ուղի են անցել: Նրանք անմիջական մասնակցել են մեր երկրի ու ժողովրդի համար կենսականորեն կարևոր խնդիրների լուծմանը, ազգային պետականության հիմքերի ստեղծմանը, ժողովրդավարական պետության մոր արժեհամակարգի ձևավորմանը: Ներկայումս, դատախազության մարմինները իրավակարգի ամրապնդման և օրինականության ապահովման ոլորտում իրենց գործունեությունը ծրագրում և իրականացնում են ուշադ-

ՊԱՐԳԵՎՆԵՐ Ի ՆՇԱՆԱՎՈՐՈՒՄՆ ՀՈՔԵԼՅԱՆԻ

ՀՀ Աժ նախագահ Հ.Աբրահամյանի կարգադրությամբ ծառայողական պարտականությունները բարեխիղճորեն կատարելու համար ՀՀ Աժ պատվո մեդալով պարգևատրվել են. ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և կազմակերպված հանցագործությունների գործերով վարչության պետ Կորյուն Փիլոյանը, ՀՀ գլխավոր դատախազության անձնակազմի բաժնի պետ Վաղարշակ Վարդանյանը, ՀՀ զինվորական դատախազի տեղակալ Միհրան Մինասյանը: ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Աշոտ Նադոյանը, ՀՀ գլխավոր դատախազության քաղաքացիների ընդունելության և դիմումների քննարկման բաժնի պետ Ալեքսան Անդրեասյանը և Երևանի կայազորի զինվորական դատախազ Հայկ Ասլանյանը պարգևատրվել են ՀՀ Աժ նախագահի Ծնորհակալագրով:

Հայաստանի Հանրապետության վարչապետ Տ. Սարգսյանի որոշմամբ պարգևատրվել են ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Արմեն Դանիելյանը, ԼՂՀ գլխավոր դատախազ Արշավիր Դարամյանը, ՀՀ զինվորական դատախազ Գևորգ Կոստանյանը, «Դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Գրիգոր Սարգսյանը, Արմավիրի մարզի դատախազ Սամվել Մինասյանը, Տավուշի մարզի դատախազ Աննա Մանթաշյանը:

Անվտանգության խորհրդի քարտուղարի, ՀՀ գլխավոր դատախազի, ՀՀ պաշտպանության նախարարի, ՀՀ ազգային անվտանգության ծառայության պետի, ՀՀ ոստիկանապետի և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի հրամաններով պարգևների և խրախուսանքների են արժանացել ՀՀ դատախազության համակարգի մեծ թվով աշխատակիցներ: «Օրինականություն» հանդեսի խմբագրական խորհուրդը սիրով շնորհավորում է բոլոր պարգևատրվածներին:

րությունը կենտրոնացնելով հայկական իրավական պետության կայացման և զարգացման կոնկրետ հանգրվանի առաջնահերթությունների վրա: Եվ այս համատեքստում չի կարելի չնկատել, որ էականորեն աճել է դատախազության դերը պետականության հիմքերի անասանության ապահովման, ժողովրդավարության զարգացման, իրավական կարգապահության կատարելագործման, մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների ապահովման գործում:

Մենք պետք է գործուն միջոցներ ձեռնարկենք դատախազների դատավարական լիազորությունների պատշաճ կատարումը ապահովելու, դրանց ձևական իրականացման հնարավոր դրսևորումները բացառելու ուղղությամբ՝ ձգտելով, որ դատախազի յուրաքանչյուր որոշում բացատրելի լինի՝

օրենքի շրջանակում և արդարության տեսանկյունից ընկալելի ժողովրդի համար: Որովհետև, առանց հասարակության վստահության հնարավոր չէ արդյունավետ պայքարել հանցավորության դեմ:

Սիրելի բարեկամներ, գործընկերներ. շնորհավորելով դատախազության հոբելյանի և մասնագիտական տոնի հաճելի առիթով և մաղթելով հետագա հաջողություններ ձեզ և ձեր ընտանիքներին, համոզված եմ, որ յուրաքանչյուր տոնակատարություն պետք է առիթ դառնա արվածը արժևորելու, թերություններն ու բացթողումները հաղթահարելուն ուղղված առավել նպատակային գործունեության ծավալման համար՝ ի նպաստ մեր երկրում օրինականության հետագա ամրապնդման, մեր ժողովրդի ապահով կյանքի և մեր Հայրենիքի առաջընթացի: Ծնորհակալություն:



**Համակարգի
աշխատակիցներին
հորեյանի
առթիվ շնորհավորեց
և պարզևներ
հանձնեց
ՀՀ վարչապետ
ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ:**

Իր խոսքում վարչապետը, մասնավորապես, նշեց. «Դատախազությունը երկար ճանապարհ է անցել և ներկայումս նրա առջև կանգնած են նոր խնդիրներ: Հայաստանի Հանրապետությունում ձևավորվում է քաղաքացիական հասարակություն, և դա որակապես փոխում է խնդիրների առաջնահերթությունը, որոնք կանգնած են մեր առջև: ՀՀ Նախագահը խնդիր է դրել մեր առջև, որ մենք ինքներս ենք բացահայտելու մեր բացթողումները, հրապարակային խոսելու ենք դրանց մասին: Դա է ստեղծում այն երաշխիքները, որ մենք կկարողանանք հաղթահարել այդ բոլոր խնդիրները»:

Տ. Սարգսյանը ընդգծեց, որ «Դատախազությունը ևս ունի բազմաթիվ խդիր-

ներ, որոնք չնկատել չի կարելի: Ներկայիս իշխանությունների առանձնահատկությունն այն է, որ իրենք են բարձրաձայնում իրենց խնդիրների, այդ թվում՝ դատախազությունում առկա ռիսկերի մասին, որոնք առայժմ կան համակարգում: Դա մեզ հնարավորություն է տալու միասին առաջ ընթանալ: Միևնույն ժամանակ, դա ամենևին չի նշանակում, որ մենք չպետք է նկատենք այն դրական ձեռքբերումները, դինամիկան, որն այսօր գոյություն ունի դատախազության աշխատանքներում, դա չի նշանակում, որ մենք չպետք է մեծարենք ու արժանին հատուցենք այն ազնիվ ու պարկեշտ մարդկանց, ովքեր այսօր աշխատում են դատախազական համակարգում: Դա է առաջ շարժվելու ճանապարհը: Սակայն

երբ մենք խոսում ենք մեր բացթողումների և թերությունների մասին, դա ամենևին չի նշանակում որ ոմանք իրավունք ունեն ցեխ լցնելու ամբողջ համակարգի վրա և սևացնել ամեն ինչ: Ցավոք՝ դա դեռևս հաճախ հանդիպում է մեր առօրյա կյանքում»:

Վարչապետը, իր խոսքում ընդգծեց նաև, որ բոլորս վկա ենք Հայաստանում քաղաքացիական հասարակության ծնավորմանը: Սակայն պետք է հասկանանք, որ դա հեշտ ճանապարհ չէ, որովհետև շատ հաճախ պարզվում է, որ դեռևս մեր հասարակության բազմաթիվ օղակներ չեն գիտակցում այն պարզ հանգամանքը, որ ազատությունը, ժողովրդավարությունը միևնույն ժամանակ ենթադրում

են նաև պատասխանատվություն. «Մեզ անհրաժեշտ է այդ հանգամանքին ևս ուշադրություն դարձնել, իսկ դրա հաջողության բանալին պրոֆեսիոնալիզմի բարձրացումն է: Դա նշանակում է, որ կադրային քաղաքականությունը, այդ թվում դատախազությունում, ունի էական նշանակություն մեր ապագա հաջողությունները արձանագրելու համար: Կառավարությունը քայլեր կձեռնարկի, որպեսզի դատախազության համար ստեղծվեն աշխատանքային բարենպաստ պայմաններ, որպեսզի կարողանանք լուծել մասնագիտական խնդիրները և էապես բարելավել դատախազության աշխատողների կենսամակարդակը ու սոցիալական խնդիրները»:



ՀՐԲԵԼՅԱՆԻ առիթով ելույթներ ունեցան և դատախազության առավել աչքի ընկած աշխատակիցներին պարգևներ հանձնեցին. ՀՀ Աժ փոխնախագահ Հերմինե Նաղդալյանը, ՀՀ պաշտպանության նախարար **Սեյրան Օհանյանը**, ՀՀ ազգային անվտանգության ծառայության պետ, գեներալ-գնդապետ **Գորիկ Հակոբյանը**, ՀՀ ոստիկանապետ, գեներալ լեյտենանտ **Վլադիմիր Գասպարյանը**, ՀՀ արդարադատության նախարար **Հրայր Թովմասյանը**, ՀՀ հատուկ քննչական ծառայության

պետ, արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական **Վահրամ Շահինյանը**, ՀՀ արտակարգ իրավիճակների փոխնախարար **Հայկարամ Մխիթարյանը**: Հրապարակվեց նաև ՀՀ ազգային անվտանգության խորհրդի քարտուղար **Արթուր Բաղդասարյանի** շնորհավորական ուղերձը:

Երեկոն ավարտվեց մասնակիցների համար կազմակերպված ընդունելությամբ:

Հայաստանի դատախազության 95-ամյակին նվիրված հորեյանական հանդիսությունները շարունակվեցին 2013 թվականի հուլիսի 1-ին, որն 2003 թվականից, կառավարության որոշմամբ, նշվում է որպես դատախազության աշխատողի օր:

ՕՐՎԱ առաջին կեսին ՀՀ դատախազության 95-ամյակի տոնակատարությանը մասնակցելու համար Երևան ժամանած ավելի քան մեկ տասնյակ միջազգային կազմակերպությունների

և արտասահմանյան երկրների դատախազությունների պատվիրակությունների ղեկավարներին իր նստավայրում ընդունեց Հայաստանի Հանրապետության Նախագահ **Սերժ Սարգսյանը**:



ներդրած նշանակալի ավանդի համար: Նախագահը շնորհավորել է **Յուրի Չայկային** ՀՀ պետական բարձր պարգևի արժանանալու համար և նրան ու հանդիպմանը մասնակցող օտարերկրյա մյուս պետությունների գլխավոր դատախազներին մաղթել հաջողություններ՝ իրենց կարևորագույն գործում:

ՌԴ գլխավոր դատախազը շնորհակալություն է հայտնել նախագահ **Սերժ Սարգսյանին**՝ իր գործունեությունը նման բարձր գնահատականի արժա-

ճանրապետության նախագահը ողջունելով հյուրերին մեր երկրում, կարևորել է նրանց այցը փորձի փոխանակման, տարբեր երկրների և հասարակությունների առջև օրինականության, իրավակարգի և կայունության ապահովման առումով ծանացած արդի մարտահրավերներն ու սպառնալիքները քննարկելու, դրանց դիմակայման արդյունավետ ուղիներ գտնելու տեսանկյունից ևս:

Ընդգծելով, որ 21-րդ դարում աշխարհի որևէ երկիր ի վիճակի չէ միայնակ արդյունավետ պայքար իրականացնել կազմակերպված հանցավորության դեմ, **Սերժ Սարգսյանը** շնորհակալություն է հայտնել այն բոլոր երկրներին, ովքեր սերտորեն համագործակցում և իրավական աջակցություն են ցուցաբերում Հայաստանին:

Հանրապետության նախագահը հանդիպման ժամանակ Ռուսաստանի Ղազնության գլխավոր դատախազ **Յուրի Չայկային** պարգևատրել է Պատվով շքանշանով՝ արդարադատության ոլորտում հայռուսական համագործակցության մեջ

նացնելու և պարգևի համար՝ խորհրդանշական համարելով, որ պարգևատրման արարողությունը տեղի է ունենում ՀՀ դատախազության 95-ամյակի տոնակատարության օրերին: Նրա խոսքով, Հայաստանի և Ռուսաստանի դատախազությունների աշխատողները, իրավամբ, հպարտանում են համատեղ պատմության փառավոր էջերով և հաղթանակներով: **Յուրի**



Չայկան գոհունակությամբ է փաստել, որ ՀՀ և ՌԴ գլխավոր դատախազությունների միջև ձևավորվել են հարաբերություններ, որոնք լիարժեքորեն կարող են կոչվել ռազմավարական գործընկերություն: ՌԴ գլ-

խավոր դատախազը կարևորել է ոչ միայն երկկողմ փոխգործակցությունը, այլ նաև ԱՊՀ անդամ երկրների գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդում, Եվրոպայի խորհրդի մարմիններում, ինչպես նաև Դատախազների միջազգային ասոցիացիայի շրջանակներում համատեղ արդյունավետ աշխատանքը:

2013 թ. հուլիսի 1-ին, կեսօրից հետո,
ՀՀ գլխավոր դատախազությունում
ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը
կազմակերպել էր ընդունելություն
Հայաստանի Դատախազության 95-ամյակի կապակցությամբ
Երևան ժամանած պատվիրակությունների համար:



ՀՀ դատախազության կուլեգիայի նկարագրող սրահում կայացած հանդիպմանը մասնակցում էին. Դատախազների միջազգային ասոցիացիայի գործադիր քարտուղար **Դերեկ Կուիպերսը**, ՌԴ գլխավոր դատախազ, ԱՊՀ անդամ երկրների գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդի նախագահ **Յուրի Չայկան**, Ուկրաինայի գլխավոր դատախազ **Վիկտոր Պշոնկան**, Վրաստանի գլխավոր դատախազ **Արչիլ Կբիլաշվիլին**, Ղազախստանի գլխավոր դատախազ **Աշխատ Դոլուբանը**, Չեխիայի Հանրապետության գլխավոր դատախազ **Պավել Չեման**, Մոլդովայի գլխավոր դատախազ **Կորնելիու Գուրինը**, Կիպրոսի Հանրապետության գլխավոր դատախազ **Պետրոս Կլերիդեսը**, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ **Չեն Լյան Ֆուն**, Բելառուսի գլխավոր դատախազի տեղակալ **Ալեքսանդր Արխիպովը**, ԱՊՀ անդամ երկրների գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդի գործադիր քարտուղար **Լեոնիդ Երմոլանը**:

Շնորհակալույուն հայտնելով հյուրերին ՀՀ դատախազության հորեյանին նվիրված


միջոցառումներին մասնակցելու առիթով Երևան ժամանելու հրավերն ընդունելու համար, ՀՀ գլխավոր դատախազ **Աղվան Հովսեփյանը** հույս հայտնեց, որ ամուր ու գործնական կապերի հաստատումը արտասահմանի գործընկերների հետ մեծապես նպաստում է անդրազգային հանցավորության դեմ միասնական պայքարի ակտիվացմանը, մարդու իրավունքների պաշտպանությանը, օրինականության ամրապնդմանը:

ՀՀ գլխավոր դատախազը հանդիպմանը մասնակից պատվիրակությունների ղեկավարներին հանձնեց ՀՀ դատախազության 95-ամյակին նվիրված հորեյանական մեդալներ, իսկ պատվիրակության որոշ անդամների «ՀՀ դատախազության պատվավոր աշխատողի» կոչում և կրծքանշան:

ԱՊՀ անդամ պետությունների գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդի միաձայն որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը, օրինականության և իրավակարգի ամրապնդման գործում ունեցած ներդրման համար պարգևատրվեց ԱՊՀ անդամ երկրների գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդի հուշամեդալով,

որը նրան հանձնեց ՌԴ գլխավոր դատախազ, ԱՊՀ անդամ երկրների գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդի նախագահ Յուրի Չայկան:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գլխավոր դատախազ Արշավիր Ղարամյանը ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Յովսեփյանին հանձնեց «ԼՂՀ դատախազության պատվավոր աշխատող» կրծքանշանը:



Պատվիրակությունների ընդունելության արարողությունից առաջ ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Յովսեփյանը և Մոլդովայի Հանրապետության գլխավոր դատախազ Կորնելիու Գուրինը ստորագրեցին Հայաստանի և Մոլդովայի դատախազությունների միջև համագործակցության ծրագիրը՝ ի լրումն այս տարվա հունվարի 29-ին ստորագրած հուշագրի: Մոլդովայի գլխավոր դատախազը հույս հայտնեց, որ ՀՀ գլխավոր դատախազության հետ համագործակցության ծրագրի ստորագրումը կխթանի երկկողմ փոխգործակցությանը: «Այսօրվա փաստաթղթի ստորագրումը նոր բարձրունքների է հասցնում մեր համագործակցությունը», սասց Մոլդովայի գլխավոր դատախազը:



Համագործակցության հուշագիր ստորագրվեց նաև Կիպրոսի Հանրապետության դատախազության հետ: Կիպրոսի գլխավոր դատախազ Պետրոս Կլեռիդեսը նշեց, որ իր երկրում մեծաթիվ հայկական համայնք կա, ինչը բարեկամական հարաբերությունների խթան է: «Հուսով եմ, որ փոխընթերցման հուշագիրը կամրայնի դի երկու դատախազությունների միջև հետագա իրավական համագործակցությունը», - ընդգծեց Կիպրոսի գլխավոր դատախազը:

**Հանդիսավոր օրվա երեկոյան
Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի
ազգային ակադեմիական թատրոնի դահլիճում կայացավ
հանդիսավոր երեկո-տոնական համերգ նվիրված
դատախազության աշխատողի օրվան և
Հայստանի դատախազության հիմնադրման 95-ամյակին:**

Տոնականորեն զարդարված դահլիճում էին ՀՀ Աժ նախագահ Հովիկ Աբրահամյանը, ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, Նախարարներ, Աժ

պատգամավորներ, մարզպետներ, պետական-հասարակական գործիչներ, գիտության և մշակույթի ներկայացուցիչներ, դատախազության աշխատակիցներ

և վետերաններ, արտասահմանից հորելյանին մասնակցելու համար Երևան ժամանած հյուրեր:

Հանդիսության մասնակիցները ոտնկայս լսեցին Հանրապետության օրհներ-

գը, որից հետո ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավար **Վիգեն Սարգսյանը** ընթերցեց Հայաստանի հանրապետության Նախագահ **Սերժ Սարգսյանի** շնորհավորական ուղերձը, որում ասված է.

**ՀՀ ՆԱԽԱԳԱՀ ՍԵՐՃ ՍԱՐԳՍՅԱՆԻ
ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶԸ**

«Հարգելի դատախազներ

Դատախազության համակարգի հարգելի աշխատակիցներ

Սրտանց շնորհավորում եմ ձեզ Հայաստանում դատախազական ծառայության 95-ամյակի և դատախազության աշխատողի օրվա կապակցությամբ:

Հայաստանի դատախազությունը գրեթե մեկդարյա իր տարեգրությամբ պատվով է իրականացրել իր լիազորությունները, երկրում ապահովել օրինականությունն ու իրավակարգը, իսկ նորանկախ Հայաստանում իր ուշադրությունը բևեռել է նաև մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության վրա:

Այսօր էլ դատախազությունը շարունակում է պատասխանատվության զգացումով կատարել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իր լիազորությունները և հաջողությամբ դիմագրավել ժամանակի մարտահրավերներին: Դատախազության համակարգում շատ են բանիմաց, հմուտ ու նվիրյալ դատախազները, որոնց արդյունավետ գործունեությունը դատախազության հետագա հաջողությունների, և վերջին հաշվով, երկրի առաջընթացի գրավականն է:

Գոհունակությամբ պետք է նշել, որ Հայաստանի դատախազությունը ակտիվորեն ներգրավվել է անդրազգային այնպիսի հանցագործությունների դեմ պայքարում, ինչպիսիք են փողերի լվացումը և թրաֆիքինգը: Այդ բնագավառում Հայաստանի առաջընթացն արձանագրել են նաև միջազգային կառույցները, որոնց հետ կառուցողական համագործակցության դրական փորձ է ձևավորվել: Խրախուսելի է նաև, որ Հայաստանի դատախազությունը բազմաթիվ երկկողմ համաձայնագրեր է կնքել արտասահմանյան երկրների համապատասխան կառույցների հետ:

Կրկին շնորհավորելով հորելյանի և մասնագիտական տոնի առթիվ՝ մաղթում եմ ձեզ նոր ձեռքբերումներ դատախազական դժվարին ծառայության մեջ և առողջություն ձեզ և ձեր ընտանիքներին»:

Հրապարակվեցին նաև ՀՀ Նախագահի հրամանագրերը դատախազության մի խումբ աշխատակիցների դա-

սային աստիճաններ շնորհելու և «Մխիթար Գոշ» մեդալով պարգևատրելու մասին:

**Այնուհետև ներկաներին դիմեց
 ՀՀ գլխավոր դատախազ,
 Արդարադատության պետական խորհրդական
 Աղվան Հովսեփյանը.**

Ազգային ժողովի հարգելի նախագահ, հարգելի վարչապետ Մեծարգո հյուրեր Քարգելի գործընկերներ Տիկնայք և պարոնայք

Սրտանց շնորհավորում եմ բոլորիդ դատախազության աշխատողի օրվա և Չայաստանում դատախազական ծառայության հիմնադրման 95-ամյակի կապակցությամբ:

Ձեր բոլորի անունից ուզում եմ շնորհակալություն հայտնել Չայաստանի Չանրապետության Նախագահ մեծարգո պարոն **Սերժ Սարգսյանին**՝ դատախազության հոբելյանի առիթով հղած ուղերձի, դատախազության գործունեությանը տված գնահատականների և ջերմ բարենադթանքների համար:

Չարգելի ներկաներ:

Չայաստանի դատախազության հոբելյանական հանդիսություններին մասնակցելու համար երևան են ժամանել ավելի քան մեկ տասնյակ երկրների և միջազգային կառույցների պատվիրակություններ: Մեր հրավերին արձագանքելու համար երախտիքի խոսք եմ հղում դատախազների միջազգային ասոցիացիայի պատվիրակությանը և հեղինակավոր այդ կազմակերպության գործադիր քարտուղար՝ պարոն **Դերկ Կուխպերսին**:

Ռուսաստանի Դաշնության դատախազության պատվիրակությանը՝ Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազ, ԱՊՉ անդամ երկրների գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդի նախագահ **Յուրի Չայկայի** գլխավորությամբ: Ուկրաինայի դատախազության պատվիրակությունը՝ գլխավոր դատախազ **Վիկտոր Պշոնկայի** գլխավորությամբ:

Վրաստանի դատախազության պատվիրակությանը, որը գլխավորում է Վրաստանի Չանրապետության գլխավոր դատախազ **Արչիլ Կբիլաշվիլին**:

Ղազախստանի հանրապետության դատախազության պատվիրակությունը՝ գլխավոր դատախազ **Աշխատ Դոլուբակի** գլխավորությամբ:

Ջերմորեն ողջունում եմ Չեխիայի հանրապետության գլխավոր դատախազ **Պավել Ջեմանին** և նրա ղեկավարած պատվիրակության անդամներին: Մոլդովայի Չանրապետության գլխավոր դատախազության պատվիրակությանը՝ գլխավոր դատախազ **Կորնելիու Գուրինի** գլխավորությամբ:

Կիպրոսի գլխավոր դատախազ **Պետրոս Կլերիդեսին**:

Մեր հանդիսություններին մասնակցում են նաև. Չինաստանի գլխավոր դատախազ

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՄԵՊԱԼ



Ի նշանավորումն Հայաստանի դատախազության 95-ամյակի թողարկվել է հոբելյանական մեդալ, որով ՀՀ գլխավոր դատախազի հրամանով պարգևատրվել են դատախազության առավել աչքի ընկած և դատախազության համակարգում 10 և ավելի տարիներ աշխատող դատախազները, վետերաններ, պետական և հասարակական կառույցների ներկայացուցիչներ, ՀՀ դատախազության հետ համագործակցող արտասահմանյան երկրների դատախազներ և միջազգային կառույցների պաշտոնյաներ և աշխատակիցներ:

գի տեղակալ **Չեն Լյան Ֆուի**, Բելառուսի գլխավոր դատախազի տեղակալ **Ալեքսանդր Արխիպովի**, ԱՊՀ անդամ երկրների գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդի գործադիր քարտուղար **Լեոնիդ Երմոլաևի** գլխավորած պատվիրակություններ:

Հարգելի մասնակիցներ

Շնորհակալ եմ նաև պետական հասարակական կառույցների ղեկավարներին, մեր վետերաններին, բոլոր հյուրերին՝ մեր հրավերին արձագանքելու և շնորհավորական խոսքերի, ուղերձների, հեռագրերի ու բարեմաղթանքների համար, այն հաստատ համոզմամբ, որ մեր համատեղ գործունեությունը նպաստելու է հանցավորության դեմ միասնական պայքարի ակտիվացմանը, օրինականության ամրապնդմանը, մեր երազած դրախտավայր Հայաստանի արարմանը:

Սիրելի բարեկամներ:

Իր շուրջ մեկդարյա տարեգրության բոլոր հանգրվաններում մեր երկրի հնագույն պետական կառույցներից մեկը՝ դատախազությունը միշտ էլ առանձնացել է

Տարեգրության էջերով



ՀՀ դատախազության 95-ամյակին նվիրված հրատարակվել է «Հայաստանի Հանրապետության դատախազության Հուշամատյան» եռալեզու պատկերազարդ ալբոմը: «Տարեգրություն», «Հայաստանի դատախազները», «Կոլեգիան», «Կառուցվածքը», «Կադրեր», «Դատախազության աշխատակազմ», «Դատախազության դպրոց» և «Միջազգային կապեր» խորագրերով գրքում համառոտ ներկայացված է Հայաստանի դատախազության պատմությունը, ներկայի գործառնությունները, համագործակցությունը այլ երկրների դատախազական կառույցների հետ:

իր կայուն գործելաճով և ձևավորված լավագույն ավանդույթներին հավատարիմ մնալու և դրանք զարգացնելու ու խորացնելու կարողությամբ: Եվ ներկայում՝ դիմակայելով արդիականության բարդ մարտահրավերներին, Հայաստանի դատախազությունը տարաբնույթ գործընթացներում ելակետ է ընդունում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների, պետության շահերի պաշտպանության, հետաքննության ու նախաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողության, դատարաններում մեղադրանքի պաշտպանության, օրինականության և իրավակարգի ամրապնդման սահմանադրական գործառնությունները, որոնց կենսագործումը, ժողովրդավարության սկզբունքներով իր անկախ պետականությունը կառուցող երկրի յուրաքանչյուր դատախազ դիտում է որպես իր մասնագիտական պարտքի ու պատվի կարևորագույն գործ:

Այդպես է եղել միշտ, և այդպես է լինելու՝ հետայսու»:

Շնորհավորանքի ու բարեմաղթանքի ջերմ խոսք ասացին ՌԴ գլխավոր դատախազ, ԱՊՀ անդամ երկրների գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդի նախագահ **Յուրի Չայկան**, դատախազների միջազգային ասոցիացիայի գործադիր քարտուղար **Դերեկ Կուիպերսը**, Չեխիայի Հանրապետության գլխավոր դատախազ **Պավել Չեման**, Վրաստանի գլխավոր դատախազ **Արչիլ Կբիլաշվիլին**:

Երեկոն ավարտվեց արվեստի վարպետների ճոխ համերգով:

ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԸ

2013թ. հունիսի 7-ին ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանն ընդունել է Վրաստանի արդարադատության նախարար տիկին Թեա Յուլիկանիի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են երկու երկրներում իրականացվող դատախազական բարեփոխումներին, դատախազական համակարգերի առանձնահատկություններին վերաբերող հարցեր:

Յյուրի խնդրանքով՝ ՀՀ գլխավոր դատախազը մանրամասնել է նաև թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայ-

քարում Հայաստանի դրական փորձը, արձանագրված ձեռքբերումներն ապահովելու ուղղությամբ իրականացված քայլերը:

Կողմերը պայմանավորվել են շարունակել փոխգործակցությունը՝ նախանշելով երկու երկրների դատախազությունների միջև համագործակցությունը զարգացնելու նոր ուղղություններ:

ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանն 2013թ. հունիսի 19-ին ընդունել է Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Սոհամմադ Ռեյխիին:

Կողմերը քննարկել են հանցավորության դեմ պայքարում երկու երկրների դատախազությունների համագործակցությանը վերաբերող հարցեր այդ համատեքստում կարևորելով ԻԻՀ գլխավոր դատախազի երևանյան այցի ժամանակ Փոխընթացման հուշագրի ստորագրումը:

Դեսպանը, շնորհակալություն հայտնելով ԻԻՀ գլխավոր դատախազին ջերմ ընդունելու և հյուրընկալելու համար, **Ղուլամհոսեյն Սոհսենի Էժեի** անունից ՀՀ գլխավոր դատախազին հրավիրել է Իրանի Իսլամական Հանրապետություն:

Կողմերը պայմանավորվել են շարունակել փոխգործակցությունն ու քննարկումները ի լրումն Հուշագրի՝ երկու երկրների դատախազությունների միջև համագործակցության ծրագիր ստորագրելու համար:



ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանն 2013թ. հուլիսի 2-ին ընդունել է Կիպրոսի Հանրապետության գլխավոր դատախազ Պետրոս Կլերիդեսին

Հանդիպման ընթացքում կողմերը կարևորել են երկու երկրների դատախազությունների միջև համագործակցության մասին այս տարվա հուլիսի 1-ին ստորագրված հուշագիրը և հույս հայտնել, որ այն կնպաստի և նոր որակ կհաղորդի երկու երկրների իրավապահների

համագործակցությանը:

ՀՀ գլխավոր դատախազը տեղեկացրել է, որ կոնկրետ քրեական գործով իրավական օգնության մասին միջնորդություն է ուղարկվել Կիպրոս՝ դիվանագիտական ճանապարհներով: Հաշվի առնելով, որ արդեն առկա է ստորագրված

երկկողմանի փաստաթուղթ՝ ՀՀ գլխավոր դատախազը Կիպրոսի գլխավոր դատախազին է փոխանցել հասարակական հնչեղություն ստացած քրեական գործով իրավական օգնություն ցուցաբերելու մասին միջնորդությունների կրկնօրինակները:

Տեղեկացնենք, որ խոսքը, մասնավորապես, վերաբերում է գործարար Փայլակ Հայրապետյանի հաղորդման հիման վրա ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության քննչական գլխավոր վարչության ՀԿԳ քննության վարչությունում 2012 թվականի օգոստոսի 6-ին հարուցված քրեական գործին, որով իրավական օգնություն ցուցաբերելու մասին Կիպրոսի Հանրապետության իրավասու մարմիններին ուղղված Հայաստանի ոստիկանության՝ վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունն ուղարկվել է 2012 թվականի սեպտեմբերին: Նույն

քրեական գործով իրավական օգնություն ցուցաբերելու վերաբերյալ երկրորդ միջնորդությունը, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի ստորագրությամբ, Կիպրոսի գլխավոր դատախազին ուղարկվել է 2013 թվականի հունիսի 19-ին:

Միջնորդությունների վերաբերյալ փաթեթը հանձնելով Կիպրոսի գլխավոր դատախազին՝ ՀՀ գլխավոր դատախազը նաև խնդրել է հանձնարարել Կիպրոսի համապատասխան ծառայություններին՝ կատարել միջնորդության պահանջները և կատարելուց հետո, արդյունքների մասին իրազեկել Հայաստանի գլխավոր դատախազությանը:

Կիպրոսի գլխավոր դատախազը վստահեցրել է, որ կհանձնարարվի իրավասու մարմիններին հնարավորինս սեղմ ժամկետում ապահովել միջնորդության կատարումը:

2013թ. հուլիսի 3-ին ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանն ընդունել է Չինաստանի ժողովրդական Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Չեն Լյանֆուի գլխավորած պատվիրակությանը:

Զրուցակիցները քննարկել են երկու երկրների դատախազությունների միջև համագործակցությունը զարգացնելու հեռանկարներին վերաբերող հարցեր:

ԶԺՀ գլխավոր դատախազի տեղակալը բարձր է գնահատել Հայաստանի դատախազության միջազգային հեղինակությունը և հավաստել Հայաստանի դատախազության հետ համագործակցությունը ավելի զարգացնելու իրենց պատրաստակամությունը:

Պարոն **Չեն Լյանֆուն** ՀՀ գլխավոր դատախազին է փոխանցել ԶԺՀ գլխավոր դատախազի հրավերը՝ այցելել Չինաստան: Կողմերը պայմանավորվածություն են ձեռք բերել աշխատանքային կարգով քննարկել այցելության մանրամասները՝ նախանշելով փոխգործակցությունը զարգացնելու նոր ուղիներ:

ՀՀ գլխավոր դատախազը

շնորհակալություն է հայտնել բարձր գնահատականի համար՝ արձանագրելով, որ ձևավորված բարիդրացիական հարաբերությունները կնպաստեն հատկապես անդրազգային հանցավորության դեմ պայքարում փորձի փոխանակմանը:





ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ
ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ՀՀ գլխավոր դատախազի հրամանով.

- ՀՀ դատախազության կոլեգիայի անդամ է նշանակվել ՀՀ գլխավոր դատախազության սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ **Գրիգոր ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԸ**:
- ՀՀ գլխավոր դատախազության ընդհանուր բնույթի հանցագործությունների գործերով վարչության պետ – ՀՀ դատախազության կոլեգիայի անդամ է նշանակվել **Դավիթ ՍԱՐԳՍՅԱՆԸ**, ազատվելով Շիրակի մարզի դատախազի պաշտոնից:
- Շիրակի մարզի դատախազ - ՀՀ դատախազության կոլեգիայի անդամ է նշանակվել **Կարեն ՀԱՅԲԱԶՅԱՆԸ**, ազատվելով Լոռու մարզի դատախազի պաշտոնից:
- Լոռու մարզի դատախազ է նշանակվել **Ջակոբ ԴԱՐՍԻԱՆՅԱՆԸ**, ազատվելով Արմավիրի մարզի դատախազի պաշտոնից:
- Արմավիր մարզի դատախազ է նշանակվել **Սամվել ՍԻՆԱՆՅԱՆԸ**, ազատվելով Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազի պաշտոնից:
- Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազ է նշանակվել **Հովսեփ ՍԱՐԳՍՅԱՆԸ**:
- Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատախազ է նշանակվել **Հարություն ՍԱՐԳՍՅԱՆԸ**:
- ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ է նշանակվել **Գագիկ ԽԱԶԻԿՅԱՆԸ**, ազատվելով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազի պաշտոնից:
- Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազ է նշանակվել **Թևոս ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆԸ**:

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐՆ ԸՍՏ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՈՐՈՇ ԵՐԿՐՆԵՐԻ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ

Գոռ ԱԼՈՅԱՆ

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն
վարչական շրջանների դատախազության դատախազ

Քրեական իրավունքում համեմատությունը հասկացվում է որպես քրեաիրավական երևույթների ուսումնասիրության՝ գիտական ճանաչողության այլ մեթոդների հետ համատեղ օգտագործվող առանձնահատուկ եղանակ: Մասնագիտական գրականության մեջ առանձնացվում է համեմատականիրավական (այդ թվում՝ քրեաիրավական) հետազոտությունների երկու տեսակ՝ նորմատիվային և ֆունկցիոնալ (գործառնության): Նորմատիվային համեմատությունը ենթադրում է նմանվող իրավական նորմերի, ինստիտուտների, օրենսդրական ակտերի վերլուծություն: Գործառնության դեպքում ընդգրկվում է հարցերի ավելի լայն շրջանակ, այդ թվում՝ հարցեր, որոնք կապված են իրավական նորմերի կիրառման պրակտիկայի, իրավաբանական դոկտրինայում առկա դիրքորոշումների հետ¹:

Այս առումով պետք է նշել, որ համեմատական-իրավական հետազոտություններում օրենսդրության վերլուծության դերը խիստ կարևորվում է: Այն տեղ է զբաղեցնում համեմատական իրավագիտության ակունքներում, որն իր հերթին հնարավորություն է ընձեռում հասնելու մի շարք նպատակների իրականացման, մասնավորապես՝ ճանաչողական, տեղեկատվական, վերլուծական և այլն²:

Այժմ անդրադառնանք արտասահմանյան մի շարք երկրներում սեփականության քրեաիրավական պաշտպանության առանձնահատկություններին: Այս տեսանկյունից կքննարկվեն ինչպես **մայրցամաքային (ռոմանագերմանական)**, այնպես էլ **անգլախաղաղական և մուսուլմանական**

իրավական համակարգերի բնութագրական գծերը:

Այսպես, **անգլիայում** սեփականության դեմ ուղղված հանցագործությունների համար քրեական պատասխանատվության հարցերը կարգավորվում են «Գողության մասին» 1968 և 1978թթ., ինչպես նաև «Ու-

¹ Տե՛ս Саидов А. Х. Сравнительное правоведение. М., 2007, էջեր 15-17:
² Այդ մասին առավել մանրամասն տե՛ս Бехруз Х. Сравнительное правоведение. М., 2008, Ведерникова О. Н. Современные уголовно-правовые системы: типы, модели, характеристика // Государство и право, 2004, N1, Давид Р., Жоффре-Спинози К. Основные правовые системы современности. М., 1996, Есаков Г.А. Основы сравнительного уголовного права. М., 2007, Крылова Н. Е., Серебренникова А.В. Уголовное право зарубежных стран (Англии, США, Франции, Германии). М., 1998:

նեցվածքին հանցավոր վնաս պատճառելու մասին» 1971թ. օրենքներով: Օրենսդրական նշված ակտերի ընդունման կապակցությամբ անգլիական քրեական իրավունքում կիրառության մեջ դրվեց «գողություն» (larceny) միասնական հասկացությունը, որը ներառեց նախկինում կիրառվող այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «գաղտնի հափշտակությունը, յուրացումը և խարդախությունը»:

Դրանից բացի, տվյալ երկրի քրեական իրավունքում առանձնացվում են սեփականության դեմ ուղղված հետևյալ ոտնձգությունները՝ կողոպուտը, խաբեությամբ ուրիշի գույքին տիրանալը, շորթումը, հափշտակված գույքի պարտակումը, ինչպես նաև ուրիշի գույքին վնաս պատճառելու տարբեր տեսակները (հրկիզելը, ոչնչացնելը կամ վնասելը) և որոշ այլ արարքներ, որոնց համար պատասխանատվություն է սահմանվում «Գողության մասին» 1971թ. վերոհիշյալ օրենքով: Ընդ որում, «գողությունը» նշված բոլոր ակտերում օգտագործվում է, մեր պատկերացմամբ, «հափշտակություն» հասկացությունը բացահայտելու համար: Պատահական չէ, որ այդ ակտերի համաձայն՝ **«անձը մեղավոր է ճանաչվում գողության մեջ, եթե անազնիվ ճանապարհով յուրացնում է ուրիշի գույքը՝ նպատակ ունենալով ընդմիջտ գրկել նրան այդ գույքից»:** Բացի այդ, պատասխանատվությունը, կախված հափշտակության չափերից, այդ ակտերով չի տարբերակվում: Դատարանն իրավասու է նույն պատիժը նշանակել և՛ խոշոր, և՛ մանր չափերի գողությունների համար: Այդ հարցի լուծումն ամբողջովին թողնված է իրավակիրառողի հայեցողությանը:³

Մինևույն ժամանակ, եթե «գողության» դեպքում անգլիական քրեական իրավունքում ենթադրվում են հափշտակության միայն բռնության հետ չկապված եղանակները, ապա կողոպուտը (robbery), հակառակը՝ սահմանվում է որպես հափշտակության այնպիսի եղանակ, որի դեպքում կիրառվում է ֆիզիկական կամ հոգեկան բռ-

նություն: Մասնավորապես, «Գողության մասին» 1968թ. օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ **«Անձը մեղավոր է ճանաչվում կողոպուտի մեջ, եթե գողություն կատարելու ընթացքում կամ դրանից անմիջապես առաջ ուժ է գործադրում մեկ ուրիշի նկատմամբ կամ փորձում է վախեցնել վերջինին՝ սպառնալով, որ նրա նկատմամբ անհապաղ ուժ կգործադրվի»:** Այսինքն, կողոպուտի հանցակազմը կառուցված է «գողություն» հասկացության հիման վրա: Յետևաբար, այդ արարքը բնութագրվում է նույն հատկանիշներով, ինչ որ գողությունը, բացառությամբ դրա կատարման եղանակի: Ի դեպ, բռնության՝ տուժողի կյանքի կամ առողջության համար վտանգավորության առկայությունը կամ բացակայությունը որպես տվյալ արարքի հատկանիշներ նախատեսված չեն: Դրանք հաշվի են առնվում միայն պատիժ նշանակելիս:

Բացի այդ, օրենքը չի պարունակում նաև կողոպուտի ծանրացնող հանգամանքներ, մինչդեռ իրավակիրառական պրակտիկայում առավել խիստ պատասխանատվության հիմք են հանդիսանում զինվածությունը, արարքը խմբի կողմից կատարելը և որոշ այլ հատկանիշներ: Ընդ որում, օրենքով քննարկվող հանցագործության համար նախատեսված են բավականին խիստ պատիժներ՝ ընդհուպ մինչև ցմահ բանտարկություն (8-րդ հոդվածի 2-րդ կետ):⁴

Անգլիական քրեական իրավունքում գոյություն ունեն նաև ուրիշի գույքին խաբեությամբ տիրանալու մի քանի տեսակներ: Այդ հանցագործությունների հիմնական տեսակը նախատեսված է «Գողության մասին» 1968թ. օրենքով: Դրա էությունն ուրիշի գույքին տիրանալն է նրան մոլորության մեջ գցելով: Նշված օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված են տվյալ հանցագործության հետևյալ հիմնական հատկանիշները. **1) ապօրինաբար գույքին տիրանալը, 2) ուրիշին պատկանող գույքին տիրանալը, 3) մոլորության մեջ գցելը և 4) մեկ ու-**

³ St'u Kurs уголовного права в пяти томах. Том 5. Особенная часть // Под ред. Г. Н. Борзенкова, В. С. Комисарова, էջեր 463-464:

⁴ St'u Kurs уголовного права в пяти томах. Том 5. Особенная часть, էջ 464:

րիշին այդ գույքից ընդմիշտ զրկելու ձգտումը:⁵

Անգլիայի քրեական օրենսդրությամբ պատասխանատվություն է նախատեսվում նաև շորթման համար: Մասնավորապես, «Գողության մասին» 1968թ. օրենքը սահմանում է տվյալ հանցագործության ընդհանուր հասկացությունը, որը ներառում է հետևյալ հատկանիշները. **1) անհիմն պահանջ ներկայացնելը, 2) սպառնալիքներ գործադրելը, 3) նյութական օգուտ ստանալու նպատակ ունենալը, 4) իր կամ այլ անձանց համար կատարելը և 5) դրանով մեկ ուրիշին վնաս պատճառելու ձգտումը:** Ընդ որում, հետաքրքրարժան է, որ նշված օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ իրավախախտումը որպես շորթում ճանաչելու համար նշանակություն չունի, թե հանցավորը կոնկրետ ի՞նչ պահանջ է ներկայացնում, և այն կատարելու նպատակով ի՞նչ բնույթի սպառնալիք է գործադրում: Դա կարող է վերաբերել ինչպես գույք կամ գույքի նկատմամբ իրավունք հանձնելուն, այնպես էլ ոչ գույքային բնույթի գործողություններ կատարելուն: Այլ կերպ ասած, անգլիական օրենսդրության համաձայն, շորթումը որոշ դեպքերում կարող է ընդհանրապես գույքային բնույթ չկրել: Միևնույն ժամանակ, նշված հոդվածի 1-ին կետով սահմանված է, որ շորթման համար քրեական պատասխանատվությունը բացառվում է, եթե մեկ ուրիշին որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու պահանջ ներկայացնողը հանդգնված է, որ իր պահանջը հիմնավորված է, իսկ սպառնալիքի գործադրումը հանդիսանում է այդ պահանջը կատարելուն հասնելու անհրաժեշտ միջոց:⁶

ԱՄՆ-ի 1962թ. Օրինակելի քրեական օրենսգրքի 223.1 հոդվածի համաձայն՝ հափշտակությունը (theft) սահմանված է որպես **«միասնական ոտնձգություն, որը միավորում է գողության, յուրացման, խարդախության, շորթման, շան-**

տաժի, վստահված գույքին խաբեությանը տիրանալու, հափշտակված գույքը ձեռք բերելու և իրացնելու հանցակազմերը»:⁷ Նշված հանցագործությունը, փաստորեն, հիմնականում ներառում է բռնության հետ չկապված եղանակներով կատարվող հանցավոր ոտնձգությունները: Բացառություն են, թերևս, շորթումը և շանտաժը, որոնք ԱՄՆ օրենսդրությամբ սահմանազատված են իրարից:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ, ամերիկյան իրավունքի աղբյուրներում, ի տարբերություն, անգլիականի, հափշտակությունների համար քրեական պատասխանատվությունը տարբերակված է կախված դրանցով պատճառվող գույքային վնասի չափից: Մասնավորապես, մանր հափշտակությունների համար սահմանված են անհամեմատ ավելի մեղմ պատիժներ, քան խոշոր չափերով կատարվածների պարագայում: Ընդ որում, հափշտակության վտանգավոր աստիճանի որոշման համար մահանգների քրեական օրենքներով սահմանված են նաև այլ չափանիշներ: Դրանք կարող են կապված լինել, հանցանքի կատարման եղանակի և հանցագործության առարկայի հետ: Այսպես, Նյու-Յորք նահանգի քր. օր.-ի համաձայն՝ վտանգավորության երրորդ աստիճանի հանցագործություն են համարվում պաշտոնական փաստաթղթերի կամ գիտահետազոտական գաղտնի նյութերի հափշտակությունները, անկախ դրանց արժեքից: Բացի այդ, ավտոմեքենայի հափշտակությունը, գրեթե բոլոր նահանգների քրեական օրենսդրությամբ, նույնպես ավելի խիստ է պատժվում, քան այլ առարկաների պարագայում:⁸

Ինչ վերաբերում է սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործություններին՝ կողոպուտի (robbery) տարբեր դրսևորումներին, ապա ԱՄՆ-ի քրեական օրենսդրությամբ դրանք սահմանվում են որպես անմիջականորեն տուժողից կամ նրա ներկայությամբ կա-

⁵ Տե՛ս Крылова Н. Е., Серебренникова А. В. Уголовное право зарубежных стран (Англии, США, Франции, Германии), էջ 198:

⁶ Տե՛ս նաև Курс уголовного права в пяти томах. Том 5. Особенная часть, էջ 467:

⁷ Տե՛ս Примерный УК США. М.: Прогресс, 1969, էջ 32:

⁸ Տե՛ս նաև Курс уголовного права в пяти томах. Том 5. Особенная часть, էջ 468:

տարված հափշտակություններ, որոնք զուգորդված են բռնությամբ կամ «վախ ներշնչելով», այսինքն՝ ֆիզիկական կամ հոգեկան բռնության գործադրմամբ, որը չի ներառում մահ պատճառելը: Այդ ընթացքում մահ պատճառելը սահմանված է որպես առաջին աստիճանի (ծանր) սպանություն:⁹

Ամերիկյան իրավունքի աղբյուրների համաձայն՝ կողոպուտը և շորթումը բնութագրվում են մի շարք ընդհանուր հատկանիշներով: Մասնավորապես, շորթումը սահմանվում է որպես ուրիշի գույքին տիրանալուն ուղղված, տարբեր սպառնալիքների գործադրմամբ զուգորդված ոտնձգություն, եթե բացակայում են կողոպուտի հատկանիշները: Այդ երկու ինքնուրույն հանցատեսակների (սպառնալիքով զուգորդված կողոպուտի և շորթման) սահմանազատումը, ամերիկյան իրավաբանների կարծիքով, իրականացվում է հետևյալ չափանիշներով. **կողոպուտի դեպքում հանցավորը տիրանում է ուրիշի գույքին տուժողի կամքին հակառակ, իսկ շորթման դեպքում՝ նրա համաձայնությամբ, թեև դա հարկադրանքի արդյունք է:**¹⁰

Ֆրանսիայի քրեական գործող օրենսգրքում սեփականության դեմ ուղղված հանցագործությունների և զանցանքների առանձին տեսակները հստակ սահմանազատված են: Օրենքում սահմանված են դրանց հատկանիշները և ծանրացնող հանգամանքները: Քննարկվող հանցագործությունների համար պատասխանատվության խստացման հիմքում ընկած են հետևյալ հանգամանքները՝ բռնության գործադրումը, զինվածությունը, կազմակերպվածությունն ու կայունությունը, ինչպես նաև որոշակի կատեգորիայի տուժողների նկատմամբ կատարելը:

Ֆրանսիական քրեական օրենսդրությամբ սեփականության դեմ ուղղված հանցագործությունները և զանցանքները բաժանված են երկու խմբի՝ յուրացումների (հափշտակությունների) և սեփականության դեմ ուղղված այլ հանցագործու-

թյունների կամ զանցանքների: Յուրացումների թվին են դասվում գողությունը և դրա տարատեսակները: Օրենքի համաձայն, գողության տարատեսակներ են համարվում՝

1) հասարակ գողությունը, այսինքն՝ հափշտակությունը, որը կատարվել է առանց ծանրացնող հանգամանքների (տվյալ արարքը դասվում է քրեական զանցանքների շարքը և պատժվում է միայն տուգանքով),

2) գողությունը, որը կատարվել է ծանրացուցիչ հանգամանքներում՝ ա) անձանց՝ կազմակերպված բանդա չհանդիսացող խմբի կողմից, բ) պաշտոնատար անձի կողմից՝ պաշտոնական դիրքն օգտագործելով, գ) իբր իշխանության ներկայացուցիչ հանդես եկող անձի կողմից, դ) բռնություն գործադրելով, որը չի առաջացրել տուժողի աշխատունակության լրիվ կորուստ, ե) տուժողի վիճակի խոցելիությունն օգտագործելով, զ) բնակարան կամ պահեստարան ապօրինի մուտք գործելով, է) հասարակական տրանսպորտում կամ դրա համար նախատեսված կանգառում կատարելով, ը) գույքը ոչնչացնելով կամ վնասելով զուգորդելով (տվյալ արարքը ևս համարվում է քրեական զանցանք, որը, սակայն, պատժվում է ինչպես տուգանքով, այնպես էլ ազատազրկմամբ, ընդ որում, կախված արարքում ծանրացնող հանգամանքների քանակից, պատասխանատվությունն ավելի է խստացվում),

3) գողությունը, որը կատարվել է բռնություն գործադրելով, և առաջացրել է տուժողի աշխատունակության ոչ ավելի, քան ութ օր տևողությամբ լրիվ կորուստ (զանցանք է, որը պատժվում է թե՛ ազատազրկմամբ և թե՛ տուգանքով),

⁹ Տե՛ս Примерный УК США. М.: Прогресс, 1969, էջ 34:

¹⁰ Տե՛ս նաև Курс уголовного права в пяти томах. Том 5. Особенная часть, էջ 469:

4) գողությունը, որը կատարվել է բռնություն գործադրելով և առաջացրել է տուժողի աշխատունակության ավելի քան ութ օր տևողությամբ լրիվ կորուստ (զանցանք է, որը պատժվում է թե՛ ազատազրկմամբ և թե՛ տուգանքով՝ փորձաշրջանի պարտադիր սահմանմամբ),

5) գողությունը, որը կատարվել է բռնություն գործադրելով, և ծանր մարմնական վնասվածքներ է պատճառել տուժողին կամ առաջացրել է նրա՝ որևէ քրոնիկ հիվանդությամբ հիվանդացում (տվյալ արարքը, ի տարբերություն նախորդների, հանցագործություն է, որը պատժվում է ազատազրկման և տուգանքի ձևով՝ նախորդ իրավախախտումների համեմատ առավել խիստ պատիժներով և փորձաշրջանի պարտադիր սահմանմամբ),

6) գողությունը, որը կատարվել է զենքի գործադրմամբ կամ դրա գործադրման սպառնալիքով (հանցագործություն է, որը պատժվում է ազատազրկման և տուգանքի ձևով՝ նախորդների համեմատ առավել խիստ պատիժներով և փորձաշրջանի պարտադիր սահմանմամբ),

7) գողությունը, որը կատարվել է կազմակերպված բանդայի կողմից (հանցագործություն է, որը պատժվում է ազատազրկման և տուգանքի ձևով՝ նախորդների համեմատ առավել խիստ պատիժներով և փորձաշրջանի պարտադիր սահմանմամբ),

8) գողությունը, որը կատարվել է տուժողին առանձին տանջանքներ, տառապանքներ պատճառելով կամ հանգեցրել է նրա մահվան (հանցագործություն է, որը համարվում է հափշտակություններից ամենավտանգավորը և պատժվում է ցմահ բանտարկությամբ ու տուգանքով):¹¹

Այս առումով ֆրանսիական քրեական իրավունքի առանձնահատկություններից մեկն այն է, որ քննարկվող հանցագործությունների համար պատասխանատվության կարող են ենթարկվել նաև իրավաբանական անձինք, եթե նշված արարքները կատարել են նրանց ղեկավարը կամ ներկայացուցիչը՝ այդ իրավաբանական անձանց ապօրինի շահերից ելնելով: Ընդ որում, իրավաբանական անձանց համար նման դեպքերում որպես հիմնական պատիժ նախատեսված է տուգանքը, իսկ լրացուցիչ՝ գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքից զրկելը: Ինչ վերաբերում է քննարկվող հանցագործությունների և զանցանքների համար ֆիզիկական անձանց նկատմամբ նշանակվող լրացուցիչ պատիժներին, ապա դրանց շարքում Ֆրանսիայի քր. օր.-ով նախատեսված են՝ 1) քաղաքական և քաղաքացիական իրավունքներից զրկելը, 2) պետական որոշակի պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկելը, զենք պահելու և (կամ) կրելու իրավունքից զրկելը, 3) հանցագործությամբ ձեռք բերված գույքի լրիվ բռնագրավումը, բացառությամբ տուժողին պատկանող և նրան կամ այլ անձանց վերադարձնելու ենթակա գույքի, 4) դատարանի մատնանշած վայրերում բնակվելու իրավունքից զրկելը, իսկ հանցանք կատարած՝ Ֆրանսիայի քաղաքացի չհանդիսացող անձանց՝ երկրի տարածքում բնակվելու իրավունքից զրկելը:¹²

Սեփականության դեմ ուղղված այլ հանցագործությունների շարքին, Ֆրանսիայի քրեական օրենսդրության համաձայն, դասվում են շորթումը, հանցագործության կամ զանցանքի կատարման արդյունքում ստացված գույքի պարտակումը, ուրիշի գույքի ոչնչացումը կամ վնասումը կամ նման գործողություններ կատարելու սպառնալիքը, տեղեկատվության ավտոմատացված համակարգերի դեմ ուղղված ոտնձգությունները:¹³

¹¹ Տե՛ս Крылова Н. Е. Новый Уголовный кодекс Франции: Особенная часть // Вест. Моск. ун-та. Сер. 11, Право, 1995, N 2, էջ 69:

¹² Տե՛ս նաև Курс уголовного права в пяти томах. Том 5. Особенная часть, էջ 469:

¹³ Տե՛ս Крылова Н. Е. Новый Уголовный кодекс Франции: Особенная часть, էջ 75:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության (ԳԴՀ) քրեական օրենսգրքում սեփականության դեմ ուղղված հանցագործությունները ներառում են առանձին բաժիններով նախատեսված երկու խումբ. **1) սեփականության դեմ ուղղված հանցավոր արարքներ և 2) գույքային բնույթի հանցավոր արարքներ**: Տվյալ բաժանունում իրականացված է արտաքին հատկանիշներով և չի բնութագրվում համակարգային մոտեցմամբ:¹⁴

Մասնավորապես, Գերմանիայի քր. օր.-ի բաժին 19-ը պատասխանատվություն է նախատեսում պրակտիկայում առավել հաճախ հանդիպող այնպիսի հանցագործությունների տարբեր դրսևորումների համար, ինչպիսիք են գողությունը և գույքի յուրացումը (242-248 հոդվածներ): Ընդ որում, սրանց շարքին են դասվում նաև ուրիշի տրանսպորտային միջոցն ապօրինի օգտագործելը (հոդված 248b) և էլեկտրաէներգիայի հափշտակությունը (հոդված 248c):

Ինչ վերաբերում է գողություններին, ապա դրանց առանձին դրսևորումները նախատեսված են ԳԴՀ քր. օր.-ի 242-245 հոդվածներով: Հետաքրքրաբան է, որ քննարկվող հանցագործության առավել վտանգավոր տեսակներ են համարվում բնակարան մուտք գործելով, զենք գործադրելով և բանդայի կողմից կատարված գողությունները: Ընդ որում, **բանդան գերմանական քրեական իրավունքում հասկացվում է որպես երկու կամ ավելի անձանց նախնական համաձայնությամբ ձևավորված կազմակերպված կայուն խումբ, որը ստեղծվել է տևական հանցավոր գործունեություն իրականացնելու նպատակով**:¹⁵ Միևնույն ժամանակ, ԳԴՀ քր. օր.-ով նախատեսված է գողության, այսպես կոչված, արտոնյալ մեկ հանցակազմ: Այն է՝ գողությունը, որը կատարվել է ընտանիքից (այսինքն՝ ընտանիքի անդամից կամ հանցավորի հետ համատեղ բնակվող այլ անձից): Ընդ որում, տվ-

յալ արարքի պարագայում (ինպես նաև ընտանիքի անդամների կամ համատեղ բնակվողների գույքի յուրացման դեպքերում), ըստ գերմանական օրենսդրության, քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն տուժողի բողոքի հիման վրա:¹⁶

ԳԴՀ քր. օր.-ի բաժին 20-ը (249-256 հոդվածներ), որը վերնագրված է «Ավագակություններ և շորթումներ» միավորում է սեփականության դեմ ուղղված այն հանցագործությունները, որոնք առանձնացված են ոտնձգության որոշակի եղանակի (բռնության կամ դրա գործադրման սպառնալիքի) հատկանիշով: Մասնավորապես, ավագակության հիմնական հանցակազմը նախատեսված է ԳԴՀ քր. օր.-ի հոդված 249-ով, իսկ դրա ծանրացնող հանգամանքներով հանցակազմերը՝ հոդվածներ 250-ից 252-ով: Շորթման հասարակ տեսակը նախատեսված է նույն օրենքի 253, իսկ առավել վտանգավորները՝ 254 և 255 հոդվածներով: Ընդ որում, ուշագրավ է, որ ավագակության ծանրացնող հանգամանք է համարվում կատարողի կամ խմբակային հանցագործության կատարողներից մեկի մոտ զենքի կամ որպես զենք օգտագործելու համար պիտանի այլ առարկայի պարզապես առկայությունը, իսկ առավել ծանրացնող՝ այդ առարկաների գործադրմամբ զուգորդված լինելը:¹⁷

Գերմանիայի քրեական օրենսգրքի բաժին 21-ը (257-262 հոդվածներ) դրույթներ է պարունակում հանցավոր այն արարքների վերաբերյալ, որոնք, մի կողմից, ոտնձգում են սեփականության դեմ, մյուս կողմից՝ առնչվում են պետության շահերին:

Ձուտ գույքային բնույթի հանցագործությունների տարբեր դրսևորումները նախատեսված են ԳԴՀ քր. օր.-ի բաժին 22-ով (հոդվածներ 263-266): Դրանց շարքին են դասվում խարդախությունը (հոդված 263), համակարգչային խարդախությունը (հոդված 263 a), խարդախ եղանակով սուբսիդիա ստանալը (հոդված 264), խարդախությունը կապիտալ ներդրումների ընթաց-

¹⁴ Տե՛ս նաև Курс уголовного права в пяти томах. Том 5. Особенная часть, էջ 470:

¹⁵ Տե՛ս Уголовный кодекс ФРГ. М.: Юридический колледж МГУ, 1996, էջ 182:

¹⁶ Տե՛ս Уголовный кодекс ФРГ, էջ 183:

¹⁷ Տե՛ս Уголовный кодекс ФРГ, էջ 184:

քում (հոդված 264 a), ապահովագրական չարաշահումը (հոդված 265), խաբեությանը գույքային օգուտ ստանալը (հոդված 265 a), խարդախ եղանակով վարկ ստանալը (հոդված 265 b), վստահության հանցավոր չարաշահումը (հոդված 266), աշխատավարձը թաքցնելը կամ վատնելը (հոդված 266 a), էլեկտրոնային վճարային քարտերով և չեկերով կատարվող չարաշահումները (հոդված 266 b):¹⁸

Հարկ ենք համարում նշել նաև, որ սեփականության իրավունքից բացի, Գերմանիայում քրեաիրավական պաշտպանության տակ են առնված նաև այլ բացարձակ իրավունքները: Այսպես, օրինակ՝ ԳԴՀ քր. օր.-ը պատասխանատվություն է նախատեսում գույք ձեռք բերելու իրավունքի ազատ իրականացման դեմ ուղղված հանցավոր ոտնձգությունների համար:¹⁹

Սեփականության քրեաիրավական պաշտպանությունը նախատեսված է նաև **մուսուլմանական երկրների** օրենսդրությամբ, ընդ որում՝ ինչպես մուսուլմանական իրավունքի աղբյուրների, այնպես էլ քրեական օրենսգրքերի համապատասխան դրույթներով: Համարվում է, որ նշված բարիքի դեմ ուղղված հանցագործությունները ոտնձգում են մուսուլմանական հասարակության հիմքերի դեմ: Այդ իսկ պատճառով, հանցավոր ոտնձգություններից սեփականության պաշտպանությունը զնահատվում է որպես իսլամական պետության կարևորագույն գործառույթներից մեկը:²⁰

Արաբական մի շարք երկրներում (օրինակ՝ **Հորդանանում, Սաուդյան Արաբիայում, Լիբանանում** և այլն) հիմնական շեշտը դրվում է մասնավոր սեփականության հիմքերի ամրապնդման և զարգացման վրա: Հենց այդ կապակցությամբ նշված երկրների Սահմանադրություններում, ինչպես նաև մուսուլմանական իրավունքի հիմնական «ունիվերսալ» աղբյուրի՝ շարի-

աթի (**Ղուրանի և Սուննայի**) հիմնադրույթներում, մասնավոր սեփականությունը հռչակվում է որպես սուրբ և անձեռնմխելի բարիք: Արաբական որոշ այլ երկրներում (օրինակ՝ **Սիրիայում, Իրաքում** և այլն) նախապատվությունը տրվում է սեփականության պետական ձևին: Սակայն մասնավոր սեփականությունը նշված պետություններում ևս հռչակվում է որպես սուրբ և անձեռնմխելի բարիք, որը երբեմն, նույնիսկ, ավելի խիստ է պաշտպանվում, քան պետականը: Այդ մասին են վկայում նաև քննարկվող երկրների քրեական օրենսդրության դրույթները: Մասնավորապես, քննարկվող հանցագործությունները նախատեսող նորմերը կազմում են այդ պետությունների քրեական օրենսգրքերի Հատուկ մասերի շուրջ 25%-ը:²¹

Հարկ ենք համարում նշել նաև, որ այդ նորմերին համապատասխան, սեփականության դեմ ուղղված հանցագործություններից ամենավտանգավորն է համարվում ավազակությունը, որը մուսուլմանական իրավունքում սահմանվում է որպես ճամփորդների նկատմամբ կատարվող զինված հարձակում՝ նրանց ունեցվածքին տիրանալու նպատակով: Այս առումով ուշագրավ է, որ տվյալ հանցագործության համար պատասխանատվության կարող է ենթարկվել միայն արական սեռի, լիովին մեղսունակ և չափահասության տարիքի հասած մուսուլմանը և միայն այն դեպքում, եթե տուժողը նույնպես եղել է մուսուլման, իսկ գույքը, որին հանցավորը տիրացել է, հանդիսացել է նրա սեփականությունը կամ գտնվել է նրա օրինական տիրապետման տակ: Բացի դրանից, ավազակության հանցակազմի համար պարտադիր է, որ հանցավորի և տուժողի միջև բացակայեն ազգակցական հարաբերությունները:²²

Մուսուլմանական իրավունքի աղբյուրները սեփականության դեմ ուղղված առա-

¹⁸ Տե՛ս Уголовный кодекс ФРГ, էջ 185:

¹⁹ Տե՛ս նաև Курсы уголовного права в пяти томах. Том 5. Особенная часть, էջ 471:

²⁰ Տե՛ս նաև Еляян Г. Ф. Ответственность за посягательство на собственность по мусульманскому уголовному праву. Диссерт... канд. юрид. наук. Махачкала, 2002, էջ 4:

²¹ Տե՛ս նաև Еляян Г. Ф., նշված աշխ., էջեր 5-6:

²² Տե՛ս Сюкияйнен Л. Р. Мусульманское право. М., 1986, էջեր 188-189:

վել վտանգավոր հանցագործությունների շարքին են դասում նաև գողությունները: Վերջիններս, ինչպես և ավագակությունները, համարվում են «խաղդեր», այսինքն՝ հանցավոր արարքներ, որոնց համար նախատեսված են բացարձակ որոշակի խիստ պատիժներ՝ ընդհուպ մինչև մահապատիժ: Ընդ որում, նշված հանցագործությունների դեպքերում դատավորն իրավասու չէ մեղմացնել պատիժը կամ փոխարինել այն ավելի մեղմ պատժով կամ ներգործության այլ միջոցներով, քանզի նա, ընդամենը, հանդես է գալիս որպես Ալլահի կամքի կատարող: Իսկ գույքային բնույթի մյուս հանցագործությունները (խարդախությունը, յուրացումը, գույքը ոչնչացնելը կամ վնասելը և այլն), մոսուլմանական քրեական իրավունքի համաձայն, դասվում են, այսպես կոչված, «թազիրների» շարքը: Այս հանցագործությունների համար, ի տարբերություն նախորդների, շարիաթը չի նախատեսում ո՛չ կոնկրետ պատժատեսակներ, ո՛չ էլ պատժաչափեր: Դրանց ընտրության հարցի լուծումը թողնված է դատավորի հայեցողությանը: Միակ պահանջը, որ ներկայացվում է այդ կապակցությամբ, հանցագործության վտանգավորության աստիճանը, հանցավորի անձը բնութագրող առանձնահատկությունները և պատճառված վնասի չափը հաշվի առնելն է:²³

Ինչ վերաբերում է **ԱՊՅ անդամ երկրների** քրեական գործող օրենսգրքերին, ապա պետք է նշել, որ դրանց հիմքում, ընդհանուր առմամբ, նշված պետությունների Մոդելային քրեական օրենսգրքի դրույթներն են:²⁴ Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների՝ նշված ակտով նախատեսված դասակարգումը ևս հիմնականում հաշվի է առնվել ԱՊՅ անդամ երկրների քրեական գործող օրենս-

գրքերը մշակելիս:²⁵ Հետևաբար, քննարկվող հոդվածի շրջանակներում վերոհիշյալ երկրների քրեական օրենքների համապատասխան դրույթների մանրամասն քննարկումը նպատակահարմար չէ:

Այսպիսով, արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությամբ, ինչպես և ՀՀ քր. օր.-ով, սեփականության դեմ ուղղված հանցագործություններն առանձնահատուկ կարգավորման են ենթարկված: Դրանք նույնպես կարելի է բաժանել երկու մեծ խմբի՝ հափշտակությունների և սեփականության դեմ ուղղված այլ հանցագործությունների: Ընդ որում, սեփականության դեմ ուղղված այլ հանցագործությունների շարքում արտասահմանյան շատ երկրների քրեական օրենսդրությամբ ևս նախատեսված են շորթումը, ուրիշի տրանսպորտային միջոցին ապօրինի տիրանալը, գույքը ոչնչացնելը կամ վնասելը:

Բացի այդ, արտասահմանյան երկրների քրեական գործող օրենսդրության դրույթներին համապատասխան, սեփականության դեմ ուղղված հանցագործությունները նույնպես կարելի է դասակարգել շահադիտականների և ոչ շահադիտականների, բռնությամբ և առանց բռնության, ինչպես նաև դիտավորությամբ և անզուլույթյամբ կատարվողների: Ընդ որում, այդ երկրների օրենսդրության համաձայն ևս՝ մյուս բոլոր հանցավոր արարքների համեմատ սեփականության դեմ ուղղված բռնությամբ կատարվող հանցագործություններն օժտված են հանրային առավել բարձր վտանգավորությամբ:

²³ Տե՛ս նաև Еляян Г. Ф., նշված աշխ., էջեր 179-180:

²⁴ Տե՛ս Информационный бюллетень государств - участников СНГ, 1996, N 10:

²⁵ Տե՛ս նաև Рузевич О. Р. Уголовно-правовое регулирование угрозы в преступлениях против собственности по законодательству зарубежных стран // Вестник Владимирского юридического института, N 3 (12), 2009, էջեր 179-180:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԱՐԺԵԹՂԹԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՅՑ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Վահրամ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Կորպորատիվ իրավահարաբերությունների¹ բնականոն իրականացման գործում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում կորպորատիվ արժեթղթերը: Գործող օրենսդրությամբ և տեսական գրականության մեջ կորպորատիվ արժեթղթերի հասկացությունը չի տրվում, այլ նշված խնդրին անդրադարձած հեղինակները բավարարվում են միայն դրանց կոնկրետ տեսակների մատնանշմամբ, մասնավորապես, այսպես. Տ. Վ. Կաշանիսան գտնում է, որ կորպորատիվ արժեթղթերի թողարկող կարող են լինել բաժնետիրական ընկերությունները՝ բաժնետոմսեր և պարտատոմսեր թողարկելու դեպքում, պետությունը՝ պետական պարտատոմսեր թողարկելիս², Ի. Ս. Շիտկինան կորպորատիվ արժեթղթեր վերտառության ներքո, պարզապես, անդրադառնում է բաժնետոմսին և պարտատոմսին³, նմանատիպ մոտեցում է դրսևորում Օ. Ա. Մակարովան⁴:

Մենք գտնում ենք, որ որպես կորպորատիվ արժեթղթերի թողարկողներ կարող են հանդես գալ բաժնետիրական ընկերությունները, իսկ կորպորատիվ արժեթղթուղթը կարելի է բնութագրել որպես կորպորացիայի հանդեպ արժեթղթի սեփականատիրոջ կորպորատիվ իրավունքները հավաստող փաստատուղթ: Հետևաբար, կորպորացիայի մասնակցի (բաժնետիրոջ) կորպորատիվ իրավունքները այն իրավազորությունների ամբողջությունն են, որոնք

օրենքով, այլ իրավական ակտերով, կորպորացիայի կանոնադրությամբ և ներքին կանոնակարգող փաստաթղթերով պատկանում են կորպորատիվ իրավահարաբերության մասնակցին որպես կորպորատիվ սուբյեկտիվ իրավունքի կրողի: Նշված տեսանկյունից որպես կորպորատիվ արժեթղթի տեսակ հանդես են գալիս՝ բաժնետոմսը և փոխարկելի պարտատոմսը (ընկերության բաժնետոմսի փոխարկման ենթակա պարտատոմսը):

¹ Կորպորատիվ իրավահարաբերությունների բնույթի և էության մասին մեր արտահայտած դիրքորոշման մասին առավել մանրամասն տես՝ Վ. Ավետիսյան, Կորպորատիվ իրավահարաբերությունների առանձնահատկությունները, Բանբեր Երևանի համալսարանի, Եր., 2011, N 68, 17-25 էջեր:

² Տե՛ս. Кашанина Т. В. Корпоративное право. (Право хозяйственных товариществ и обществ). Учебник для вузов. Издательская группа НОРМА– ИНФРА-М. Москва. 1999, էջ 552:

³ Տե՛ս. Шиткина И. С. Корпоративное право. Учебник. “Волтерс Клувер”, М. 2007, էջ 172:

⁴ Տե՛ս. Макарова О. А. Корпоративное право. Учебник. “Волтерс Клувер”, М, 2005 էջ 53:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը բաժնետոմսը բնորոշում է որպես արժեթուղթ, որը հավաստում է դրա տիրոջ (բաժնետիրոջ)՝ բաժնետիրական ընկերության շահույթից շահութաբաժնի ձևով մաս ստանալու, բաժնետիրական ընկերության գործերի կառավարմանը մասնակցելու և նրա լուծարումից հետո մնացած գույքից մաս ստանալու իրավունքը (ՀՀ քաղ. օր., հոդվ. 157):

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը⁵ հատուկ շեշտադրում է այն հանգամանքը, որ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերը հավաստում են ընկերության նկատմամբ բաժնետիրոջ ունեցած պարտավորական իրավունքները: Բաժնետերը, ի տարբերություն պարտատոմսի սեփականատիրոջ, հանդես չի գալիս որպես ընկերության պարտատեր և իրավունք չունի ընկերությունից պահանջել վերադարձնել բաժնետոմսի գինը⁶:

Հաշվի առնելով վերը նշված հիմնավորումները, մենք գտնում ենք, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում անհրաժեշտ է կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ կետում քաղաքացիական օրենսգրքի կողմից կարգավորվող հարաբերությունների շարքում նշել նաև կորպորատիվ իրավահարաբերությունները, և դրանով պայմանավորված համապատասխան փոփոխություններ կատարել քաղաքացիական օրենսգրքի կորպորատիվ իրավահարաբերությունները կարգավորող համապատասխան նորմերում: Այս տեսանկյունից, օրինակ, բաժնետոմսը կարել է բնորոշել որպես արժեթուղթ, որը հավաստում է դրա սեփականատիրոջ բաժնետիրական ընկերության հանդեպ ունեցած կորպորատիվ իրավունքները:

Տնտեսական չափորոշիչներից ելնելով՝ բաժնետոմսի ձեռքբերումը պայմանավորված է երկու հիմնական հանգամանքով.

առաջին՝ բաժնետոմս ձեռք բերողը ցանկանում է բաժնետիրական ընկերության շահույթից ստանալ շահաբաժին,

երկրորդ՝ բաժնետոմս ձեռք բերողը ցանկանում է բաժնետոմսի արժեքի հետագա աճի դեպքում ավելի բարձր գնով վաճառել այն:

Բաժնետիրական ընկերությունը կարող է թողարկել և տեղաբաշխել փաստաթղթային (տպագրական եղանակով պատրաստված) կամ ոչ փաստաթղթային ձևով անվանական բաժնետոմսեր: Ընդ որում, բաժնետոմսերի թողարկման փաստաթղթային ձևը բաժնետոմսերի հավաստագիրն է:

Բաժնետիրական ընկերությունը կարող է թողարկել հասարակ (սովորական), ինչպես նաև մեկ կամ մի քանի տեսակի արտոնյալ բաժնետոմսեր: Ընկերության կողմից թողարկված բոլոր հասարակ (սովորական) բաժնետոմսերը պետք է ունենան միանման անվանական արժեք, հավաստվող իրավունքներ, արտոնություններ և սահմանափակումներ: Ընկերության թողարկած հասարակ (սովորական) բաժնետոմսերի անվանական արժեքը պետք է լինի միևնույնը, որպեսզի քվեարկության ժամանակ ապահովվի այն բաժնետերերի առավելությունը, որոնք նախկինում ձեռք են բերել առավել մեծ քանակությամբ բաժնետոմսեր, այսինքն՝ ընկերության կանոնադրական կապիտալում ներդրել են ավելի մեծ գումար⁷:

Իսկ այն դեպքում, երբ ընկերությունը թողարկում է մեկ կամ մի քանի տեսակի արտոնյալ բաժնետոմսեր, ապա դրանց ընդհանուր անվանական արժեքը չպետք է գերազանցի կանոնադրական կապիտալի 25 տոկոսը: Ընդ որում, յուրաքանչյուր տեսակի արտոնյալ բաժնետոմսը պետք է ունենա միանման անվանական արժեք, հավաստվող իրավունքներ, արտոնություններ և սահմանափակումներ:

Բաժնետիրական ընկերությունը կարող է թողարկել հետևյալ տեսակի արտոնյալ

⁵ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք ՀՀ ՊՏ 2001/34 (166).06.11.01, այսուհետ հետագա շարադրանքում Օրենք:

⁶ Տե՛ս. Ионцев Г. Акционерные общества. Изд-во «Ось-89», М., 2002, էջ 52:

⁷ Տե՛ս. Комментарий к федеральному закону об акционерных обществах. Изд. «Юринформцентр». М. 2002 էջ 163:

բաժնետոմսեր՝ ուղղակի արտոնյալ բաժնետոմսեր, փոխարկելի արտոնյալ բաժնետոմսեր, ռեստրիկտիվ (սահմանափակ) արտոնյալ բաժնետոմսեր, փոփոխական տոկոսադրույք ունեցող արտոնյալ բաժնետոմսեր, արտոնյալ բաժնետոմսեր, որոնցով վճարումները կատարվում են արտարժույթով և այլն⁸:

Բաժնետոմսն անբաժանելի է: Եթե երկու կամ ավելի անձինք սեփականատեր են մեկ բաժնետոմսի, ապա նրանք համարվում են մեկ բաժնետեր:

Ընկերության կողմից թողարկված բաժնետոմսերի տեղաբաշխումն ավարտվելուց հետո ընկերության ռեստրալարը բաժնետերերի բաժնետոմսերը պետք է գրանցի բաժնետերերի ռեստրի բաժնետերերի անձնական հաշիվներում, ընդ որում ընկերության կողմից փաստաթղթային ձևով բաժնետոմսեր թողարկելու և տեղաբաշխելու դեպքում փաստաթղթային բաժնետոմս ձեռք բերած անձին (բաժնետիրոջը) պետք է տրվի դրա հավաստագիրը⁹:

Օրենքն առանձնացնում է տեղաբաշխված, հայտարարված, լրացուցիչ և կոտորակային բաժնետոմսեր հասկացությունները:

Տեղաբաշխված են համարվում այն բաժնետոմսերը, որոնք ձեռք են բերվել բաժնետերերի կողմից: Բաժնետոմսերի և բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխումը բաժնետիրական ընկերության կողմից կարող է իրականացվել բաց կամ փակ բաժանորդագրության միջոցով:

Բաց բաժնետիրական ընկերությունն իրավունք ունի կատարելու բաժնետոմսերի և բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխում ինչպես բաց, այնպես էլ փակ բաժանորդագրության միջոցով: Բաց բաժնետիրական ընկերության կողմից իրականացվող՝ բաժնետոմսերի և բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխման ձևերը (բաց կամ փակ բա-

ժանորդագրություն) սահմանվում են ժողովի որոշմամբ:

Փակ բաժնետիրական ընկերությունն իրավունք չունի կատարելու բաժնետոմսերի և բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխում՝ բաց բաժանորդագրության միջոցով կամ այլ կերպ առաջարկել ձեռք բերել դրանք անսահմանափակ թվով անձանց:

Հայտարարված են համարվում այն բաժնետոմսերը, որոնք ընկերությունը կարող է տեղաբաշխել: Դրանք չեն ներառում արդեն իսկ տեղաբաշխված բաժնետոմսերը: Ընկերության կողմից հայտարարված բաժնետոմսերի քանակը և անվանական արժեքը պետք է սահմանվեն ընկերության կանոնադրությամբ: Կանոնադրությամբ պետք է սահմանվեն նաև ընկերության կողմից տեղաբաշխվող յուրաքանչյուր տեսակի բաժնետոմսի սեփականատերերի իրավունքները: Կանոնադրությունում նշված դրույթների բացակայության դեպքում ընկերությունն իրավունք չունի տեղաբաշխելու տվյալ տեսակի հայտարարված բաժնետոմսեր: Ընկերության կանոնադրությամբ կարող են նախատեսվել նաև ընկերության կողմից հայտարարված բաժնետոմսերի տեղաբաշխման կարգը և պայմանները: Ցանկանում ենք նշել, որ ՀՀ-ում գործող բաժնետիրական ընկերությունների ճնշող մեծամասնության կանոնադրությամբ հայտարարված բաժնետոմսերի տեղաբաշխման կարգը և պայմանները սահմանված չեն: Ավելին, հաճախ ընկերությունները թողարկում և տեղաբաշխում են լրացուցիչ բաժնետոմսեր, առանց հաշվի առնելու այն հանգամանքը, թե՛ կանոնադրությամբ հայտարարված բաժնետոմսեր նախատեսված են, թե՛ ոչ:

Օրենքը հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը վերապահել է բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը, և նշված հարցի շուրջ որոշումը ժողովը կարող է ընդունել միայն դրան մասնակցող

⁸ Այդ մասին ավելի մանրամասն տես՝ Кашанина Т. В., նշված աշխատությունը, 425-426 էջեր:

⁹ Հարկ է նշել, որ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից 2006թ. դեկտեմբերի 5-ին թիվ 713Ն որոշմամբ հաստատված «Արժեթղթերի շուկայի կարգավորման կանոնագիրը»-ը փաստաթղթային եղանակով տպագրված արժեթղթերի պարտադիր ապանյութականացման պահանջ է նախատեսում:

քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով (**Օրենքի հոդվ. 67**):

Հարկ է նշել, որ հայտարարված բաժնետոմսերն իրականում գոյություն ունեցող բաժնետոմսեր չեն, այլ դա մի հասկացություն է, որն արտահայտում է հետագայում լրացուցիչ բաժնետոմսեր թողարկելու և տեղաբաշխելու ընկերության իրավունքը:

Լրացուցիչ են համարվում հայտարարված բաժնետոմսերի ծավալի սահմանում տեղաբաշխվող այն բաժնետոմսերը, որոնց տեղաբաշխման միջոցով տեղի է ունենում կանոնադրական կապիտալի ավելացում: Ընդ որում, լրացուցիչ բաժնետոմսերը կարող են տեղաբաշխվել միայն նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի լրիվ վճարված լինելու դեպքում և լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխումը կատարելուց հետո հայտարարված բաժնետոմսերի ծավալը պետք է համասնորեն նվազեցվի:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում արժեթղթերի փոխարկումը, ինչն ըստ էության բաժնետոմսերի տեղաբաշխման ձևերից մեկն է: Ընկերությունը իրավունք ունի լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխումն իրականացնել բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերն ընկերության բաժնետոմսերի փոխարկելու միջոցով: Ընկերության լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխումը, որն իրականացվում է ընկերության արժեթղթերի՝ բաժնետոմսերի փոխարկումն ապահովելու համար, կատարվում է միայն այդ փոխարկման միջոցով: Եթե ընկերությունն իրականացնում է արժեթղթերի տեղաբաշխում, որոնք կարող են փոխարկվել ընկերության որոշակի տեսակի (տեսակների) բաժնետոմսերի, ապա տվյալ տեսակի (տեսակների) բաժնետոմսերի հայտարարված քանակը չպետք է պակաս լինի այն քանակից, որն անհրաժեշտ է տեղաբաշխված արժեթղթերի փոխարկման համար՝ դրանց շրջանառության ողջ ժամկետում: Փոխարկման կարգը սահմանվում է փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշմամբ:

Ընկերությունը բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխումն իրականացնում է դրանց շուկայական արժեքով, բացառությամբ՝

- բաժնետոմսերի փոխարկվող

արժեթղթերի՝ ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսերի, հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող ընկերության բոլոր բաժնետերերի միջև տեղաբաշխման դեպքի, պայմանով, որ վերջիններս իրականացնում են բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրենց իրավունքը: Այդ դեպքում արժեթղթերի տեղաբաշխումը կարող է իրականացվել դրանց անվանական արժեքով.

- եթե բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխման համար ընկերությունն օգտվում է տեղաբաշխողի (միջնորդի) ծառայություններից: Տեղաբաշխման գինն այս դեպքում կարող է շուկայական արժեքից ցածր լինել միայն տեղաբաշխողին (միջնորդին) վճարվող վարձատրության չափով, որը պետք է սահմանվի որպես տոկոսադրույք՝ տեղաբաշխվող բաժնետոմսի փոխարկվող արժեթղթի տեղաբաշխման գնի նկատմամբ:

Նշված կարգը չի տարածվում ընկերության պարտատոմսերի տեղաբաշխման այն դեպքի վրա, երբ պարտատոմսերի մարման պայմաններով նախատեսված է դրանց անվանական արժեքի մարում կամ փոխարկում ընկերության բաժնետոմսերի:

Ինչպես արդեն նշվեց, բաժնետոմսն անբաժանելի է, սակայն Օրենքն ընկերությանը հնարավորություն է տալիս բաժնետոմսով կատարել այնպիսի գործողություններ, ինչպիսիք են համախմբումը (կոնսոլիդացումը) և բաժանումը:

Տեղաբաշխված բաժնետոմսերի բաժանման արդյունքում ընկերության տեղաբաշխած մեկ բաժնետոմսը փոխարկվում է նույն տեսակի (դասի) երկու կամ ավելի բաժնետոմսերի, որի արդյունքում կանոնադրության մեջ կատարվում են ընկերության տեղաբաշխված և հայտարարված բաժնետոմսերի քանակի և անվանական արժեքի համապատասխան փոփոխություններ:

Կոտորակային են համարվում այն ոչ ամբողջական բաժնետոմսերը, որոնք առաջանում են ընկերության կողմից իրականացվող այս կամ այն կորպորատիվ գործողության արդյունքում, օրինակ՝ բաժ-

նետոմսերի համախմբում, բաժանում, կանոնադրական կապիտալի ավելացում (ընկերության գուքի հաշվին), կանոնադրական կապիտալի նվազեցում, վերակազմակերպում և այլն:

Գրականության մեջ բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացումը) տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, «զուգահեռ» ընկերության ստեղծման¹⁰ և այլ բաժնետերերի հետ ֆիդուցիար (վստահության վրա հիմնված) փոխհարաբերությունների հաստատման¹¹ հետ մեկտեղ դասվում է հսկիչ փաթեթների ձևավորման մեխանիզմների թվին:

Հսկիչ փաթեթի ձևավորման ցանկացած մեխանիզմ, այդ թվում նաև բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացումը), որպես կանոն, իրականացվում է բաժնետիրական ընկերության կառավարման և գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Համախմբումը (կոնսոլիդացումը) պետք է իրականացվի այնպես, որպեսզի ապահովվի ոչ միայն մատնանշված խնդիրների իրագործումը, այլև փոքր բաժնետերերի շահերի պաշտպանությունը¹²:

Բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը կազմվում է բաժ-

նետերերի ձեռք բերած բաժնետոմսերի անվանական արժեքից (**Օրենքի հոդվ. 30, կետ 1-ին**):

Օրենքով չի սահմանվում բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի նվազագույն չափերը: Առանձին դեպքերում, կախված ընկերության գործունեության ոլորտից, օրենքով և այլ իրավական ակտերով կարող են սահմանվել նվազագույն կանոնադրական կապիտալի ավելի մեծ չափեր¹³: Ընկերության կանոնադրական կապիտալն արտահայտվում է ՀՀ դրամով:

Ընկերությունը հիմնադրելիս բոլոր բաժնետոմսերը պետք է տեղաբաշխվեն նրա հիմնադիրների միջև, իսկ մինչև ընկերության պետական գրանցումը հիմնադիրները պարտավոր են ամբողջությամբ վճարել նրա կանոնադրական կապիտալը: Ընկերության լրացուցիչ տեղաբաշխված բաժնետոմսերը պետք է վճարվեն դրանց տեղաբաշխման մասին որոշմամբ սահմանված ժամկետում, բայց ոչ ուշ, քան տեղաբաշխման պահից մեկ տարվա ընթացքում: Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարման միջոց կարող են լինել գույքը, ներառյալ դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները,

¹⁰ Տես՝ Могилевский С. Д. «Акционерные общества», изд-«Дело», М., 1998, էջ 156 :

¹¹ Ֆիդուցիար փոխհարաբերություններն արտահայտվում են ա/ լիազորագրի հիման վրա մյուս բաժնետերերի անունից բաժնետերերի ընդհանուր ժողովում մասնակցելու և քվեարկելու միջոցով, բ/ բաժնետոմսերը հավատարմագրային կառավարման հանձնելու միջոցով: (Այդ մասին ավելի մանրամասն տես՝ Մ. Գ. Իոնցևի նշված աշխատությունը, էջ 66):

¹² Այդ մասին առավել մանրամասն տես՝ Ավետիսյան Վ., Ընկերության խոշոր և փոքրամասնություն կազմող բաժնետերերի շահերի հավասարակշռման հիմնահարցը Հայաստանի Հանրապետությունում, ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու նվիրված Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակին, Երևան, 2012, 377-392 էջեր:

¹³ Օրինակ՝ ներդրումային ֆոնդի կառավարիչների կանոնադրական կապիտալի նվազագույն չափը կազմում է մեկ միլիոն դրամ (Կանոնակարգ 10/02, հաստատված ՀՀ ԿԲ խորհրդի 02.05.2011 թվականի թիվ 119-Ն որոշմամբ), ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2.10.2007թ. 311Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը, վերապահովագրողին չարգելված համարելու չափանիշները» 3/02 կանոնակարգով (վերջին փոփոխությունը կատարվել է 27.11.12թ. թիվ 326 Ն որոշմամբ) եթե ընկերությունն ունի «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «1-9»-րդ, «16-18»-րդ կետերով սահմանված ոչ կյանքի ապահովագրության մեկ կամ մի քանի դասերով ապահովագրական գործունեության իրականացման լիցենզիա, կանոնադրական կապիտալի չափը պետք է կազմի մեկ միլիարդ Հայաստանի Հանրապետության դրամ և այլն:

մտավոր սեփականությունը: Խորհրդի որոշմամբ կարող են սահմանափակվումներ դրվել ընկերության բաժնետոմսերի և այլ արժեթղթերի դիմաց վճարվող գույքի տեսակների վրա: Բաժնետերը, կանոնադրական կապիտալում գումար կամ այլ գույք ներդնելով, կորցնում է դրա նկատմամբ իր ունեցած սեփականության իրավունքը, իսկ փոխարենն ընկերության կողմից թողարկված բաժնետոմսի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք:

Ընկերության հիմնադրման ժամանակ բաժնետոմսերի դիմաց վճարման ձևը սահմանվում է Ընկերության հիմնադրման մասին պայմանագրով, իսկ լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի, ինչպես նաև ընկերության կողմից թողարկվող այլ արժեթղթերի դիմաց՝ դրանց տեղաբաշխման մասին որոշմամբ:

Եթե լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի տեղաբաշխման մասին որոշմամբ սահմանած է, որ դրանց դիմաց վճարումը պետք է կատարվի միայն դրամական միջոցներով, ապա այդ բաժնետոմսերի ձեռքբերման ժամանակ պետք է վճարվի դրանց անվանական արժեքի առնվազն 25 տոկոսը:

Ընկերության բաժնետոմսերը և այլ արժեթղթերը, որոնց դիմաց վճարումը նախատեսված է ոչ դրամական միջոցներով, ձեռքբերման ժամանակ վճարվում են լրիվ արժեքով, եթե արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշմամբ այլ բան նախատեսված չէ: Իսկ հրապարակային վաճառքի միջոցով տեղաբաշխվող արժեթղթերի դիմաց վճարումը կատարվում է միայն դրամական միջոցներով՝ լրիվ արժեքով:

Ընկերության հիմնադրման ժամանակ բաժնետոմսերի դիմաց հիմնադիրների կողմից վճարվող գույքի դրամական գնահատականը սահմանվում է հիմնադիրների միջև համաձայնեցմամբ, իսկ լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերման ժամանակ՝ խորհրդի որոշմամբ և ենթակա է գնահատման անկախ գնահատողի կողմից:

Ընկերության բաժնետոմսերը վճարելու պարտականությունից բաժնետիրոջն ազատել, ներառյալ՝ ընկերության նկատմամբ պահանջների հաշվանցմամբ, չի թույլատրվում:

Եթե լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի ձեռքբերման ժամանակ տեղաբաշխման մասին որոշմամբ սահմանված

ժամկետներում բաժնետոմսերի լրիվ արժեքի վճարումը չի կատարվել, իսկ վճարված գումարը մեկ համապատասխան բաժնետոմսի արժեքից պակաս է, ապա բաժնետոմսերը փոխանցվում են ընկերության տրամադրության տակ և դրանց արժեքը ժամանակին չվճարած բաժնետերերը գրկվում են բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքից: Այդ մասին կատարվում է համապատասխան նշում ընկերության բաժնետերերի գրանցամատյանում: Դրամական միջոցները և այլ գույքը, որոնք վճարվել են բաժնետոմսերի դիմաց, բաժնետիրոջը չեն վերադարձվում: Իսկ եթե լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի ձեռքբերման ժամանակ տեղաբաշխման մասին որոշմամբ սահմանված ժամկետներում բաժնետոմսերի լրիվ արժեքի վճարումը չի կատարվել, իսկ վճարված գումարը մեկ համապատասխան բաժնետոմսի արժեքից պակաս չէ, ապա կատարվում է բաժնետոմսերի քանակի վերահաշվարկ՝ այնպես, որ բաժնետոմսերի քանակի և ձեռքբերման արժեքի արտադրյալը չզերազանցի դրանց համար արդեն վճարված գումարը: Մնացած բաժնետոմսերը փոխանցվում են ընկերության տրամադրության տակ, և բաժնետերերը գրկվում են դրանց նկատմամբ սեփականության իրավունքից: Այդ մասին ևս ընկերության բաժնետերերի գրանցամատյանում կատարվում է համապատասխան նշում:

Ընկերության կանոնադրությամբ, բաժնետոմսի դիմաց վճարման պարտավորությունների չկատարման համար, կարող են սահմանվել դրամական տույժեր:

Ընկերության տրամադրության տակ փոխանցված բաժնետոմսերը չեն տալիս ձայնի իրավունք, հաշվի չեն առնվում ձայների հաշվարկման ժամանակ, դրանցով շահաբաժիններ չեն հաշվարկվում:

Բաժնետոմսերի տեղաբաշխումն ավարտելուց հետո բաժնետերերի ընդհանուր ժողովը հաստատում է բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները և համապատասխան փոփոխություններ է կատարում ընկերության կանոնադրությունում:

Չարկ ենք համարում նշել, որ ժողովի կողմից տեղաբաշխման արդյունքները հաստատելու պարտադիր պահանջը գործում է միայն այն դեպքում, երբ տեղաբաշխումն իրականացվել է ժողովի, այլ ոչ թե խորհրդի որոշմամբ:

Կորպորատիվ արժեթղթերի բնականոն

շրջանառությունը խաթարող «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի էական թերություններից է հանդիսանում այն հանգամանքը, որ օրենքը հստակ չի կանոնակարգում կոտորակային արժեթղթերի շրջանառության հետ կապված խնդիրները: Ինչը պրակտիկայում հանգեցնում է փոքրամասնություն կազմող բաժնետերերի շահերի ոտնահարմանը: Կոտորակային բաժնետոմսը գույքի ընդհանուր սեփականության իրավական ռեժիմի մասնավոր դրսևորումը չէ, այլ արժեթղթի նկատմամբ իրավունքների հատուկ բաժանում է (հետևաբար, արժեթղթերից բխող իրավունքների համապատասխան բաժանում), որի արդյունքում առաջանում են նոր օբյեկտների նկատմամբ իրավունքների առաջացման հիմքեր¹⁴:

Գտնում ենք, որ կոտորակային բաժնետոմսերի գոյությունը՝ որպես քաղաքացիական իրավունքի ինքնուրույն օբյեկտ, բաժնետոմսի անբաժանելիության սկզբունքից հարկադրված հատուկ շեղում է, ուստի առաջին հերթին անհրաժեշտ է սահմանել այնպիսի իրավակարգավորում, որի պայմաններում կոտորակային բաժնետոմսերի գոյացման հնարավորությունը կբացառվի, իսկ նման սկզբունքային փոփոխության չզնալու դեպքում կոտորակային բաժնետոմսերի սեփականատերերի իրավասությունները պետք է ընդարձակել: Մասնավորապես, առաջարկում ենք թույլատրել կոտորակային բաժնետոմսերի ամբողջական բաժնետոմսերի հետ հավասարապես շրջանառվելու հնարավորությունը:

Կոտորակային բաժնետոմսերը անհրաժեշտ է տարբերել մեկ թողարկման բաժնետոմսերի ավելի փոքր անվանական արժեք ունեցող բաժնետոմսերի փոխարկման գործընթացից, նկատի ունենալով, որ կոտորակային բաժնետոմսերի առաջացման դեպքում դրանց անվանական արժեքը չի

փոխվում և տվյալ թողարկման բաժնետոմսերը պահպանում են իրենց գոյությունը:

Չնայած, այն բանին որ բաժնետոմսերի մասնատումը զուգորդվում է արժեթղթերի տեղաբաշխման հետ, կոտորակային բաժնետոմսերի շրջանառությունը պետք է թույլատրել ինչպես առաջնային, այնպես էլ՝ երկրորդային շուկայում: Թույլատրելով բաժնետոմսի շրջանառությունը՝ անհրաժեշտ է լուծել նաև բաժնետոմսով նախատեսված իրավունքների իրականացման հիմնահարցը:

Այս խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է սահմանել, որ կոտորակային բաժնետոմսը բաժնետիրոջը (բաժնետերերին) իրավունքներ է վերապահում այն ծավալով, որքանով այն համապատասխանում է տվյալ դասի ամբողջական բաժնետոմսի մասին: Ըստ էության, կոտորակային բաժնետոմսը բաժնետիրոջը իրավունք կվերապահի ստանալ շահութաբաժին, ընկերության լուծարման դեպքում ընկերության գույքից բաժին, այն մասին համապատասխան, որքանով բաժին է ընկնում տվյալ կոտորակային և ամբողջական բաժնետոմսի հարաբերակցությունից ելնելով և այլն¹⁵:

Կոտորակային բաժնետոմսի և ընդհանուր բաժնային սեփականության ներքո գտնվող գույքի նկատմամբ իրավունքի սկզբունքային տարբերությունը կայանում է նրանում, որ կոտորակային բաժնետոմսը հանդես է գալիս որպես քաղաքացիական իրավունքի ինքնուրույն օբյեկտ և այս տեսանկյունից **ՀՀ Քաղ. օր-ի¹⁶ 195 հոդ.** նախատեսված ընդհանուր բաժնային սեփականության իրավունքում բաժնի գնման նախապատվության իրավունքը չի գործի, հետևաբար, բաց բաժնետիրական ընկերության բաժնետոմսի մասի սեփականատերը ազատորեն կարող է այն տնօրինել:

Բացի սեփական կապիտալից, ընկերությունը կարող է ունենալ նաև փոխառու կապիտալ, որը ձևավորվում է պարտատոմսեր թողարկելու միջոցով: Պարտա-

¹⁴ Տե՛ս Սերոբյան Դ., Կորպորատիվ արժեթղթերի շրջանառության մի քանի հիմնահարցեր, «Պետություն և իրավունք», 2005 N1(27) էջ էջ 35:

¹⁵ Տե՛ս Комментарий к федеральному закону «Об акционерных обществах». По состоянию на 7 августа 2001г. А. А. Дунаевский, А. Д. Осинковский, Е. А. Борисенко. Издательство ДНК. Консалтинговая группа «Квалитет» 2001. էջ 97.

¹⁶ ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, ՀՀ ՊՏ 1998/17(50)10.08.98:

տոմս է համարվում այն արժեթուղթը, որը հավաստում է դրա տիրապետողի իրավունքը՝ դրանում նախատեսված ժամկետում պարտատոմս թողարկած ընկերությունից ստանալ պարտատոմսի անվանական արժեքը կամ գույքային այլ համարժեք (Օրենքի հոդվ. 40, կետ 2, մաս 1-ին):

Պարտատոմսը այն տիրապետողին իրավունք է տալիս նաև ստանալ պարտատոմսի անվանական արժեքից տոկոսադրույք կամ այլ գույքային իրավունքներ՝ պարտատոմսը թողարկած ընկերության կողմից սահմանված ժամկետներում: Պարտատոմսի թողարկումն ու տեղաբաշխումն իրականացվում են խորհրդի որոշմամբ, եթե կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ: Պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ պետք է սահմանվեն դրանց մարման ձևը, ժամկետները և պայմանները¹⁷:

Պարտատոմսը պետք է ունենա անվանական արժեք: Ընկերության թողարկած բոլոր ապահովված պարտատոմսերի անվանական արժեքների գումարը չպետք է գերազանցի կանոնադրական կապիտալը կամ այն ապահովման գումարը, որը տրամադրված է ընկերությանը պարտատոմսեր թողարկելու նպատակով:

Ընկերությունն իրավունք ունի թողարկելու՝

- ընկերության գույքի գրավով ապահովված պարտատոմսեր,
- երրորդ անձանց կողմից պարտատոմսերի թողարկման համար տրամադրված երաշխավորությամբ ապահովված պարտատոմսեր և
- առանց ապահովման պարտատոմսեր:

Առանց ապահովման պարտատոմսերի թողարկումը թույլատրվում է ընկերության պետական գրանցումից առնվազն երեք տարի հետո և պայմանով, որ սահմանված կարգով հաստատված լինեն ընկերության առնվազն երկամյա հաշվետվությունները:

Ընկերությունը կարող է թողարկել միաժամանակյա կամ տարաժամկետ (ընկերության սահմանած ժամկետային հաջորդականությամբ) մարման ժամկետով, ինչ-

պես նաև անվանական և ըստ ներկայացնողի պարտատոմսեր: Կարգավորվող շուկայում անվանական պարտատոմսեր թողարկելու դեպքում ընկերությունը պարտավոր է իր կողմից տեղաբաշխված անվանական պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրի վարումը հանձնել արհեստավարժ ռեեստրավարի:

Ընկերությունը կարող է թողարկել փոխարկվող պարտատոմսեր, որոնք տալիս են ընկերության պարտատոմսերը բաժնետոմսերի փոխարկման կամ բաժնետոմսերի արտոնյալ ձեռքբերման իրավունք: Ընդ որում, ընկերությունն իրավունք չունի տեղաբաշխելու փոխարկվող պարտատոմսեր, եթե ըստ տեսակների և դասերի հայտարարված բաժնետոմսերի քանակը պակաս է նշված տեսակների և դասերի բաժնետոմսերի այն քանակից, որոնք անհրաժեշտ են փոխարկվող պարտատոմսերն ընկերության բաժնետոմսերի փոխարկելու հնարավորությունն ապահովելու համար:

Ընկերությունը կարող է ընձեռել պարտատոմսերի վաղաժամկետ մարման հնարավորություն՝ դրանց սեփականատերերի ցանկությամբ: Այդ դեպքում պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ պետք է սահմանվեն մարվող գումարի մեծությունը և այն ժամկետը, որից սկսած պարտատոմսերը կարող են ներկայացվել վաղաժամկետ մարման: Պարտատոմսերի տոկոսադրույքը վճարվում է դրանց վրա նշված ժամկետում, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ՝ անկախ ընկերության ֆինանսական վիճակից և ստացված շահույթից, բացառությամբ այն պարտատոմսերի, որոնք ներառված են ընկերության շահույթում: Եթե պարտատոմսերը տեղաբաշխվում են անվանական արժեքից ցածր գներով, ապա տարեկան տոկոսները պարտատոմսի սեփականատիրոջը կարող են չվճարվել, ինչը պետք է սահմանվի պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ և նշված լինի պարտատոմսում:

Պարտատոմսերով տոկոսադրույքները չվճարելու կամ սահմանված ժամկետում պարտատոմսերը չմարելու դեպքում Ընկերությունը կարող է լուծարվել դատական կարգով:

¹⁷ Պարտատոմսերի և այլ արժեթղթերի թողարկումն ու հրապարակային տեղաբաշխումն իրականացվում են «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Պարտատոմսը պատրաստվում է տպագրական եղանակով և պետք է տեղեկություններ պարունակի «Պարտատոմսի» անվանման, հերթական համարի, ընկերության պետական գրանցման տվյալների, լրիվ ֆիրմային անվանման, գտնվելու վայրի, կանոնադրական կապիտալի չափի, թողարկման ժամկետի, պարտատոմսի անվանական արժեքի, այդ տեսակի պարտատոմսերի թողարկված քանակի և գումարային անվանական արժեքի չափի, պարտատոմսերի նարման ժամկետի, նարվող գումարի, վճարվող տոկոսադրույքների կամ դրանց հաշվարկման կարգի, տոկոսադրույքների վճարման կարգի, անվանական պարտատոմսերի համար՝ պարտատոմսի սեփականատիրոջ լրիվ անվանման

(ֆիզիկական անձանց համար՝ անունը), պարտատոմսի ձևի և դրա հետ կապված իրավունքների, այդ թվում փոխարկվող պարտատոմսերի համար՝ ընկերության բաժնետոմսերի փոխարկման իրավունքի մասին: Բացի դրանից, պարտատոմսի վրա պետք է առկա լինեն խորհրդի նախագահի և գլխավոր հաշվապահի կամ ֆինանսական հարցերով զբաղվող տնօրենի ստորագրությունները կամ դրանց ֆաքսիմիլային վերարտադրությունները, ինչպես նաև ընկերության կնիքի դրոշմը:

Տպագրական եղանակով պատրաստված պարտատոմսը պետք է համապատասխանի օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված արժեթղթերի պաշտպանվածության պահանջներին:

Ваграм Аветисян

доцент кафедры гражданского права ЕГУ, кандидат юридических наук

Корпоративные ценные бумаги и особенности правового регулирования их выпуска

Современные рыночные организационные отношения в Республике Армения принципиально отличаются от организационных отношений советскому периоду. Исходя из частных интересов, субъекты гражданского права принимают решения о создании, реорганизации и ликвидации корпорации, выпуска в обращение акций, с целью привлечения дополнительного капитала выпускают облигации, органы управления корпорации принимают и обеспечивают осуществление этих решений, выбирают стратегию развития корпорации, распределяют доходы, осуществляют социальные, культурные и иные некоммерческие программы. В результате, новизна, а в некоторых случаях и несовершенство законодательных актов, регулирующих деятельность корпораций, недостаточность правоприменительной практики приводят к различным нарушениям, в особенности при осуществлении корпоративных действий.

В статье предметом исследования являются такие вопросы, как понятие и виды корпоративных ценных бумаг, некоторые вопросы их выпуска и размещения, особенности и недостатки законодательства и сделаны соответствующие предложения с целью решения указанных задач.

Vahram David Avetisyan

Associate Professor of Civil Law YSU, PhD

Corporate securities and the peculiarities of legal regulation of their release

Current market organizational relations in the Republic of Armenia are fundamentally different from organizational relationships inherent in the Soviet period. On the basis of private interests, the subjects of civil law decisions on the establishment, reorganization and liquidation of the corporation, to issue the shares to raise additional capital issue bonds, governments and corporations are taking ensure the implementation of these solutions is chosen strategy of the corporation, distribute income, carry out social, cultural and other non-profit programs. As a result, novelty, and in some cases, and the imperfection of the legislative acts regulating the activities of corporations, law enforcement nedostatotochnost lead to various disorders, especially in the corporate actions.

In the article the subject of research are issues such as the concept and types of corporate securities, some questions of their production and distribution, characteristics and shortcomings of the legislation and the proposals to solve these problems.

ՊԱՌԼԱՄԵՆՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Եղիշե ԲԱՉՈՅԱՆ

Երևանի ֆրանսիական համալսարանի դասախոս

Իրավաբանական գրականության մեջ գոյություն ունեն տարբեր մոտեցումներ, որոնք շոշափում են պառլամենտական վերահսկողության ծավալն ընդհանրապես և այդ մոտեցումների բազմազանությունից կախված տարբեր են նաև դրա տեսակների, փուլերի և միջոցների դասակարգման հիմքերն ու եղանակները: Ուստի, բնականաբար, այդ դասակարգումներն առանձնանում են իրենց մեթոդիկայով ու նյութի ուսումնասիրման առարկայական ուղղվածությամբ: Պետք է ասել, որ շատ ուսումնասիրողներ պառլամենտական վերահսկողության ամբողջ ծավալը հանգեցնելով գործադիր իշխանության գործունեության նկատմամբ օրենսդիր բարձրագույն մարմնի կողմից իրականացվող հետևելու, ստուգելու, հաշվետվություն պահանջելու գործընթացին և դիտելով դա որպես կառավարության նկատմամբ վերահսկողական գործառնություն, կարևոր են համարում վերահսկողության դրսևորման արտաքին եղանակը և ըստ այդմ են տարբերում պառլամենտական վերահսկողության ձևն իր տարատեսակներով: Օրինակ ռուս պետականագետ Չիրկինը պառլամենտական վերահսկողության շուրջ 13 ձև է առանձնացնում /հարցեր, հարցապնդումներ, վստահության բանաձևեր, պառլամենտական լսումներ և այլն/, որոնք իրենց ամբողջության մեջ, այսպես թե այնպես, ներհատուկ են աշխարհի տարբեր պառլամենտներին¹: Մինչդեռ պառլամենտական վերահսկողության բովանդակությունը շատ ավելի խորն է ու բազմաշերտ ուստի և դրսևորման զուտ արտաքին եղանակից բացի, դրա դասակարգման հիմքերի առանձնացման մեջ պետք է դրվեն նաև այլ չափանիշներ:

Նախ և առաջ պառլամենտական վերահսկողության չափանիշներն առաջանում են վերահսկողություն իրականացնող մարմինների լիազորությունների ծավալից, նրանց առջև դրված խնդիրների բնույթից, ինչպես նաև, անշուշտ, վերահսկողության՝ որպես կառավարման գործառնության՝ բովանդակությունից: Խնդրի ուսումնասիրման այսպիսի դիտարկման պարագայում պառլամենտական վերահսկողության դասակարգման հիմքում ըստ տարբեր ուսումնասիրողների, կարող են ընկած լինել տարբեր չափանիշներ՝ վերահսկողության սուբյեկտների բնույթը, նրանց նպատակ-

ները, խնդիրները, վերահսկողության լիազորությունների բնույթը, վերահսկողության սուբյեկտի և օբյեկտի փոխհարաբերությունների բնույթը, կառավարման փուլերը, որոնց ընթացքում իրականացվում է վերահսկողություն, իրականացված վերահսկողության իրավաբանական կամ կարգապահական հետևանքները և այլն²: Այսպիսի հատկանիշներով դասակարգումն առաջացնում է պառլամենտական վերահսկողության **տեսակային կատեգորիան** և դա թույլ տալիս վերահսկողության ձևից տարբերել նաև վերահսկողության տեսակները: Եվ քանի որ վերահսկո-

¹ Чиркин В. Е. Конституционное право зарубежных стран; М 2007 с 283-286.

² Тарасов А. М. Государственный контроль в России; М 2008 с 24.

ղությունը, ինչպես արդեն ասվեց, դիտվում է նաև որպես կառավարման գործառույթ, ապա օրենսդիր բարձրագույն մարմինը ժողովրդի կամքն արտահայտելուն ուղղված իր պետաիշխանական կառավարման գործառույթի իրացման ընթացքում որպես վերահսկողության սուբյեկտ ինքն է որոշում, թե ինչ մեթոդներով է անհրաժեշտ դիտարկում և ստուգում իրականացնել և որ ուղղություններն է պետք ընտրել առավել արդյունավետության հասնելու համար: Չատկանշական է ամերիկացի հետազոտող **Դրաբերի** բնորոշումը վերահսկողության հասկացության վերաբերյալ ըստ որի վերահսկողությունն ու ուղղության որոշումը հոմանիշներ են³: վերահսկողության ուղղությունից ելնելով պայմանականորեն կարելի առանձնացնել դրա արտաքին և ներքին տարատեսակները⁴, ընդ որում ներքին կամ ներգերատեսչական է կոչվում վերահսկողության տարատեսակը, որն իրականացվում է պետական միևնույն մարմինների համակարգում, իսկ արտաքին կամ վերգերատեսչական տարատեսակն իրականացվում է անմիջականորեն վերահսկողության սուբյեկտին ոչ ենթակա մարմինների գործունեության նկատմամբ: Չետաքրքիր է, որ արտաքին վերահսկողության այսպես կոչված **Վեստմինստերյան** մոդելը նախատեսում է պաշտամենտական վերահսկողության իրականացումը բրիտանական նախարարների լիազոր ներկայացուցիչների միջոցով, ընդ որում պաշտամենտը վերահսկում է իրեն հաշվետու նախարարություններին, իսկ վերջիններս իրենց ծառայողներին:

Պետք է ի նկատի ունենալ, որ գործադիր իշխանության նկատմամբ օրենսդիր բարձրագույն մարմնի կողմից իրականացվող վերահսկողությունը իր մեջ ներառում է այնպիսի տարրեր և ենթադրում է այնպիսի խնդիրների կատարում, որոնք միաժամանակ կարող են համարվել նաև պաշտամենտական վերահսկողության փուլեր: Այդ տարրերն են՝

ա/ Անհրաժեշտ տեղեկատվության ստացումը,

բ/ Ստացված տեղեկատվության վերլուծությունն ու գնահատումը

գ/ իրականացված վերահսկողության ընթացքում բացահայտված թերությունների վերաբերյալ համապատասխան վերաբերմունքի դրսևորումը որոշումների կայացման միջոցով՝ այդ թվում նաև իրավական բնույթի պատժամիջոցների կիրառմամբ: Ընդ որում բոլոր երեք տարրերը, որպես կանոն, կանոնավորվում են նորմատիվ իրավական ակտերով և իրականացվում են դրանցում ամրագրված պահանջներին համապատասխան:

Քանի որ կառավարումը սոցիալական իմաստով աղերսվում է իշխանավարման (իշխանության իրացման) կատեգորիայի հետ, ապա վերահսկողությունը, որպես կառավարման գործառույթ, նույնպես իրենից պետաիշխանական գործունեություն է ներկայացնում, իսկ կառավարման գործառույթն իր բնական գործունեության ապահովման համար որոշակի տեղեկատվության կուտակում է նախատեսում: Այս առումով անհրաժեշտ է համաձայնել **Ա. Խարիտոնովի** հետ, որի համոզմամբ վերահսկողությունն իր բնույթով ու նպատակներով ունի տեղեկատվական բաղկացուցիչ⁵:

Վերոգրյալի հաշվառմամբ պարզենք, թե օրենսդիր ներկայացուցչական մարմինն ինչ կարգով ու միջոցներով է իրացնում գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողության իր գործառույթին ներհատուկ երեք տարրերը:

ա/ Տեղեկատվության ստացում. Այս խնդրի իրականացման համար պաշտամենտը կարող է օգտագործել բազմազան միջոցներ սկսած զանգվածային տեղեկատվության միջոցների հաղորդումներից, տեղեկատվական բազաներ մուտք ունենալուց, պաշտամենտական լսումներից /**ԱՄՆ-ում, Իտալիայում և Իսպանիայում** ցանկացած հարցի վերաբերյալ/ վերջացրած հետաքննություններից, որոնք իրականացվում են քննչական կոմիտեների /**ԳԴՅ**/, հատուկ հետաքննչական հանձնաժողովների /**Ֆրանսիա**/, ինչպես նաև տարբեր հանձնաժողովների և ենթահանձնաժողով-

³ Drucker P. F. Management: Tests, Responsibilities, Practices. New York, 1973 p 390.

⁴ Бендюрина С. В. Парламентский контроль в Российской Федерации; Автореф. дисс.канд. юр. наук. Екатеринбург 2008.

⁵ Харитонов А. Н. Государственный контроль над преступностью. Омск 1997 с 8.

ների կողմից: Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում հետաքննչական լիազորություններ ունեցող այդպիսի հանձնաժողովներ չկան և մեր պառլամենտն այդ կարգի անհրաժեշտ տեղեկատվությունը կարող է ստանալ տարբեր իրադարձությունների կապակցությամբ ստեղծված ժամանակավոր հանձնաժողովների միջոցով: Բացի այդ անհրաժեշտ է նշել, որ տեղեկատվության ստացման խնդիրը ՀՀ Ազգային ժողովը լուծում է նաև իրենց ընտրողների հետ պատգամավորների անմիջական շփումների միջոցով:

բ/ Ստացված տեղեկատվության վերլուծություն: Սա իրականացվում է նախ և առաջ պառլամենտի մշտական հանձնաժողովներում, այդ թվում նաև պառլամենտական օժանդակ ծառայություններում և մարմիններում ինչպիսին են օրինակ Կոնգրեսի Հետազոտական ծառայությունը, Գլխավոր հսկողական և բյուջետային վարչությունները **ԱՄՆ-ում**, պաշտպանության հարցերով Բուսնիցիայի լիազորը, Դաշնային հաշվիչ պալատը **ԳՂՀ-ում**, Զննսեսթի Գլխավոր վերահսկիչը **Խրաեղում** և այլն: Ստացված տեղեկատվության վերաբերյալ հիմնավոր գնահատական ձևավորելու համար բացի վերը նշվածից պառլամենտն օգտագործում է նաև խորհրդակցությունների անցկացումը մշտական և ժամանակավոր հանձնաժողովներում հրապարակային կամ փակ ռեժիմով, ինչպես նաև այդ տեղեկատվության քննարկման հնարավորությունը պառլամենտի կամ նրա պալատների միստերում:

գ/ Տեղեկատվության գնահատում: Այս փուլի արդյունքում պառլամենտի կողմից այս կամ այն հարցի կապակցությամբ արտահայտվող դիրքորոշումը տեղեկատվության վերլուծությունից հետո՝ պատժամիջոցների հնարավոր կիրառմամբ, կարող է դրսևորվել կառավարության նկատմամբ անվստահության, պարսավանքի բանաձևերի ընդունմամբ⁶ /օր. **ԳՂՀ-ում** կառավարությանը Բուսնիցիայի կողմից այսպես կոչված անվստահության կառուցողական քվեի հայտնումը/, կամ էլ նախագահական ու կիսանախագահական կառավարման ձևի երկրներում համապատասխանաբար նախագահին ու պետական այլ պաշտոնյաներին իմփիչմենթի ընթացակարգով պատասխանատվության ենթարկելու վարույթի հարուցմամբ /օր. **ԱՄՆ-ում** և նրա օրինակով դասական նախագահական կառավարման ձևն ընդունած **Հարավային Ամերիկայի երկրներում**/, նախագահին և կառավարության անդամներին Արդարադատության Բարձր Պալատի և Հանրապետության Դատարանի իրավասությանը հանձնելու վերաբերյալ բանաձևի ընդունմամբ⁷:

Պառլամենտական վերահսկողությունը կարող է դասակարգվել առանձին տեսակների ըստ այդ գործառույթն անմիջականորեն իրականացնող սուբյեկտի կողմից դրա իրականացման բնույթի, ժամանակի, ուղորտների⁸ և այլն: Այդ տեսակները, որպես պառլամենտական վերահսկողության գոյության ու դրսևորման միջոցներ, կրում են տեղեկատվական /ինֆորմացիոն/, որոշիչ⁹ /արդյունավետ/ և ֆինանսաբյու-

⁶ Հարցապնդման իրականացումը կառավարության որևէ անդամի կամ վարչապետի նկատմամբ, որը կարող է կառավարության նկատմամբ վստահության հարցի քննարկում առաջացնել պառլամենտում:

⁷ Ֆրանսիայում գործող այս մարմինների անվանումները բերված են ռուսական իրավաբանական գրականության մեջ ընդունված թարգմանությանը համապատասխան: Տես օր. Конституции зарубежных государств. Учебное пособие//сост. Маклаков В.В.; М 2000 с 47-48:

⁸ Корнилаева А. А. Теория парламентского контроля в контексте принципа разделения властей: Автореф дисс. Канд. юр. Наук Уфа 2002 с 25

⁹ Պառլամենտական վերահսկողության տեսակների մասն դասակարգման կարելի հանդիպել և՛ ռուս և՛ եվրոպացի հեղինակների մոտ, օրինակ. գերմանացի պետականագետներ **Քլայնն ու Ցեեն** համարում են, որ Բուսնիցիայի իրավասության ներքո գտնվող վերահսկողության միջոցները կրում են տեղեկատվական և թույլատրող /լիազորող/ բնույթ: Տես. Государственное право Германии; Т. I М. 1994 с 158: Պրոֆ. **Մակլակովը** Ֆրանսիայի Ազգային ժողովի պառլամենտական վերահսկողության բոլոր ձևերը բաժանում է 2 խմբի՝ կառավարության նկատմամբ ուղղակի պատժամիջոցներ չպարունակող և այդպիսիք պարունակող: Տես. Иностранное конституционное право /под. ред. Маклакова В. В. М 1996 с 103.

ջետային բնույթ: Սրանից հետևում է, որ պառլամենտական վերահսկողության դասակարգման չափանիշներ կարող են համարվել պառլամենտական վերահսկողություն իրականացնելու իրավունք ունեցող մարմինները, դրա իրականացման ժամանակը, վերահսկողության բովանդակությունը, վերահսկողության իրականացման հիմքերն ու ընթացակարգը, գործող քաղաքական ռեժիմը և այլն: Պետք է ասել, որ նման դասակարգումը սպառնիչ չէ և պառլամենտական վերահսկողության, որպես պետական իշխանություն իրականացնող օրենսդիր բարձրագույն մարմնի, այս առանձնահատուկ գործունեության ոլորտի գիտական ուսումնասիրության ընթացքում կարող են ի հայտ գալ նաև դասակարգման այլ չափանիշներ: Այնուամենայնիվ, դժվար է չնկատել, որ վերահսկողության վերը նշված երեք տեսակներից են ծագում պառլամենտական վերահսկողության բոլոր ձևերը, քանի որ այդ երեք տեսակներն իրենց համակցության մեջ ամբողջական պատկերացում են տալիս և՛ պառլամենտական վերահսկողության՝ որպես ինստիտուտի և՛ դրա մերգործության հնարավոր հետևանքների մասին:

Բնութագրվ տեղեկատվական վերահսկողության տեսակներից են խնդրագրերի (պետիցիա) /**Ֆրանսիա, ԳՂԳ**/ և այլ տեսակի թղթակցության ներկայացումը պառլամենտ քաղաքացիների, մարդկանց խմբերի, հասարակական կազմակերպությունների և նրանց ներկայացուցիչների կողմից, կառավարությանն ուղղված բանավոր և գրավոր հարցերը, հարցապնդումները, կառավարության ու նրա առանձին անդամների հաշվետվությունները պառլամենտին /**Ֆրանսիա, Հայաստան, Ռուսաստանի Դաշնություն**/, նախարարությունների կողմից իրենց գործունեության վերաբերյալ հաշվետվությունների ներկայացումը որոշակի ոլորտների գծով **ԱՄՆ** Կոնգրեսի մասնագիտացված հանձնաժողովներին, հրապարակային և փակ խորհրդակցությունների անցկացումը պառլամենտական մշտական և ժամանակավոր

հանձնաժողովների կողմից:

Որոշիչ կամ արդյունավետ վերահսկողության տեսակը նախատեսում է պառլամենտի կողմից որոշակի դիրքորոշման արտահայտում կամ որևէ հարցի կապակցությամբ ստացված տեղեկատվության հիման վրա որոշման ընդունում: Այդ տեսակին են վերաբերվում օրինակ օրենսդիր բարձրագույն մարմինների կողմից որոշումների ընդունումը արտաքին հարաբերությունների ոլորտում կամ կառավարությունների նկատմամբ որոշակի պատժամիջոցների կիրառման քայլերը: Օրինակ երկրի նախագահի՝ պատերազմի և խաղաղության հարցերին վերաբերող որոշումներին, կնքած միջազգային պայմանագրերին հավանություն տալը /**ԱՄՆ, Հայաստան**/, Եվրոպական Միության ինստիտուտներից բխող առաջարկությունների վերաբերյալ որոշումների ընդունումը /**Ֆրանսիա**/, Եվրոպական Միության կողմից ընդունվելիք նորմատիվ ակտերի նախապատրաստմանը կառավարության մասնակցության վերաբերյալ Բունդեսթագի կողմից եզրակացության տրամադրումը և այլն, կառավարության կողմից նախաձեռնված վստահության քվեի մերժումը և սեփական նախաձեռնությամբ կառավարությանն անվստահության բանաձև ներկայացնելը /**ԳՂԳ, Մեծ Բրիտանիա, Հայաստան, Ռուսաստանի Դաշնություն**/, նախագահական կառավարման ձև ունեցող երկրներում երկրի նախագահի և պաշտոնատար այլ անձանց նկատմամբ ինֆիչմենտի կարգով պաշտոնանկության վարույթ հարուցելը /**ԱՄՆ, Արգենտինա, Մեքսիկա**/:

Որոշ ուսումնասիրողներ առանձնացնում են պառլամենտական վերահսկողության **նախաձեռնողական /ad hoc**¹⁰ և **մշտապես գործող** տեսակները: Դրանցից առաջինը այդպես է կոչվում, քանի որ իրականացվում է կոնկրետ նախաձեռնության միջոցով՝ վերահսկողության սուբյեկտի կայացրած որոշմամբ: Նախաձեռնողական տեսակի դեպքերում վերահսկողական միջոցառման բոլոր ձևերը, ժամանակը, իրա-

¹⁰ Караев Р. Ш. Конституционно-правовые формы парламентского контроля за исполнительной властью в Российской Федерации; Автореф. дисс. Канд. юр. Наук. Ростов на Дону 2005 с. 1.

կանացման տևողությունը որոշվում են անմիջապես վերահսկողության սուբյեկտի կողմից: Վերահսկողության նախաձեռնողական տեսակին են վերաբերվում մարդու իրավունքների պաշտպանը /հատկանշական է, որ մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունն իր բնույթով վերաբերելի է նաև վերահսկողության մշտական կամ պարտադիր¹¹ տեսակին/ քաղաքացիների դիմումների և բողոքների հիման վրա պետական մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց գործողություններից առաջացող իրավապաշտպան բնույթի վերահսկողական իր գործունեությամբ, ինչպես նաև գործունեության այնպիսի ձև ինչպիսին պառլամենտական հետաքննությունն է, որը կարող է իրականացվել ինչպես պառլամենտի մշտական հանձնաժողովների ու կոմիտեների կողմից, այնպես էլ հատուկ այդպիսի հետաքննություն իրականացնելու նպատակով ստեղծվող ժամանակավոր /ad hoc/ հանձնաժողովների կողմից: Վերահսկողության այս վերջին տեսակը մեծ արդյունավետությամբ գործում է կառավարման նախագահական ձև ունեցող երկրներում /ԱՄՆ, Արգենտինա/, որտեղ առկա են ուժեղ պառլամենտներ և, բնականաբար, պառլամենտական երկրներում /Մեծ Բրիտանիա, Կանադա, Իտալիա/: Նախագահական ու պառլամենտական տարրերի համակցմամբ գործող կառավարման ձև ունեցող երկրներում, ինչպիսիք են **Ֆրանսիան, Չայաստանը, Ռումինիան, Ռուսաստանի Դաշնությունը, Պորտուգալիան**, պառլամենտական հետաքննությունների ինստիտուտն ավելի թույլ է զարգացած և կառավարության վրա ունեցած իր քաղաքական ներգործությամբ նվազ նշանակալի է: Այսպես, օրինակ ի տարբերություն **Գերմանիայի և Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի** պառլամենտում գործող ժամանակավոր հատուկ հանձնաժողովների և կոմիտեների վերահսկողական լիազորությունները

բավականին սահմանափակ են: Բավական է ասել, որ այդ հանձնաժողովների գործունեությունը կարգավորվում է ոչ թե պառլամենտական օրենքով այլ **Ֆրանսիայի** կառավարության 1958թ-ի նոյեմբերի 17-ին ընդունած օրոհմանսով¹²: Ժամանակավոր հատուկ հանձնաժողով ստեղծելու մասին որոշումը կայացնում է **Ֆրանսիայի** Ազգային ժողովի սահմանադրական օրենքների հանձնաժողովը: Այդ երկրի գործադիր իշխանությունը ոչ միայն բավականին լուրջ ներգործություն ունի երկրի օրենսդիր բարձրագույն մարմնի նկատմամբ, այլև շատ հաճախ պառլամենտում ունեցած մեծամասնության միջոցով խոչընդոտում է այդպիսի հանձնաժողովների ստեղծմանը: Այսպես 1981-86 թթ ընթացքում ժամանակավոր հանձնաժողովներ ստեղծելու վերաբերյալ թվով 65 առաջարկություններից 60-ը սահմանադրական օրենքների հանձնաժողովի կողմից մերժվել են¹³:

Չայաստանի Չանրապետությունը, որպես կառավարման կիսանախագահական ձևի երկիր, պառլամենտական վերահսկողության այս տեսակի կիրառելիության առումով բացառություն չի կազմում վերը նշված երկրների շարքում, իսկ օրենսդիր բարձրագույն մարմնի կազմավորման և ընդհանրապես քաղաքական մշակույթի երկրում արմատավորված կայուն ավանդույթների, ինչպես նաև ՀՀ Ազգային ժողովի քաղաքական կազմի գործունեների հաշվառմամբ, պառլամենտական հետաքննություն իրականացնելու միջոցով կառավարության նկատմամբ արդյունավետ վերահսկողություն սահմանելը ՀՀ Ազգային ժողովի համար մնում է դեռևս հեռու նպատակ: Մինչդեռ այդ ինստիտուտի արմատավորումը մեր երկրում էապես կբարձրացներ պառլամենտի հեղինակությունը և լրացուցիչ խթան կհանդիսանար գործադիր իշխանության հետ փոխհարաբերություններում հակակշիռների և զսպումների համակարգի ներդրման մեխա-

¹¹ Тарасов А. М. Сзлվ. աշխ. էջ 25.

¹² Օրոհմանս են անվանում են Ֆրանսիայի կառավարության նորմատիվ իրավական ակտերը, որոնք ընդունվում են պատվիրակված լիազորությունների կարգով: Այդպես են անվանվում նաև Ֆրանսիայի նախագահի իրավական ակտերը, որոնք վերջինս ընդունում է օրենսդրական ոլորտի կարգավորումների նպատակով: Տե՛ս. իրավաբանական բառարան; www.dic.academic.ru

¹³ А. Д. Керимов Парламентское право Франции М, 1998 с 91.

նիզմում պետական մարմինների ճիշտ գործառնությունն ապահովող անհրաժեշտ հավասարակշռության պահպանման, գործադիրի՝ իշխանական չափազանց հավակնությունների զսպման, հանրության մեջ գործադիր իշխանության գործունեության թափանցիկության ու հաշվետվողականության գաղափարի արմատավորման, բացահայտումների անխուսափելիության միջոցով երկրի կառավարման արդյունավետության հետևողական բարձրացման ապահովման, կառավարության առանձին օղակների՝ օրենսդրությունը հակասող, գործունեության վերաբերյալ ճշմարիտ տեղեկատվությունը երկրի ազգաբնակչությանը պարբերաբար և ժամանակին հասցնելու համար: Եվ վերը նշված, անշուշտ, ոչ սպառիչ ցանկում ներառված նպատակների իրականացումն իրապես ապահովելու համար, մեր խորին համոզմամբ, անհրաժեշտ է օրենսդիր բարձրագույն մարմին կառավարության գործունեության խնդրահարույց հարցերի վերաբերյալ քննություն իրականացնելու լիազորությամբ օժտել և հետաքննչական հանձնաժողովներ ստեղծելու իրավունքը վերապահել տվյալ պահին գործադիր իշխանության մեջ չներգրավված պառլամենտական ընդդիմությանը: Այդ նպատակով **առաջարկում ենք ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգ օրենքում փոփոխություն կատարելու միջոցով առանձին գլուխ ավելացնել ՀՀ Ազգային ժողովում պառլամենտական հետաքննություն անցկացնելու մասին, որում պետք է սահմանվեն պառլամենտական հետաքննության օբյեկտը, խնդիրներն ու նպատակները, ինչպես նաև պետք է ամրագրվի պետական մարմիններից ու դրանց**

պաշտոնատար անձանցից տեղեկություններ, փաստաթղթեր պահանջելու, ստանալու, դրան ավելացրած նաև վկաներ հրավիրելու ու լսելու, և արդյունքում՝ բացահայտված փաստերով իրավապահ մարմիններին՝ գործեր հարուցելու համար, միջնորդություններ անելու քննչական հանձնաժողովի իրավունքը: Հետաքրքիր է, որ չնայած ռուսաստանյան մասնագետների գնահատականներին իրենց երկրում պառլամենտական վերահսկողության **թույլ մեխանիզմի առկայության** վերաբերյալ¹⁴, **Ռուսաստանի Դաշնությունում** «Դաշնային ժողովի պառլամենտական վերահսկողության մասին» օրենք ընդունվել է դեռևս 2005թ.-ի դեկտեմբերի 27-ին¹⁵: Ի վերջո, պետք է ընդունել, որ ժողովրդավարական է համարվում այն հասարակական կարգը, որի պայմաններում քաղաքացիական հասարակության բաղադրատարրերը սահմանադրական արտացոլում են ստանում, այսինքն ամրագրում են իրենց գոյության և զարգացման հիմքը պետության հիմնական օրենքում¹⁶, իսկ այդպիսի բաղադրատարրերից մեկն էլ, անկասկած, պառլամենտական ընդդիմությունն է: Մասնագիտական գրականության մեջ ներկայումս կարծիքներ են հնչում այն մասին, որ պառլամենտական ընդդիմության սահմանադրաիրավական կարգավիճակի խնդիրը ներկայիս Ռուսաստանի համար ծայրահեղ ակտուալ է¹⁷:

Ռուս ուսումնասիրող **Կովրյակովան** իրականացման ժամանակի առումով պառլամենտական վերահսկողությունը բաժանում է հետևյալ տարատեսակների

¹⁴ Стародубцева И. А. Особенности конституционной системы «сдержек и противовесов» В России и Франции: от теории к развитию в законодательстве «Конституционное и муниципальное право» но 3/2011 с 31.

¹⁵ Г. Г. Арутюнян, М. Б. Баглай Конституционное право: Энциклопедический словарь, М. 2005 с 325.

¹⁶ Авакьян С. А. Политический плюрализм и общественные объединения в Российской Федерации: конституционно-правовые основы. М., 1996 с 16.

¹⁷ Салихов Д. Р. Оппозиционная деятельность в России: проблемы и перспективы «Конституционное и муниципальное право» 7/2011 с 52.

ա/ Կանխիչ վերահսկողություն, որն ուղղված է գործադիր իշխանության կողմից անօրինական կամ ոչ արդյունավետ գործողություններ թույլ չտալուն և իրականացվում է ինչպես պառլամենտի, այնպես էլ նրա օժանդակ մարմինների կողմից /հետազոտական և հսկողական վարչություններ, հաշվիչ պալատներ, պառլամենտական լիազորներ/;

բ/ Ուղեկցող վերահսկողություն, որն ավելի շատ կիրառվում է ֆինանսբյուջետային ոլորտում և ուղղված է օրենսդիր ներկայացուցչական մարմինի կողմից վերահսկողության սահմանմանը այս կամ այն իրավական ակտի պահանջների իրականացման նկատմամբ՝ վերջինիս գործադրման ժամանակ: Ընդ որում, վերահսկողության այս տեսակը պետք է ուղեկցվի օրենսդիր բարձրագույն մարմնի կողմից գործադիր իշխանության գործունեության նկատմամբ նախագրուչական համապատասխան միջոցների կիրառմամբ ինչպես նաև այդ գործունեության ընթացքում խախտումների փաստով պայմանավորված պառլամենտի կողմից իրավական բնույթի արձագանքման որոշակի քայլերի դրսևորմամբ: Վերահսկողության ուղեկցող տեսակի նշանակությունը նրանում է, որ գործադիր իշխանության գործունեությունն անընդհատ ռեժիմով է գտնվում պառլամենտի ուշադրության կենտրոնում, որն անշուշտ նվզեցնում է գործադիր իշխանության կողմից պետության օրենքների խախտման հնարավորությունը: Ուղեկցող վերահսկողության դրսևորման ամենակենսառու օրինակը պրակտիկայում կարող է հանդիսանալ որևէ երկրի պետական բյուջեի կատարման նկատմամբ բնութիվ օպերատիվ վերահսկողության իրականացումը պառլամենտական վերահսկողության սուբյեկտ հանդիսացող այնպիսի մարմնի կողմից, ինչպիսին տվյալ երկրի հաշվիչ պալատն է /Յայաստանի Յանրապե-

տությունում այդ մարմինը կոչվում է իր իսկ գործունեության անունով՝ Վերահսկիչ պալատ, որի գործունեությունը ՀՀ Ազգային ժողովի վերահսկողական գործունեության համատեքստում ընդունելու վերապահումների մասին արդեն նշել ենք/:

գ/ Հաջորդող վերահսկողություն, որի նպատակը օրենքների պահանջների ճիշտ կատարման տեսանկյունից ոչ միայն գործադիր իշխանության վարքագծի, այլև վերջինիս ներկայացուցիչների /պաշտոնատար անձանց/ գործողությունների ստուգումն է, այսինքն որոշակի իրավիճակներում ոչ ճիշտ որոշումների կայացման փաստերով դիտարկում ու զնահատում իրականացնելը: Այդպիսի վերահսկողության օրինակ կարող է ծառայել Կոնգրեսի, Սենատի նախաձեռնած հետաքննությունը ԱՄՆ նախագահի և այլ պաշտոնատար անձանց անգործության կամ անփույթ գործողությունների նկատմամբ, որոնք բավարար միջոցներ ձեռք չէին առել Նյու Յորքի նկատմամբ 2011թ.-ի սեպտեմբերին կատարված ահաբեկչական հարձակումները կանխելու համար¹⁸:

Սրան պետք է ավելացնել, որ վերահսկողության վերը նշված տեսակները կարող են արդյունավետ համարվել միայն այն դեպքում, երբ վերահսկողության ընթացքում հայտնաբերված իրավական ակտերի պահանջների խախտումներին իրավապահ մարմինները համապատասխան կերպով արձագանքում են: Պառլամենտական վերահսկողության վերը նշված երեք տեսակներն էլ առանձին վերցրած ունեն կարևոր նշանակություն և դրա համար էլ կարող են իրականացվել ինքնուրույնաբար: Բայց միայն դրանց, որպես նաև պառլամենտական վերահսկողության իրար տրամաբանորեն հաջորդող փոխկապակցված փուլերի հետևողական կիրառումը կարող է ապահովել պետական կառավարման իրական արդյունավետություն:

¹⁸ Коврякова Е. В. Парламентский контроль в зарубежных странах; Дисс канд.юр. наук М., 2002 с 22.

ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՏԵԳՈՐՅԱ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԻՐԱՎԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՅԵՅԱԿԱՐԳԵՐՈՒԻՄ

Վիլիկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Ասպիրանտ

Արտադրության և արդար օրենքների գաղափարներն իրենց արտացոլումն են գտել միջնադարյան իրավաբանների ստեղծագործություններում: Այս առումով, անհրաժեշտ է ընդգծել, որ միջնադարյան Արևմտյան Եվրոպայի իրավաբանական միտքը զարգացել է հռոմեական իրավագիտության նկատելի ազդեցության ներքո¹:

Հռոմեական իրավունքը և հռոմեական իրավագիտությունը միջնադարյան իրավաբանների տեսական ու մեկնաբանական գործունեության համար ելակետ են եղել: Նշելով միջնադարյան իրավաբանական մտքի նման կողմնորոշման դրական նշանակությունը, իրավունքի ռուս պատմաբան Ա. Ստոյանովը գրել է «Միջնադարյան հասարակությունում պատերազմը և սխուլաստիկ իղձերը կլանել են մեծամասնության գործունեությունը: Կոպիտ ուժը և ճոռոմաբանությունը, մեռելածին ինաստակունները տիրապետող երևույթներ էին: Մինչդեռ, մարդկային միտքն առողջ սննդի, դրական գիտելիքի կարիք ուներ: Որտե՞ղ փնտրել դրանք... Ընդհանուր առմամբ կարելի է դրականորեն և անկողմնակալ ասել, որ հռոմեական իրավունքը մարդկային մտքի ամենագործնական ու առողջ արդյունքն էր այն ժամանակ, երբ Եվրոպական ժողովուրդներն իրենց մեջ զգացին գիտելիքի ծարավը... Հռոմեական իրավունքի գիտական դպրոցները՝ որպես իրավաբանական քարոզչության մարմիններ, անհրաժեշտ էին նման պայմաններում»²:

Հռոմում, Պավիայում, Ռավենայում և այլ

քաղաքներում ստեղծված այն ժամանակվա (X-XIդդ.) մի շարք իրավաբանական դպրոցներում գործող իրավունքի աղբյուրների ուսումնասիրության ընթացքում բավականին ուշադրություն էր դարձվում հռոմեական ու տեղական (գոթական, լանգոբարդական և այլ) իրավունքի հարաբերակցությանը, տեղական սովորույթներում ու կոդիֆիկացիաներում բացերի լրացման նպատակով հռոմեական իրավունքի դերի մեկնաբանմանը³: Ընդ որում, հռոմեական իրավունքի նորմերին, սկզբունքներին և դրույթներին սկսեցին տալ համակողմանի նշանակություն: Դրա հետ մեկտեղ, այն ժամանակվա իրավաբանական գիտելիքի մեջ էական տեղ է սկսում զբաղեցնել հռոմեական իրավաբանների կողմից մշակված և հռոմեական իրավունքի համակարգի ու իրավագիտության մեջ ընդունված իրավական արդարության (aequitas)-ի⁴ գաղափարը և դրա հետ կապված բնական-իրավական պատկերացումներն ու հայեցակարգերը:

Այդ կապակցությամբ Ի. Ա. Պոկրովսկին նշում էր, որ «Պավիական դպրոցի իրավագիտության մեջ վաղ ձևավորվեց համոզմունքը, որ լանգոբարդական իրա-

¹ St'iu История политических и правовых учений. Средние века и Возрождение, с. 54-55; Гароибь Дги. Берман. Западная традиция права: эпоха формирования. М., 1998.
² Стоянов А. Методы разработки положительного права... Харьков, 1962. С 250-251.
³ St'iu Ներսեսյան Վ. Ա. Իրավագիտություն: Երևան 2002, էջ 155-156:
⁴ St'iu Kaiser M. Das römische Privatrecht. MUnchn, 1959. S. 39. u. f.

վունքի համալրման համար անհրաժեշտ է դիմել հռոմեականին, որ հռոմեական իրավունքն ընդհանուր իրավունք, *lex generalis omnium* է: Մյուս կողմից, Ռավենայի հռոմեագետներն ուշադրություն էին դարձնում լանգոբարդական իրավունքին: Այն դեպքերում, երբ իրավական համակարգերը բախվում էին միմյանց և հակասում մեկը մյուսին, իրավագիտությունն իրեն իրավունք էր վերապահում արդարության՝ *aequitas*-ի, նկատառմաներով ընտրություն կատարել դրանց միջև, որի արդյունքում այդ *aequitas*-ը բարձրացվում էր մինչև, ցանկացած իրավունքի գլխավոր չափանիշի աստիճանի: Այստեղից էլ հետագա հայացքը, որ նաև յուրաքանչյուր առանձին իրավական համակարգի ներսում ցանկացած նորմ ենթակա է գնահատականի այդ նույն *aequitas*-ի տեսակետից, որ անարդարացի նորմը կիրառելիս՝ այն կարող է մերժվել և փոխարինվել արդարության կողմից թելադրվող կանոնով: Ընդ որում, *aequitas* հասկացությունը նույնացվում է *ius naturale* հասկացության հետ և, այդպիսով, այդ ժամանակվա իրավագիտությունը՝ իր ընդհանուր ու հիմնական ուղղվածությամբ, ավելի, ուշ դարաշրջանի բնական-իրավական դպրոցի նախակարապետն է»⁵:

Յետագայում (XII դ. վերջ XIII դ. կեսեր) տվյալ ուղղությանը փոխարինելու է գալիս **գլոսատորների** (կամ էկզեգետների) դպրոցը, որի ներկայացուցիչները հիմնական ուշադրություն սկսեցին դարձնել հռոմեական իրավունքի աղբյուրների՝ **Յուստինիանոսի** ժողովածուի և, հատկապես՝ **Դիգեստների**, բուն տեքստի մեկնաբանմանը (այսինքն՝ էկզեգեզին, գլոսատորական գործունեությանը): *Aequitas*-ի տեսակետից այս կամ այն նորմերի գնահատականից դեպի հռոմեական իրավունքի՝ որպես հենց պոզիտիվ իրավունքի աղբյուրի, ուսումնասիրությունն այդ շրջադարձն ամենից առաջ կապված է **Բոլոնյան** համալսարանի իրավաբանների գործունեության հետ, որը ստեղծվեց XI դարի վերջին և շուտով դարձավ այն ժամանակվա իրավաբանական մտքի կենտրոնը: Իրավագիտությունը նույն ուղղությամբ զարգացել է նաև այդ ժամանակվա այլ համալսարաններում (**Պադուայում, Պիզայում, Փարիզում, Օռ-**

լեանում):

Գլոսատորների դպրոցի հայտնի ներկայացուցիչներից են **Իրներիոսը, Բուլգարը, Ռոզերիոսը, Ալբերիկոսը, Բասիանոսը, Պիլիոսը, Վակարիոսը, Օդոֆրեդոսը, Ացոն**: XIII դարի կեսերին բոլոր դպրոցների հատընտիր գլոսները հրատարակեց **Ակուրսիոսը** (*Clossa Ordinaria*): Գլոսների այդ ժողովածուն մեծ հեղինակություն էր վայելում և դատարաններում կատարում էր գործող իրավունքի աղբյուրի դեր⁶:

Գլոսատորների իրավագիտությունը նշանակալի ավանդ է ներդրել պոզիտիվ իրավունքի մշակման, դրա աղբյուրների մեկնաբանման իրավաբանական-դոգմատիկ մեթոդի ձևավորման և զարգացման գործում: **«Ամենից առաջ**,- գլոսատորների գործունեության մասին գրում էր **Ա. Ստոյանովը**,- **նրանք իրենց համար բացատրում են առանձին օրենքների իմաստը: Այստեղից է, այսպես կոչված, օրինական էկզեգեզան (exegesa legalis)՝ առաջին քայլը, պոզիտիվ իրավունքի գիտության այբուբենը: Սակայն առանձին օրենքների պարզաբանումից մտքի բարձրագույն, տեսական պահանջներն իրավաբաններին հասցրեցին դեպի աղբյուրների այդ նույն օրինական սահմաններում մի շարք ուսմունքների տրամաբանորեն փոխկապված շարադրանքին: Դա դոգմատիկ տարր է: Բացի դրանից, XIII հարյուրամյակի սկզբի իրավաբանական գրականությունը փորձում է հռոմեական իրավունքի ուսմունքները շարադրել ինքնուրույն՝ չհետևելով ժողովածուի տիտղոսների և գրքերի կարգին: Այստեղ է համակարգվածության տարրի սաղմը: Դրական իրավունքի ուսումնասիրությունը չի կարող գոյություն ունենալ առանց էկզեգեզների, առանց դոգմատիկ և համակարգային մշակման: Այստեղ արտահայտվում են մարդկային մտքի հիմնական, անփոփոխ հնարքները, որոնք անվանվում են վերլուծություն և սինթեզ»⁷:**

Գլոսատորներն իրավունքի և օրենքի, իրավական արդարության (*aequitas*-ի) ու պոզիտիվ իրավունքի հակամարտությունը լուծում էին հոգուտ պաշտոնական օրենսդրության, և այդ իմաստով նրանք եվրոպական լեգիզմի ակունքներում կանգնած օրեն-

⁵ Покровский И. А. История римского права. Пг., 1918. С. 191-192.

⁶ Ст'и История политических и прововых учений. Средние века и Возрождение, с. 54-55; Гароиньд Дги. Берман. Западная традиция права: эпоха формирования. М., 1998, с. 55.

⁷ Стоянов А. Նշված աշխ. էջ 4-5.

քապաշտներ էին: «Բոլոնյան դպրոցը պահանջում էր, որ արդարության մասին իր սուբյեկտիվ պատկերացումներից հրաժարված դատավորը պահպաներ օրենքի դրական նորմերը, այսինքն **Corpus Iuris Civilis**-ը: Դեռևս իրենցից հռչակում էր, որ **ius**-ի և **aequitas**-ի միջև հակամարտության դեպքում դրա լուծումը պատկանում է օրենսդիր իշխանությանը»⁸:

XIII-XVդդ. եվրոպական իրավագիտության մեջ տիրապետող դիրքեր գրավող հետզլոսատորները (կամ ծանոթագրողները) հիմնական ուշադրությունը դարձնում էին բուն գլոսների ծանոթագրմանը: Հետզլոսատորների դպրոցի ներկայացուցիչները (**Ռավանիսը, Լուլին, Բարտոլուսը, Բալդուսը** և այլոք) հենվելով սխոլաստիկ փիլիսոփայության գաղափարների վրա, ձգտում էին տալ ընդհանուր իրավաբանական սկզբունքների, կատեգորիաների ու հասկացությունների այնպիսի համակարգի տրամաբանական մշակումը, որից հնարավոր է դեդուկտիվ եղանակի միջոցով դուրս հանել առավել մասնավոր իրավադրույթները, նորմերը և հասկացությունները:

Ի տարբերություն գլոսատորների՝ պոստզլոսատորները նորից դիմում են բնական իրավունքի գաղափարներին և հռոմեական իրավաբանների ու իրենց մյուս նախորդների համապատասխան ուսմունքներին: Ընդ որում, նրանք բնական իրավունքը մեկնաբանում են որպես իրերի բնությունից ելնող հավերժ, բանական իրավունք: Բնական իրավունքի պահանջներին համապատասխանությունը հանդես է գալիս որպես պոզիտիվ իրավունքի համապատասխան նորմերի (օրենսդրության և սովորությանի իրավունքի նորմերի) ճանաչման չափանիշ:

Հետզլոսատորների դպրոցի մի շարք հիմնական դրույթներ ձևակերպել է **Ռայմունդ Լուլին** (1234-1315թթ.): Լուլիի և այլ հետզլոսատորների մեկնաբանմամբ՝ իրավագիտությունը ներծծված է սխոլաստիկ փիլիսոփայության և աստվածաբանության գաղափարներով ու պատկերացումներով: Սակայն Լուլին «ունի նաև այլ՝ իր համար երկրորդական, սակայն՝ իր էությանը առավել գիտական, ձգտումներ և հատկապես՝ 1) իրավագիտությանը տալ կոմպենդիար շարադ-

րանք ու իրավունքի համընդհանուր հիմունքներից արհեստական ճանապարհով հանել հատուկ սկիզբ. 2) դրանով իսկ իրավունքի իմացությանը հաղորդել գիտության հատկություն. 3) ամրապնդել գրավոր իրավունքի նշանակությունը և ուժը այն համաձայնեցնելով բնական իրավունքի հետ, ու կատարելագործել իրավաբանի միտքը»⁹:

Լուլին իրավունքի նկատմամբ իր նոր մոտեցման և «իրավաբանական արվեստի» իր հասկացողության սկզբունքները ձևակերպել է հետևյալ կերպ՝ «**reducere ius naturale ad syllogismum**» (բնական իրավունքը սահմանափակել որպես սիլլոգիզմ), «**ius positivum et ius naturale reducat et cum ipso concordet**» (պոզիտիվ իրավունքը հանգեցնել բնական իրավունքին և համաձայնեցնել դրա հետ)¹⁰: Անգամ մերժելով պոզիտիվ իրավունքի այս կամ այն անարդարացի դրույթը, հարկավոր է, ըստ Լուլիի, խուսափել բնական և պոզիտիվ իրավունքների ծայրահեղ հակադրումից: «**Իրավաբանը, գրում էր նա, պարտավոր է հետազոտել, թե արդյո՞ք գրավոր օրենքն արդարացի է, թե՞ կեղծ: Եթե նա գտնի, որ այն արդարացի է, ապա պետք է դրանից ճիշտ հետևություններ անի: Իսկ եթե գտնի, որ այն կեղծ է, ապա ուղղակի չպետք է դրանից օգտվի, չպարսավելով այն և չտարփողելով դրա մասին, որպեսզի մեծերի (այսինքն՝ օրենսդիրների) նկատմամբ խայտառակություն չհարուցի**»¹¹:

Բացի բնական-իրավական արդարության իմաստին և էությանն ու բանական անիրաժեշտությանը պոզիտիվ իրավունքի նորմերի բովանդակային համապատասխանության կամ անհամապատասխանության բացահայտումից, Լուլին օգտագործել է (մանրակրկիտ սխոլաստիկ տրամաբանության ոգով) նաև պոզիտիվ իրավունքի (աշխարհիկ և կանոնական) ու բնական իրավունքի հարաբերակցության ստուգման ձևականացված ուղին: «**Այս եղանակը, գրում էր նա, այսպիսին է՝ իրավաբանն ամենից առաջ պարտավոր է տարբերակման մասին պարագրաֆի հիման վրա բաժանել աշխարհիկ կամ հոգևոր օրենքը..., բաժանումից հետո՝ համաձայնեցման պարագրաֆի հիման վրա,**

⁸ Покровский И. А. Նշված աշխ. էջ 194.

⁹ Стоянов А. Նշված աշխ. էջ 10.

¹⁰ Տես՝ նույն տեղը:

¹¹ Տես՝ նույն տեղը, էջ 11:

դրա մասերը համաձայնեցնել մեկը մյուսի հետ... Եվ եթե այդ մասերը միավորվելով կազմում են ամբողջական օրենք, այստեղից հետևում է, որ օրենքն արդարացի է: Իսկ եթե հոգեոր կամ աշխարհիկ օրենքը դա չի ապահովում, ապա այն կեղծ է և դրա մասին պետք չէ հոգ տանել»¹²:

Այսպիսով, Լուչիի մոտեցման մեջ բնական իրավունքի դիրքերից պոզիտիվ օրենսդրության գնահատող - բովանդակային, արժեքային բնութագիրը զուգակցվում և լրացվում է օրենքի՝ որպես գործող իրավունքի աղբյուրի, ներքին ամբողջականության, հետևողականության ու անհակասականության ստուգման ձևական-տրամաբանական ընթացակարգի պահանջով:

Բնական և պոզիտիվ իրավունքի հարաբերակցության բնույթի մասին նմանատիպ պատկերացումներ է զարգացրել նաև իրավաբան **Բալդուսը**: Ընդ որում, նա գտնում էր, որ բնական իրավունքն ավելի ուժեղ է, քան պրինցիպալոր, թագավորի իշխանությունը՝ «*potius est ius naturale quam principatus*»¹³:

Չետզլուսատորների դպրոցի իրավաբանների կողմից զարգացված և հիմնավորված իրավադոկտրինները լայն ճանաչում ստացան ոչ միայն տեսական իրավագիտությունում, այլ նաև իրավական պրակտիկայում, դատական գործունեության մեջ: Մի շարք անվանի հետզլուսատորների ծանոթագրություններն այն ժամանակվա դատավորների համար ունեին գործող իրավունքի աղբյուրի նշանակություն¹⁴:

XVI դարի սկզբից իրավագիտության մեջ նկատելիորեն թուլանում է պոստզլուսատորների դպրոցի ազդեցությունը և սկսում է ձևավորվել, այսպես կոչված՝ մարդասիրական դպրոցը (իրավագիտության մեջ մարդասիրական ուղղությունը): Այդ ուղղության ներկայացուցիչները (**Բուդուսը**, **Ալցիատուսը**, **Ցազին**, **Կույացին**, **Դոնելը**, **Դուարենը** և այլոք) ուշադրությունը նորից կենտրոնացնում են գործող իրավունքի աղբյուրների, հատ-

կապես՝ հռոմեական իրավունքի, հանգամանալի ուսումնասիրության վրա, որի յուրացման արագացած գործընթացը պահանջում էր հռոմեական իրավունքի դրույթների համաձայնեցում նոր պատմական պայմանների ու ազգային իրավունքի նորմերի հետ: Այդ ժամանակ սկսում են օգտագործվել հռոմեական իրավունքի աղբյուրների բանասիրական վերլուծության հնարքները, զարգանում են իրավունքի պատմական հասկացողության և մեկնաբանման սաղմերը:

Անգլիացի իրավագետ **Չեմրի Բրակտոնի** (մոտ. 1200 - մոտ. 1268) կարծիքով՝ «**օրենքի ուժ ունի այն, ինչ արդարաբար հաստատվել է և հավանության է արժանացել թագավորի կամ իշխանի բարձրագույն իշխանությանը, ավագանու խորհրդով ու համաձայնությամբ և պետության ընդհանուր հավանությամբ**»:

Միաժամանակ, ընդունված և գործող օրենքները պետք է բարձր լինեն միապետից և սահմանափակեն նրա իշխանությունը: Թագավորի պարտականությունն է ենթարկվել իրավունքին, քանզի գտնվում է «Աստծո և օրենքի ներքո»՝ ոչ թե թագավորներն են ստեղծում օրենքներ, այլ օրենքն է ստեղծում թագավորին: Թագավորը լոկ Աստծո փոխանորդն է: Իսկ իրավագիտությունը «աստվածային ու մարդկային իրողությունների» ճանաչումն է, գիտություն «արդարության և անարդարության մասին»¹⁵:

Ֆրանսիացի իրավագետ **Ֆիլիպ դը Բոմանուարը** (1250-1296) կայուն թագավորական իշխանությունը դիտում է իբրև քաղաքական միավորման, հասարակության իրավական կանոնակարգման, միասնության իրականացման գործոն: Նրա կարծիքով, «չի կարելի կնքել նոր պայմանագրեր, հաստատել նոր սովորույթներ առանց թագավորի թույլտվության»: Իրավունքի արժեքները հարգելը և պաշտպանելը նա համարում է քաղաքակիրթ հասարակության անհրաժեշտ պայման¹⁶:

Գերմանացի իրավագետ **Էյկե ֆոն Ռեպ-**

¹² Նույն տեղը:

¹³ Покровский И. А. Указ. соч. С. 198.

¹⁴ Այսպես, Բարտոլուսի (1314-1357) ծանոթագրությունները «դատարաններում օգտվում էին արտակարգ հեղինակությունից»: Իսպանիայում և Պորտուգալիայում դրանք թարգմանվեցին և անգամ դատարանների համար համարվում էին պարտադիր: Տես նույն տեղը՝ 199:

¹⁵ St'u Brakton H. On the laws and customs of England. Cambride (Massachusetts), 1968, vol. 2, p. 47-48.

¹⁶ St'u Beaumanoir Ph. de Customs de Beauvaisis: Texte eritique publie avec une intraduction, un glossaire et une tabel analitique par Am. Salmon. Paris, 1900, t, 2, p. 66-67.

կովը (մոտ. 1180 - մոտ. 1233)՝ «Սաքսոնական հայելու» հեղինակն է¹⁷: Հիմնական գաղափարներից են հասարակական խաղաղությունը, ավատատիրական երկպառակությունների սահմանափակման կամ դադարեցման անհրաժեշտությունը: Խաղաղությունը խախտողները պետք է խստորեն պատժվեն: Ավատատիրական երկպառակությունների կարևոր պատճառներից է եկեղեցու հավակնությունը՝ հասնելու քաղաքական իշխանության: Ֆոն Ռեպկովը, չնսեմացնելով Հռոմի պապի և եկեղեցու հեղինակությունը, ձգտում է պաշտպանել կայսերին և թագավորներին ինքնիշխանության նկատմամբ պապական կուրիայի (կառավարության) ուսնձգություններից, միաժամանակ պահպանելով աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փոխօգնության սկզբունքը:

Ընդսմին՝ ֆոն Ռեպկովը կայսեր անձը չի համարում անձեռնմխելի: Կայսեր իշխանությունը սահմանափակված էր իշխանների կայսրական համագումարով (ռայստագ) և կայսրական իշխանների իշխանությամբ, որոնք օժտված էին տարածքային գերակայության իրավունքով:

Նա ընդունում է իրավունքի անառարկելի հեղինակությունը, քանզի իրավունքի ստեղծողն ու երաշխավորը Աստված է. **«Աստվածն ինքը՝ իրավունք է»**: Իրավունքի աստվածային բնույթը ամենից առաջ նշանակում է ազատության գոյություն: Մարդու ճորտացման, ազատությունից զրկման ցանկացած ձև ոչ այլ ինչ է, քան իրավունքի բացասում:

Իրավունքը՝ որպես աստվածահաստատ ինստիտուտ ենթադրում է երկրում խաղաղության և սոցիալական համաձայնության առկայություն, ազատության ապահովում: Բացի այդ, ֆոն Ռեպկովը ոչ միայն թույլ է տալիս, այլև անհրաժեշտ է համարում հանուն իրավունքի պայքարը:

Գերմանացի իրավագետի կարևորագույն սկզբունքներն են. 1) իրավունքի և պարտականության միասնություն, 2) իրավունքի և սոցիալական հանրության միասնություն, որի համաձայն՝ մարդու իրավունքը պայմանավորված է որոշակի հանրության (դասային, մասնագիտական, տարածքային և այլն) մեջ նրա ներառվածությամբ: Ռեպկովի մոտ ուրվագծվում է բոլոր գերմանացիների համար ընդհանուր իրավունքի գաղափարը, 3) իրավուն-

քով օժտված է միայն նա, ով պատվասեր է և պահպանում է հավատարմությունը: Պատվազուրկ անձը միաժամանակ իրավազուրկ անձ է:

Ֆոն Ռեպկովն առաջադրում է կենտրոնական կայսերական իշխանության ամրապնդման գաղափարը՝ ի հակակշիռ ֆեոդալների սեպարատիստական (անջատողական, կենտրոնախույս) ձգտումների: Ինքնիշխան կայսերական իշխանությունը, իշխանները, պաշտոնական անձինք պարտավոր են, առաջին հերթին, հոգալ հպատակների բարօրության մասին, պահպանել անվտանգությունը, երաշխավորել խաղաղություն, հովանավորել արդարությունը: Իսկ եթե միապետը կամ իշխանները խախտում են իրենց պարտականությունները, հպատակների պարտքն է (ոչ միայն իրավունքը) նրանց դիմակայել:

Ֆոն Ռեպկովը պետական կազմակերպության լավագույն ձևը համարում է ընտրովի միապետությունը. «Գերմանացիները պետք է ընտրեն թագավորին՝ ըստ իրավունքի»։ Կայսրության, միապետների ինքնիշխանության կարևոր տարրը երաշխավորությունն է պապական վարչակազմի ուսնձգություններից: Նա ընդունում է «երկու սրերի» տեսությունը և այս դիրքերից մերժում գերմանական իշխանների վրա քաղաքական ազդեցություն ունենալու պապերի փորձերը. «Կայսերական իշխանները չպետք է ունենան որևէ այլ աշխարհիկ տեր, բացի թագավորից»։ Այդ պատճառով՝ նա պապական հրամանները հայտարարում է անվավեր, որոնք սահմանափակում են սաքսոնական իրավունքի նորմերը, «Պապը չի կարող հաստատել ոչ մի իրավունք, որը վատացներ մեր ավատական իրավունքը»:

Այսպիսով, վերլուծելով միջնադարյան իրավաբանների հայացքները իրավունքի և արդարության, բնական իրավունքի և պոզիտիվ իրավունքի հարաբերակցության հետ կապված հարցերի վերաբերյալ, կարելի է եզրակացնել, որ դրանք տեսական հիմք են հանդիսացել հետագա ժամանակաշրջանի մի շարք իրավական հայեցակարգերի և սկզբունքների, մասնավորապես՝ սոցիալական արդարության, իրավունքի (օրենքի) գերակայության գաղափարների ձևավորման ու զարգացման գործընթացում:

Արդարության մասին գաղափարներն իրենց զարգացումը գտան հումանիզմի դպրոցի ներկայացուցիչների երկրներում:

¹⁷ Стів Аксененок Г. А., Кикоть В. А. Автор «Саксонского зеркала» Эйке фон Репков.- В кн: Саксонского зеркала: Памятник, комментарии, исследование, М., 1985. с. 239-245.

ՄԱՍՆԱԳԵՏԻ ՀԱՏՈՒԿ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԳԻՐՆԵՐԸ

Արթուր ՉԱԽՈՅԱՆ

ԵՊՀ կրիմինալիստիկայի լաբորատորիայի վարիչ,
Իրավաբանական գիտությունների թեկնածու

Չնայած այն բանին, որ մասնագետների ինստիտուտը քրեական դատավարությունում գործում է ավելի քան քառասունհինգ տարի, իրականում պրակտիկ շփումները վկայում են, որ մասնագետների ներգրավվումը քննչական գործողություններին, այդ ընթացքում նրանց կողմից կիրառվող տեխնիկական միջոցների, ինչպես նաև նրանց առաջարկությունների ու դիտողությունների դատավարական ձևակերպումը առաջացնում են որոշակի դժվարություններ, ինչն առաջին հերթին բացատրվում է հատուկ գիտելիքների կիրառման հարցերի դատավարական ոչ լրիվ կարգավորմամբ: Այսպես, օրենքը նախատեսում է մասնագետների քննչական գործողություններին մասնակցելու միայն առանձին՝ անհրաժեշտ դեպքեր, իսկ մասնագետների գործունեությունը և արդյունքների ձևակերպումը օրենքով հստակ չի կարգավորվում: Այս փաստը որպես օրենսդրության բացթողում են համարել դատախազա-քննչական 100 հարցված աշխատողներից 43%-ը¹:

Մեր կարծիքով մասնագետների քննչական գործողություններին մասնակցելու և դրա արդյունքները հստակ ձևակերպելու իրավական դրույթները կարիք ունեն հետագա կատարելագործման: Ինչպես նշում է **Յու. Տ. Շումատովը**²՝ մասնագետների մասնակցության կարգն ու ձևերը քննչական գործողություններին հստակեցված չեն, ինչն առաջացնում է որոշակի դժվարություններ նրանց գիտելիքների պրակտիկ կիրառման և արդյունքների ձևակերպման հարցերում: Բացի այդ, կան տարածայնություններ նրանց դատավարական գործունեության նշանակության խնդրի վերաբերյալ, ինչպես նաև մասնագետների իրավունքների և պարտականու-

թյունների ընկալման տարբերությունների միջև²:

Այս ամենը կարևորվում ենք առավել ևս, երբ արդիական ենք համարում մասնագետների պարտադիր ներգրավվումը այն քննչական գործողություններին, որտեղ կարող են կիրառվել տեխնիկական միջոցներ: Իսկ տեխնիկական միջոցներ կիրառվում են գրեթե բոլոր քննչական գործողությունների իրականացման ընթացքում:

Թվում էր, թե քննիչների կողմից մասնագետներին քննչական գործողություններին չներգրավվելը պետք է որ նրանց ջանքերն ուղղեին տեխնիկա-կրիմինալիստիկական միջոցների և մեթոդների ինքնուրույն կիրառմանը, բայց, ինչպես նշում է

¹ Տե՛ս Зезьянов В. П. Роль, место и значение специальных знаний в криминалистике: Дис, ... канд. юрид. Наук, Ижевск. 1994, էջ 15:

² Տե՛ս Шуматов Ю. Т. Использование специальных познаний на предварительном следствии: Дис. ... канд. юрид. Наук, М, 1996, էջ 73:

Ա. Յա. Դուբինսկին՝ «Պետք է խոստովանել, որ քննչական պրակտիկայում գիտատեխնիկական միջոցները կիրառվում են ոչ բավարար, երբեմն ոչ արդյունավետ: Գիտատեխնիկական միջոցների ամենալայն կիրառումը անհրաժեշտ է դեպքի տեղի զննության ժամանակ, սակայն շատ քննիչներ չեն տիրապետում անհրաժեշտ գիտատեխնիկական միջոցների կիրառման ունակություններին, իսկ մասնագետներին քննչական գործողությունների իրականացմանը հաճախ չեն ներգրավում³»:

Օրինակ՝ ֆոտոաղյուսակները հիմնականում պատրաստվում և կցվում են միայն այն տեղազննության նյութերին, որոնց մասնակցել են մասնագետները: Մեր կողմից կատարված քրեական գործերի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նախաքննության ժամանակ մասնագետների մասնակցությամբ վերցված հետքերի, որպես իրեղեն ապացույցներ առգրավված առարկաների և հետքերի քանակը էապես ավելին է, քան այն իրավիճակներում, երբ քննչական գործողությունները կատարվել են միայն քննիչների կողմից:

Քանի որ ապացույցների ձեռքբերման և հանցագործության մեխանիզմի հստակ կանխորոշման համար քննիչի կողմից մասնագետին անհետաձգելի քննչական գործողություններին լայնորեն ներգրավելը ունի մեծ նշանակություն, ուստի քրեական դատավարության օրենսդրությունը պետք է զարգանա մասնագետների դերի բարձրացման ճանապարհով: Այդ պատճառով մասնագետների իրավական կարգավիճակի կատարելագործման համար

Վ. Ա. Պանյուշկինի արած առաջարկությունը հրատապ է, նաև նկատի ունենալով այն հանգամանքը, որ մասնագետ-կրիմինալիստները պետք է մեծամասամբ ներգրավվեն քննչական գործողություններին

այն պահին, երբ հանցագործության հետքերը համեմատաբար թարմ են և առկա է առավել բարենպաստ հնարավորություն նրանց հայտնաբերման և վերցման համար⁴:

Օրենսդիրը պետք է կանոնակարգի քննչական գործողություններին մասնագետների պարտադիր ներգրավման դեպքերը և ընձեռնի քննչական գործողությունների կատարման ընթացքում իրենց գործողությունների արդյունքներն ու որոշ հարցերի վերաբերյալ նրանց կարծիքը առանձին փաստաթղթում ձևակերպելու հնարավորություն: Ջարմանալի է, որ համաձայն գործող ՀՀ ՔԴՕ-ի, նույնիսկ դիակի զննության դեպքում մասնագետի (այդ թվում դատաբժշկության բնագավառի) մասնակցությունը պարտադիր չի համարվում:

Հարկ է նշել, որ գիտնականները նույնպես արտահայտել են կարծիքներ, որ քննչական գործողություններ իրականացնելիս մասնագետների ներգրավումը պետք է պարտադիր լինի: Այսպես, **Ե. Յա. Լոպուշնոյը** պնդում էր, որ մասնագետ-կրիմինալիստը պետք է պարտադիր մասնակցի դեպքի տեղի զննությանը, հատկապես այնպիսի քրեական գործերի քննության ընթացքում, որոնք ունենում են ծանր հետևանքներ. սպանություններ, ավտոճանապարհային պատահարներ, հրդեհի հետևանքով պետական կամ հասարակական ունեցվածքի ոչնչացում, այլ դժբախտ դեպքեր, որոնք առաջացել են անվտանգության տեխնիկայի կանոնների խախտման պատճառով⁵:

Մ. Ն. Շուխնինը առաջարկել է օրենսդրորեն ամրագրել դիակի զննությանը բացի դատաբժշկության բնագավառի մասնագետից, նաև մասնագետ-կրիմինալիստի պարտադիր մասնակցությունը⁶:

³ St'u Дубински А. Я. Производство предварительного расследования органами внутренних дел: Учеб. Пособие, Киев, 1987, էջ 45:

⁴ St'u Панюшкин В. А. Правовые основания использования достижений научно-технического прогресса в уголовном судопроизводстве: Автореф. дис... канд. юрид. Наук, Ленинград, 1980, էջ 19:

⁵ St'u Лопушной Е. Я. Участие специалиста-криминалиста в следственных действиях, Дис. ... канд. юрид. Наук, Алма-Ата, 1971, էջ 69-70:

⁶ St'u Шухнин М. Н. Применение технико-криминалистических и судебно-экспертных методов установления личности по неопознанному трупу при расследовании преступлений, Автореф. дис. ... канд. юрид. Наук, Саратов, 2000, էջ 15:

Մասնագետների՝ դեպքի տեղի զննությանը պարտադիր մասնակցելու անհրաժեշտությունը **Ս. Վ. Մատուսինսկու** կարծիքով հիմնավորվում է մի շարք հանգամանքներով: Նախ՝ իրեղեն ապացույցի նշանակություն ունեցող օբյեկտների շրջանակը մշտապես լայնանում է, դժվարանում է նրանց հավաքման, ֆիքսման և զնահատման աշխատանքը: Երկրորդ՝ մասնագետների ներգրավումը նշանակալիորեն ազդում է փաստացի տվյալների բացահայտման ամբողջականության, դրա որակի բարձրացման, հետևաբար անմիջապես դեպքի տեղում լուծվող հարցերի շրջանակի ավելացման վրա: Նրանից ուղղակի կախման մեջ է գտնվում և հետագայում հաստատված նախնական ենթադրությունների քանակը, որոնք առաջ են քաշվում տեղազննության ընթացքում և դրանից հետո՝ հիմնվելով բացահայտված փաստացի տվյալների վրա⁷:

Համաձայնվելով Ե. Յա. Լուպուշնոյի և Ս. Վ. Մատուսինսկու կարծիքների հետ, **գտնում ենք, որ նախնական քննության ընթացքում մասնագետների պարտադիր մասնակցության անհրաժեշտությունը չպետք է միայն սահմանափակվի մեկ քննչական գործողությամբ՝ դեպքի տեղի զննությամբ: ՔԳՕ-ով պետք է նախատեսվի նրանց պարտադիր մասնակցությունը նաև բոլոր քննչական գործողություններին, որտեղ անհրաժեշտ է տեխնիկական միջոցների և մեթոդների կիրառում, քանի որ մասնագետից լավ այն կարող է ինքնուրույն կիրառել միայն այդ ուղղությամբ լավ պատրաստված քննիչը, որը, ցավոք, ոչ միշտ է լինում:**

Ինչպես նշում է **Ա. Գ. Ֆիլիպովը**, նյութական իրավիճակի հետազոտումը ակ-

տիվ որոնողական գործողությունների տեսքով, այդ և այլ օբյեկտների բացահայտման նպատակով, հանդիսանում են դեպքի տեղի զննության և առգրավման հիմքը: Նյութական իրավիճակի հետազոտման ինքնուրույն տարրեր են համարվում նաև մի շարք այլ քննչական գործողություններ, ինչպիսիք են քննչական փորձարարությունը, առերեսումը⁸:

Յու. Տ. Շումատովի կարծիքով խուզարկության և առգրավման ժամանակ ծայրաստիճան կարևոր է մասնագետ-կրիմինալիստի մասնակցությունը, քանի որ այն թույլ է տալիս հասնելու խմբի ավելի նպատակաուղղված աշխատանքի, քանի որ նրա օգնությամբ կարելի է առավել ճշգրիտ որոշել որոնվող առարկայի ձևը և հնարավոր գտնվելու տեղը: Դա ձեռք է բերվում մասնագետների կողմից նախօրոք կատարված՝ որոնվող առարկաների նկարների և գծագրերի ուսումնասիրմամբ⁹: Գիշտ է նկատել նաև Յու. Տ. Շումատովը. չկա անհրաժեշտություն օրենքով հստակ ամրագրելու մասնագետի հնարավոր մասնակցության դեպքերը միայն նշված քննչական գործողություններին: Մասնագետը կարող է հրավիրվել քննչական գործողություններին ոչ միայն այն դեպքերում, որոնք նախատեսված են օրենքով, այլ նաև ցանկացած այլ դեպքում, երբ քննիչը դա անհրաժեշտ է համարում: Այս կապակցությամբ **Վ. Ա. Սերովը** անգամ առաջարկել է օրենքով ամրագրել, որ քննիչը իրավունք ունի մասնագետին ներգրավելու առանց բացառության՝ բոլոր քննչական գործողություններին¹⁰: Տվյալ մտածողության թերությունը, մեր կարծիքով, կայանում է նրանում, որ քննիչին իրավունք է վերապահում ինքնուրույն որոշել մասնագետի, այդ թվում նաև կրիմինալիստ-մասնա-

⁷ Տե՛ս Матусинский С. В. Использование специальных познаний для установления механизма происшествия, Ди. ... канд. юрид. наук, М., 1994, էջ 131:

⁸ Տե՛ս Филиппов А. Г. Общие положения тактики отдельных следственных действий // Уголовно-процессуальные и криминалистические проблемы правоприменительной деятельности, Межвуз. сб. науч. тр., Омск, 1989, էջ 164,

⁹ Տե՛ս Шуматов Ю. Т. Использование специальных познаний на предварительном следствии: Дис.... канд. юрид. Наук, М., 1996, էջ 68:

¹⁰ Տե՛ս Серов В. А. Использование научно-технических познаний и средств доказывании по уголовным делам: Дис. ... канд. юрид. Наук, М., 1979, էջ 183:

ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՀԱՐՑԵՐ

գետի քննչական գործողությանը մասնակցել-չմասնակցելու անհրաժեշտության հարցը: Հայտնի է, որ քննիչներից ոչ բոլորն են տիրապետում անհրաժեշտ գիտելիքների և ունակությունների. տեխնիկա-կրիմինալիստիկական միջոցների և մեթոդների կիրառմամբ իրականացնել որոնում, բացահայտում, ֆիքսում, հանցագործության նյութական հետքերի և այլ իրեղեն ապացույցների վերցնում: Սրանից ելնելով կարծում ենք, որ քրեադատավարական օրենսդրությունը պետք է հավասարակշռված մոտեցում ունենա մասնագետի քննչական գործողություններին պարտադիր և ոչ պարտադիր մասնակցելու հարցին: Նման հավասարակշռված մոտեցման օրինակ կարող է լինել քրեադատավարական օրենսդրության մեջ այն դրույթը, որը կամրազրի մասնագետների քննչական գործողություններին պարտադիր մասնակցությունն այն դեպքերում, եթե պետք է օգտագործվեն գիտատեխնիկական միջոցներ, որոնց կիրառումը ոչ մասնագետի կողմից վտանգ է պարունակում և ոչ էլ կարող է շրջապատին վնաս պատճառել: Տվյալ առաջարկությունը թեև հավասարակշռված մո-

տեցում է ցուցաբերում մասնագետի քննչական գործողություններին պարտադիր մասնակցելու հարցին, բայց, բացի շրջապատին վնաս կամ վտանգ պատճառելուց, այլ փաստեր, որոնք պահանջում են նրանց պարտադիր մասնակցությունը, հաշվի չեն առնվում: **Մեր կարծիքով, մասնագետի քննչական գործողություններին պարտադիր մասնակցության հարցը լուծելիս պետք է հաշվի առնել քննիչների տեխնիկա-կրիմինալիստիկական ունակությունների առկայության հարցը, ինչպես նաև տեխնիկա-կրիմինալիստիկական միջոցների և մեթոդների կիրառման հնարավորությունը՝ չկտրվելով քննչական գործողությունների ղեկավարումից:**

Պրակտիկ աշխատողների կարծիքը պարզելու նպատակով, թե որ քննչական գործողություններին է անհրաժեշտ մասնագետների պարտադիր մասնակցությունը, մեր կողմից քննիչների և փորձագիտական հաստատությունների աշխատակցիների շրջանում կատարվել է հարցում: Հարցվածների կարծիքները բաշխվել են հետևյալ կերպ՝

Քննչական գործողություններ	Քննիչներ, %-ով	Փորձագետներ, %-ով
Դեպքի տեղի զննություն	94	99
Խուզարկություն և առգրավում	52	67
Ճանաչման ներկայացնել	24	39
Քննչական փորձարարություն	63	81
Համեմատական հետազոտման համար նմուշների ստացում	64	79
Հարցաքննություն	27	34

Ինչպես տեսնում ենք, հարցվածների մեծամասնությունը կողմ է, որ դեպքի տեղի զննությանը, քննչական փորձարարությանը, խուզարկությանը և համեմատական հետազոտման համար նմուշներ վերցնե-

լու ժամանակ մասնագետների մասնակցությունը պարտադիր լինի:

Սակայն քննչական գործողության իրականացման վերահանձնարարումը մասնագետին անթույլատրելի է: Այդ

պատճառով մենք պաշտպանում ենք այն գիտնականների տեսակետը¹¹, որոնք կարծում են, որ մասնագետների դերի բարձրացումը նախաքննության ընթացքում չպետք է լինի քննիչի դերի պակասեցման հաշվին, քանզի վերջինս եղել և մնում է քննության ընթացքի և արդյունքի համար պատասխանատու անձ: Սակայն քննչական գործողություններին մասնակցող մասնագետի դատավարական իրավասության բարձրացման հարցը պահանջում է իր լուրջ ուսումնասիրությունը, քանզի քննիչը ոչ միշտ է կարողանում ճիշտ կողմնորոշվել տեխնիկա-կրիմինալիստիկական միջոցների և մեթոդների ճիշտ ընտրության և դրանց կիրառման հարցում, քանի որ, ինչպես նշում են գիտնականները, նա չունի բավարար գիտելիքներ տեխնիկա-կրիմինալիստիկական միջոցների և մեթոդների ճիշտ ընտրության և նրանց կիրառման հարցում, քանի որ չունի բավարար տեխնիկա-կրիմինալիստիկական պատրաստվածություն¹²:

Իրավաբանական գրականությունում փորձագետի և մասնագետի գործունեության տարբերակման, մասնագետի գործառնությունների ընդլայնման, նրանց իրականացման իրավական ձևի փոփոխության հարցերը մնում են ամենատարածվածները: Դա տեղի է ունենում պրակտիկ գործունեության պահանջով:

Իրավաբանական գրականությունում քննարկումների առիթ է հանդիսանում նաև այն հարցը, թե արդյոք հնարավոր և նպատակահարմար է մասնագետի գործունեության արդյունքները ձևակերպել առանձին դատավարական փաստաթղթով կամ մաս-

նագետը նույնպես իր հետևությունները շարադրի իր կողմից կազմվող եզրակացությունում, ինչպես՝ փորձագետը:

Համաձայն ՀՀ ՔԴՕ-ի՝ ի տարբերություն փորձագետի, մասնագետը եզրակացություն չի կազմում, նրա կարծիքը չի կարող հավասարվել փորձագետի եզրակացությանը: Սակայն, ինչպես արդեն ասել ենք, օբյեկտների նախնական հետազոտությամբ մասնագետը կարող է տեղեկություններ ներկայացնել հանցագործության կատարման հանգամանքների, հանցագործության գործիքների և այլ տվյալների մասին:

Մեր կարծիքով՝ դատավարական օրենքը պետք է պարունակի մասնագետների գիտելիքների կիրառման և արդյունքների ձևակերպման կարգը կանոնակարգող ավելի հստակ իրավական նորմեր: Այդ կապակցությամբ գտնում ենք, որ օրենսդիրը հանցագործությունների կանխարգելման, քննության և բացահայտման պրոցեսին մասնագետների մասնակցությանն ունեցած իր դիրքորոշումը պետք է փոխի և մասնագետն իր գործողությունների արդյունքների առանձին ձևակերպման հնարավորություն պետք է ունենա իր իսկ մտքերով, ոչ թե այդ ամենի մասին քննչական գործողությունների արձանագրություններում նշվեն քննիչի կողմից:

Ներկայումս նկատվում է քննիչների դատավարական գերբեռնվածություն: Ամբողջությամբ սա հանգեցնում է նրան, որ քննիչները պարտավոր են ղեկավարել քննչական գործողություններին մասնակցող սուբյեկտների աշխատանքը և ինքնուրույն իրականացնել հանցագործության

¹¹ Стів Махов В. И. Использование познаний сведущих лиц при расследовании преступлений// Проблемы предварительного следствия в уголовном судопроизводстве: Сб. науч. раб./ Под ред. Н.В. Жогина, М., ВНИИ Прокуратуры СССР, 1980, էջ 50, Крылов И. Ф. Судебная экспертиза в уголовном процессе, М., Изд-во ЛГУ, 1963, էջ 140, Порубов Н. И. Научная организация труда следователей, Минск, 1970, էջ 71-75, Орлов В. М. Экспертиза на предварительном следствии и прокурорский надзор за законностью ее проведения, Автореф. дис. ... канд, юрид. Наук, М, 1973, էջ 5, Дулов А. В. Процессуальные проблемы судебной экспертизы: Автореф. дис. ... канд. юрид. Наук, М., 1963, էջ 9, Давудов Ф. З. Процессуальные и организационно-методические формы использования возможностей науки и техники в целях расследования и профилактики преступлений, Автореф. ... дис. канд. юрид. Наук, Тбилиси, 1972, էջ 11:

¹² Стів Михайлов А. И., Соля-Серко А.А., Соловьев А. В. Научная организация труда следователя, М, 1974, էջ 78-80, Жалжский А. Э., Бахтин В. П. Эффективность тактических рекомендаций// Проблемы криминалистической тактики, Труды Омской высшей школы милиции, Омск, 1973, Вып. 16, էջ 42:

նյութական հետքերի որոնումը, բացահայտումը, ֆիքսումը և այլ իրեղեն ապացույցների ուսումնասիրումը: Բացի այդ՝ նրանք պարտավոր են նաև նշված գործողությունների ընթացքն ու արդյունքները ֆիքսել քննչական գործողություններ կատարելու մասին արձանագրություններում:

Քննիչների նման լայն լիազորությունները պայմանավորված է նրանով, որ քննիչը ոչ միայն հավաքում և ստուգում է գործին վերաբերող տվյալները, այլ նաև ֆիքսում է ստացված տվյալները և դրանց տալիս իրավական նշանակություն: Քննիչի դատավարական կարգավիճակը բազմապրոֆիլ է, որը քննչական գործունեության ընթացքում տեխնիկատակտիկական գործունեություն իրականացնելուն բացասաբար է անդրադառնում: **Ռ. Ս. Բելկինի** կարծիքով քննիչի դատավարական աշխատանքի նման կազմակերպումը հանգեցնում է նրան, որ քննիչը ստիպված է իր ուշադրությունը սևեռել և տեխնիկայի, և տակտիկայի վրա, որը հաճախ կատարվում է ի վնաս վերջինի, ինչը և վատ է անդրադառնում ամբողջ քննչական գործողությունների ընթացքի վրա:

Մեր կարծիքով, ավելի նպատակահարմար է, որ քննչական գործողության ընթացքում մասնագետն առանձին փաստաթղթում շարադրի իր գործողությունների և դրա արդյունքների մասին: Այլ հարց է, թե ինչ ապացուցողական ուժ կարող է ունենալ այդ փաստաթուղթը և ինչպես կանվանվի այն:

Այսպես, **Յու. Կ. Օրլովը** անթույլատրելի է համարում ձևակերպման այնպիսի տարբերակի ներմուծումը, ինչպիսին մասնագետի եզրակացությունն է¹³:

Ս. Ա. Վելիչկինի և Դ. Ա. Տուրչինի կարծիքով քննչական գործողությունների ավարտին մասնագետը պետք է կազմի առանձին դատավարական փաստաթուղթ և այդ փաստաթղթի կազմման իրավական հիմք պետք է ծառայի օրենքում ամրագրված այն դրույթը, ըստ որի մասնագետն իրավունք ունի արձանագրությանը կցելու ենթակա այնպիսի հայտարարություն անել, որը կապված կլինի ապացույցների հայտնաբերման, վերցման և ամրապնդման հետ, ինչպես նաև պարզաբանումներ տալ իր կողմից կատարված գործողությունների վերաբերյալ¹⁴:

Վ. Ն. Մախովի կարծիքով, նպատակահարմար է ՔԴՕ-ում կատարել լրացումներ, որոնք թույլ կտան իրազեկ անձանց ցուցմունքները դիտել որպես ապացույց¹⁵:

Մի խումբ տեսաբանների կարծիքով էլ մասնագետը նույնպես պետք է կազմի եզրակացություն և այդ եզրակացությունը պետք է համարել որպես ապացույցի ինքնուրույն տեսակ¹⁶:

Միևնույն ժամանակ չենք կարող համաձայնել այն տեսաբանների հետ, ովքեր գտնում են, որ մասնագետի գործունեության արդյունքները ոչ մի ապացուցողական նշանակություն չունեն¹⁷:

Մասնագետի գործունեության բոլոր արդյունքները ֆիքսվում են համապատասխան քննչական գործողության արձանագրություններում: Դրանով իսկ նրանք համարվում են քննչական գործողության արձանագրության որոշակի մասը, այսինքն «...մասնագետի օգնությամբ ստացված տվյալները կազմում են ապացույցների աղբյուրի օրգանական մասը¹⁸»:

¹³ Տե՛ս Орлов Ю. К. Производство экспертизы в угловном процессе, М., 1982, էջ 28:

¹⁴ Տե՛ս Величкин С. А., Турчин Д. А. Участие специалиста в производстве следственных действий, Проблемы борьбы с преступностью, Омск, 1976, էջ 93-100:

¹⁵ Տե՛ս Махов В. Н. Использование знаний сведущих лиц при расследовании преступлений, Монография, М., 2000, 296 էջ:

¹⁶ Տե՛ս Волинский А. Ф. Концептуальные основы технико-криминалистического обеспечения раскрытия и расследования преступлений, Дис., М., 1999, Пампушко И. П. Совершенствование правовых и организационных основ применения криминалистической техники в раскрытии преступлений, Дис., М., 1996, Лысов Н. Н. Справка специалиста как источник доказательств, // Актуальные проблемы обеспечения практики научно-техническими достижениями, Киев, 1987:

¹⁷ Տե՛ս Махов В. А. Участие специалиста в следственных действиях, М., 1975, էջ 3:

¹⁸ Տե՛ս Мельникова Э. Б. Участие специалистов в следственных действиях, М., Юридическая литература, 1964, էջ 66:

Հարկ է նշել, որ ՌԴ քրեական դատավարության օրենսգիրքը թույլ է տալիս մասնագետին տալու առանձին կարծիք, որն էլ հանդիսանում է ապացույցի առանձին տեսակ: Համաձայն ՌԴ գործող ՔԴՕ-ի 74-րդ հոդվածի 1-ին մասի 3.1. կետի՝ ապացույց են հանդիսանում ինչպես մասնագետի եզրակացությունը, այնպես էլ նրա ցուցմունքները: Իսկ 80-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն (կատարված փոփոխություն, որն ուժի մեջ է մտել 2003 թվականին)՝ մասնագետի եզրակացությունը, դա մասնագետի գրավոր կարծիքն է՝ կողմերի կողմից առաջադրված հարցերի վերաբերյալ:

Առաջարկում ենք քննչական գործողության շրջանակներում մասնագետին իրավունք վերապահել անցկացնելու գործի նյութերի ուսումնասիրություն, որն արտացոլում է գործի ընթացքը, և արդյունքները ամրագրել առանձին փաստաթղթում՝ մասնագետի կողմից տրվող տեղեկանքում, որն էլ պետք է հանդիսանանա քննչական գործողության արձանագրության պարզատիր և անբաժանելի մասը, քանի որ հիմնականում մասնագետի գործունեության հետազոտական ոլորտի հարցերը ծագում են՝ կապված, այսպես կոչված, որակյալ զննում անցկացնելու հետ:

Իրեղեն ապացույցների դերը, հատկապես սպանությունների գործերով, բարձրանում է՝ պայմանավորված կրիմինալիստիկական տեխնիկայի զարգացման առաջընթացով, որն այսօր թույլատրում է գտնել, ամրապնդել և որպես իրեղեն ապացույց օգտագործել այն, ինչը դեռ երեկ չէին կարող գտնել: Մասնագետի կողմից տրվելիք տեղեկանքը հատկապես արժեքավոր կլինի, երբ քննչական գործողության ընթացքում հայտնաբերվեն և զննվեն պատահական, թրջված, այրված և այլ վնասվածքով փաստաթղթեր: Եթե պատահական կամ այրված փաստաթղթերի ֆիքսումը և վերցնումը ընդհանուր առմամբ քննիչի ուժերի շրջանակում է, և նրանից պահանջում է միայն ժամանակ և որոշ ունա-

կություններ, ապա դրանց պահպանումը, փորձաքննության ուղարկելը և փորձագետին վերաբերելի և սպառիչ հարցեր առաջադրելը նպատակահարմար է կատարել մասնագետի կողմից՝ իր կողմից տրվող տեղեկանքում:

Մասնագետների կողմից տրվելիք տեղեկանքների դերը կբարձրանա նաև համեմատական հետազոտման համար մոուլցներ վերցնելու ժամանակ, քանի որ համապատասխան փորձաքննություն կատարելու համար իրերի անբավարար նախապատրաստումը, այդ թվում նաև համեմատական հետազոտում կատարելու համար մոուլցների ստացումը, փորձագետին առաջադրվող հարցերի սխալ կամ ոչ սպառիչ ձևակերպումը հանգեցնում են նախաքննության ժամկետների ձգձգման:

Ա. Ռ. Շլյախովը նշում է. «Երբ քննիչը համեմատական հետազոտման համար ներկայացնում է քիչ համեմատական մոուլցներ կամ դրանց վերցնելը կատարվել է տեխնիկական կանոնների խախտմամբ, կամ հարցերը սխալ են ձևակերպվել, ապա այն դժվարացնում է փորձաքննության անցկացումը, իսկ մի շարք դեպքերում փորձագետին հնարավորություն չի տալիս որոշակի ենթադրություններ կատարել¹⁹»:

Վ. Ն. Մախովը նշում է, որ «նկատվում են դեպքեր, երբ քննիչները փորձաքննություն կատարելու համար փորձագիտական հիմնարկներ նյութեր ուղարկելիս չեն ուղարկում հետազոտման համար անհրաժեշտ մոուլցներ, կամ հակառակը, ուղարկում են մեծ քանակի անպետք մոուլցներ կամ առարկաներ²⁰»:

Իրոք, գտնվելով դեպքի տեղում և հնարավորություն ունենալով առանձին տեղեկանք տալու՝ մասնագետները հնարավորություն կունենան որակապես ապահովել համեմատական իրերի հավաքումը (այդ թվում մոուլցներ և այլն), իրենց կողմից տրված տեղեկանքներում առավել հստակ և սպառիչ ձևակերպելու փորձագետին առաջադրվող հարցերը: Այսինքն մասնագետներն ավելի մեծ պատասխանատվությամբ

¹⁹ Տե՛ս Шляхов А. Р. Теория и практика криминалистической экспертизы // Вопросы криминалистики, М., 1962, N 9, էջ 43:

²⁰ Տե՛ս Махов В. Н. Участие специалистов в следственных действиях, М, 1975, էջ 73:

կվերաբերվեն իրենց պարտականություններին: Այդ կապակցությամբ Ե. Յա. Լոպուշնոյը նշել է, որ կրիմինալիստիկական համեմատական հետազոտում կատարելու նպատակով քննիչների կողմից սխալ նմուշներ վերցնելու կամ փորձագետին սխալ հարցեր առաջադրելու անցանկալի հետևանքներից կարելի է խուսափել միայն քննիչների կողմից փորձաքննության ուղարկվող նյութերի նախապատրաստման ժամանակ այդ մասին մասնագետներից գրավոր փաստաթուղթ վերցնելով²¹:

Նման տեսակետը պաշտպանում է նաև **Վ. Ա. Ժբանկովը**, ով գրում է. «**Ամեն դեպքում, տիրապետելով համապատասխան գիտելիքների, նմուշների ստացումը և փորձաքննության ենթակա հարցերի ձևակերպումը մասնագետը ավելի լավ է կատարում քան քննիչը**²²»:

Հայտնի է նաև, որ տեղագնության վերջին՝ ավարտական փուլում, մասնագետը պարտավոր է հայտնել քննիչին վերցված նյութական հետքերի ու այլ իրեղեն ապացույցների տեղափոխման ու պահպանման պայմանների մասին: Քննիչին նաև «հուշում» են, թե ինչպիսի կրիմինալիստիկական փորձաքննություններ են անհրաժեշտ նշանակել և ինչպիսի հարցեր պետք է առաջադրել փորձագետին:

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ քննչական գործողությունների ավարտին մասնագետի կողմից տեղեկանքի կազմումը զգալի առաջընթաց կգրանցի ինչպես հանցագործությունների քննության ժամկետների, այդ ընթացքում հատուկ գիտելիքների կիրառման արդյունավետության առումներով, այնպես էլ քննիչին ազատելով լրացուցիչ գերբեռնվածությունից, հնարավորություն կտա կենտրոնանալու քննչական գործողությունների կատարման առավել առանցքային հարցերի վրա (պլանավորման, վարկածների առաջադրման, մասնակիցների հրահանգավորման և այլն): Քանի որ քննիչը չունենալով բա-

վարար գիտելիքներ տեխնիկա-կրիմինալիստիկական միջոցների և մեթոդների ճիշտ ընտրության և նրանց կիրառման հարցում, չունենալով բավարար տեխնիկա-կրիմինալիստիկական պատրաստվածություն, զուր ժամանակ պետք է անցկացնի դրանց կիրառման և, արձանագրությունների կազմման համար: Մասնավաճ, որ ներկայումս նկատվում է քննիչների դատավարական գերբեռնվածություն:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ առաջարկում ենք ՀՀ ՔՂՕ-ում կատարել փոփոխություն, համաձայն որի այն քննչական գործողության ավարտին, որտեղ կարող են կիրառվել տեխնիկա-կրիմինալիստիկական միջոցներ, մասնագետի կողմից տեղեկանքի կազմումը պետք է պարտադիր լինի, ինչն էլ պետք է հանդիսանա տվյալ քննչական գործողության արձանագրության անբաժանելի մասը: Իսկ տեղեկանքում պետք է մանրամասն շարադրվեն, թե տվյալ քննչական գործողության ժամանակ ինչպիսի տեխնիկական միջոցներ են կիրառվել, որտեղից և ինչ հետքեր ու այլ իրեղեն ապացույցներ են հայտնաբերվել, ինչպիսի նմուշներ են վերցվել, վերցված հետքերն ինչպես են փաթեթավորվել, փորձաքննության ինչ տեսակ և ենթատեսակ պետք է նշանակել, փորձագետին ինչ հարցեր պետք է առաջադրել, քննիչի կամ քննչական գործողության մասնակիցների կողմից ինչ հարցեր են առաջադրվել, մասնագետի կողմից դրանց ինչ պատասխաններ է տրվել, ապացույցների հայտնաբերման, վերցման և ամրապնդման հետ կապված մասնագետի կողմից ինչ հայտարարություններ կան, ինչպես նաև մասնագետի պարզաբանումները իր կողմից կատարված գործողությունների վերաբերյալ:

²¹ Ст'ю Лопушной Е. Я. Участие специалиста-криминалиста в следственных действиях: Дис. ... канд. юрид. наук, Алма-Ата, 1971, էջ 162:

²² Ст'ю Жбанков В. А. Образцы для сравнительного исследования в уголовном судопроизводстве: Учеб. пособие / Под ред. Р.С. Белкина, М., 1969, էջ 16:

ԴԱՏԱԿԱՆ ԴՐԱԿՏԻԿԱՆ՝ ՈՐՊԵՍ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐ

Տիգրան ԹՈՐՈՍՅԱՆ

Չայցորդ

Վերջին տասնամյակում դատական նախադեպի և պրակտիկայի՝ որպես իրավունքի աղբյուրների հիմնախնդիրը քննարկվում է գիտական շրջաններում և գրականության մեջ: Իրավական համակարգում դրանց դերի հարցերը հրատապ են առ այսօր: Տպագրվում են մենագրություններ, գիտական հանդեսներում լույս են տեսնում հոդվածներ, պաշտպանվում են ատենախոսություններ¹:

Արդարացի կլիներ նշել, որ իրավական համակարգում դատական պրակտիկայի դերի մասին հարցը քննարկվել է դեռ խորհրդային իրավագիտության կողմից: Այսպես, Ս. Ն. Բրատուսը և Ա. Բ. Վենգերովը առաջ էին քաշել դրույթ, ըստ որի «դատական պրակտիկան որպես դատական գործունեության արդյունք իրավական նորմերի մեկնաբանման արդյունքն է, որոնք կիրառվում են դատարանի կողմից կոնկրետ գործերի կարգավորման ժամանակ: Այդ արդյունքները բացահայտում և խորացնում են կիրառվող նորմի բովանդակությունը, կոնկրետացնում այն ինքնատիպ նորմատիվ բնույթ ունեցող որոշակի դրույթների՝ իրավադրույթների ձևով»² և հեղինակների կողմից ճանաչվում որպես իրավունքի աղբյուրներ:

Հարցը, թե արդյոք դատական պրակտիկան (դատական նախադեպը) հանդիսանում է իրավունքի աղբյուր (ձև), միանշանակ պատասխան չունի: Գիտության մեջ ձևավորվել են մի քանի մոտեցումներ: Որոշ հեղինակներ դատական պրակտիկան (դատական նախադեպը) համարում են իրավունքի աղբյուր: Այսպես, **Տ. Ն. Նեշատանան** գրում է, որ մայրցամաքային ցանկացած իրավական համակարգում, նախադեպը այս կամ այն ձևով միշտ եղել է իրավունքի աղբյուր, օրինակ՝ նույնության ժամանակ օրենքի և իրավունքի կիրառման դեպքերում³: Համանման

կարծիք է հայտնել նաև **Վ. Մ. Ժուլյովը**, ով ՌԴ Գերագույն դատարանի նախագահության որոշ որոշումներում ամրագրված դատական պրակտիկան համարել է իրավունքի աղբյուր⁴: **Ն.Վ. Վիտրուկի** կարծիքով՝ որպես իրավունքի աղբյուր պետք է դիտել ՌԴ Սահմանադրական դատարանի որոշումները⁵:

Մյուս գիտնականները նույնքան կտրուկ չեն իրենց կարծիքներում: Ուշադրության է արժանի **Լ. Ա. Մորոզովայի** մոտեցումը, ով սահմանազատում է «իրավունքի ձև» և «իրավունքի աղբյուր» հասկացությունները՝ վերջինս սահմանելով որպես այն սոցիալա-

¹ Տե՛ս Морозова Л. А. Еще раз о судебной практике как источнике права // Государство и право. 2004. N 1; Лозовская С. В. Правовой прецедент: вопросы теории и практики: Автореф. Дис канд. юрид. Наук. Екатеринбург, 2005.

² Братусь С. Н., Венгерова А. Б. Понятие, содержание и форма судебной деятельности. М., 1975. С. 16-17.

³ Нешатаева Т. Н. Международный гражданский процесс: Учебное пособие. М., 2001. С. 65.

⁴ Жуйков В. М. Судебная защита прав граждан и юридических лиц. М., 1997. С. 189.

⁵ Витрук Н. В. Конституционное правосудие в России (1991-2001 гг.): Очерки теории и практики. М., 2001. С. 73.

կան գործոններն ու իրականության երևույթները, որոնք հինք են ծառայում իրավական նորմերի առաջացման համար⁶:

Հեղինակը համարում է, որ այս մոտեցմամբ «դատական պրակտիկան արժանի է դառնում ճանաչվելու որպես իրավունքի աղբյուր»⁷ և անկախ այդ փաստի պաշտոնական ճանաչումից՝ դատական պրակտիկան «իրապես առաջ է բերում իրավական նոր նորմեր՝ դրանով իսկ դառնալով իրավագոյացության յուրատեսակ աղբյուր՝ հանդես գալով որպես պատասխան ռեակցիա հասարակական նոր հարաբերությունների առաջացմանը»⁸:

Համանման դիրքորոշում ունի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների նկատմամբ նաև **Վ. Ա. Կանաշևսկին**: Հիմնվելով իրավունքի աղբյուրների (ձևերի) և իրավակարգավորիչների սահմանազատման մասին համընդհանուր տեսական դրույթների վրա՝ նա կարծում է, որ եվրոպական դատարանի որոշումները, ինչպես նաև եվրոպական դատարանի կողմից Մարդու իրավունքների կոնվենցիայի և նրա Արձանագրությունների մեկնաբանման պրակտիկան ազգային իրավական համակարգում կարող են դիտվել միայն որպես իրավակարգավորիչներ, բայց ոչ որպես իրավունքի աղբյուրներ (ձևեր)⁹:

Գիտնականների երրորդ խումբը դատական պրակտիկան ընդհանրապես չի ընդունում որպես իրավունքի աղբյուր և դատական իշխանությունների ակտերը դիտում է բացառապես որպես իրավակիրառիչ կամ որպես իրավունքի մեկնաբանման ակտեր:

Կարծում ենք, որ այս խրթին ու բարդ հարցի լուծման համար անհրաժեշտ է սկզբունքորեն պարզել «իրավունքի աղբյուր (ձև)» հասկացությունը:

Իրավունքի աղբյուր ասելով՝ իրավագիտության մեջ ավանդաբար հասկանում են պետության կողմից ծագող կամ նրա կողմից ճանաչվող իրավունքի նորմերի արտահայտման և ամրագրման պաշտոնական եղանակներ, դրանց իրավաբանական, համընդհանուր պարտադիր նշանակություն տալը¹⁰: Իրավունքի աղբյուրի նման ընկալումը, որը նույնացվում է «իրավունքի ձև» հասկացության հետ, կոչվում է «նեղ», քանի որ գրականության մեջ «իրավունքի աղբյուրը» կիրառվում է նաև լայն առումով:

Այսպիսով, **հարցը, թե արդյոք դատական պրակտիկան հանդիսանում է իրավունքի աղբյուր (ձև), կարող է լուծվել կախված այն բանից, թե արդյոք այն բովանդակում է իրավունքի նորմեր, այսինքն՝ վարքի համընդհանուր պարտադիր կանոններ, որոնք նախատեսված են բազմակի կիրառման համար, և արդյոք այն ճանաչվում է այդպիսին «պաշտոնապես», այսինքն՝ պետության կողմից**: Ուստի ճիշտ է **Վ. Ա. Կանաշևսկին**, ով նշում է, որ «դատական որոշումներում կամ դատական բարձրագույն ատյանների ամփոփագրերում որպես իրավական նորմ բովանդակվող կանոնի որակավորման համար ինչ հինքեր էլ ունենա իրապես գոյություն ունեցող պրակտիկան, նախադեպը որպես իրավունքի աղբյուր ճանաչելու կամ չճանաչելու գործում վճռորոշ խոսքը մնում է օրենսդիրին»¹¹:

Իսկ ի՞նչ է նշանակում որպես իրավունքի աղբյուր (ձև) դիտվող դատական պրակտիկա հասկացությունը:

Լայն առումով դատական պրակտիկան ներառում է դատական իշխանությունների ակտերի ողջ ամբողջությունը: Նեղ մոտեցման կողմնակիցները համարում են, որ դատական պրակտիկան «միևնույն տեսակի գործերի վերաբերյալ դատարանների բազմակի միատեսակ որոշումն է»¹², որը ներառում է միայն դատական որոշումները, դատական բարձրագույն ատյանների ղեկավար պարզաբանումները, որոնք ձևավորում են իրավադրույթներ: Այս առումով դատական պրակտիկան ներառում է դատական պրակտիկայի հարցերի վերաբերյալ բարձրագույն

և ամրագրման պաշտոնական եղանակներ, դրանց իրավաբանական, համընդհանուր պարտադիր նշանակություն տալը¹⁰:

Իսկ ի՞նչ է նշանակում որպես իրավունքի աղբյուր (ձև) դիտվող դատական պրակտիկա հասկացությունը:

⁶ Морозова Л. А. Նշվ. աշխ., էջ 19.

⁷ Նույն տեղում, էջ՝ 20:

⁸ Նույն տեղում, էջ՝ 23:

⁹ Канашевский В. А. Прецедентная практика Европейского Суда по правам человека как регулятор гражданских отношений в Российской Федерации \ \ Журнал российского права. 2003. N 4. С. 126:

¹⁰ Алексеев С. С. Право. Опыт комплексного исследования. М., 1999. С. 76; Общая теория государства и права. Академический курс: В 3 т. \ Отв. Ред. М. Н. Марченко. М., 2001. Т. 2. С. 230:

¹¹ Канашевский В. А. Նշվ. աշխ., էջ 125.

¹² Гражданское право \ Под ред. А. П. Сергеева и Ю. К. Толстого. М., 1996. Т. 1. С. 36.

դատարանների որոշումներում բովանդակվող իրավական դիրքորոշումները, դատարանների որոշումները կոնկրետ գործերի վերաբերյալ, որոնք պարունակում են սկզբունքային հարցերի վերաբերյալ օրենքի մեկնաբանություն կամ կարգավորիչ նոր դրույթներ: Իրավունքի աղբյուրի դերի կարող են հավակնել նաև նորմատիվ-իրավական ակտերի վիճարկման մասին ընդհանուր և արբիտրաժային դատարանների որոշումները, սահմանադրական դատարանների որոշումները, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումները:

Այսպես, ՌԴ գերագույն դատարանի նախագահության որոշումների վերաբերյալ **Վ. Ս. Ժուլյովը** նշում է, որ դրանք նորմատիվային են, պարտադիր, արտարկտ, ենթակա են բազմակի կիրառման և ինքուրույն են¹³: Սակայն որոշումները իրավունքի աղբյուր ճանաչելու ղեմ համղես եկողները (**Ա. Ս. Պիզովին, Ս. Կ. Ջագայնովա, Վ. Յու. Սուլովյով**) համարում են, որ այդ դեպքում դատարանը տալիս է միայն գործող օրենսդրության մեկնաբանությունը, ստորադաս դատարաններին բացատրում է այս կամ այն օրենսդիր ակտի կիրառման պրակտիկան: Գերագույն դատարանի նախագահության որոշումները չունեն ինքնուրույն նշանակություն և համապատասխանաբար չեն կարող կիրառվել առանձին՝ մեկնաբանվող ակտից անջատ¹⁴: Բացի այդ, **Վ. Յու. Սուլովյովը** համարում է, որ որոշումները համընդհանուր պարտադիր չեն, տարածվում են սահմանափակ թվով սուբյեկտների վրա¹⁵: Կարծում ենք՝ երկրորդ դիրքորոշումն առավել հիմնավորված է:

Սկզբունքային հարցերի շուրջ դատարանների այն որոշումները, որոնք հաճախ պարունակվում են բարձր և միջին օղակների դատարանների դատական պրակտիկայի ամփոփագրերում, որոշ գիտնականներ նույնպես համարում են իրավունքի աղբյուր (ձև): Իրականում դրանք կարող են բովանդակել ընդհանուր բնույթի կանոն, այլ դատարաններ հետևում են այդ որոշումներին և գործնականում դրանցից չեն հեռանում, հնարավոր է նաև յուրատեսակ պատժամիջոց՝ ի դեմս վերադաս դատարանի կողմից որոշումը չեղյալ հայտարարելու, դրանք կապված են կոնկրետ գործի հետ: Դատական

պրակտիկայի այս տարրը ավելի շատ հիշեցնում է դատական նախադեպ, որն իրենից ներկայացնում է որոշում կոնկրետ գործի վերաբերյալ: Իսկ այդ որոշումը պարունակում է դրույթներ, որոնք պարտադիր են նմատատիպ գործերի կարգավորման համար հետագայում, բացի այդ ճանաչվում է իրավունքի աղբյուր (ձև) անգլոսաքսոնական երկրների իրավական համակարգի դոկտրինայի և պրակտիկայի կողմից:

Սակայն այստեղ բացակայում է «իրավունքի աղբյուր (ձև)» հասկացության երկրորդ բաղկացուցիչ տարրը՝ օրենքի կողմից դրա՝ այդպիսին պաշտոնապես ճանաչելը: Այսպես, կոնկրետ գործերով որոշումները, եթե նույնիսկ դրանք պարունակում են նորմատիվ բնույթի դրույթներ, նմանատիպ գործեր քննող դատարանների համար պարտադիր չեն:

Իրավաբանական բնույթի առանձնահատկությունների՝ նորմատիվային ամրագրման միջոցով պաշտոնապես համընդհանուր պարտադիր են ճանաչված ՀՀ Սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումները: Համընդհանուր պարտադիր լինելու որոշակի տարրեր դրված են նաև ընդհանուր իրավասության և արբիտրաժային դատարանների այն որոշումների մեջ, որոնք վերաբերում են նորմատիվային իրավական ակտերն ամբողջովին կամ մասնակիորեն չգործող ճանաչելուն:

ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումները նորմատիվային ակտի կամ առանձին նորմերի՝ Սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ հիմք են հանդիսանում նորմատիվային ակտի կամ իրավունքի նորմի փոփոխման, չեղյալ հայտարարելու կամ նորը ընդունելու համար, ունեն ընդհանուր բնույթ, համընդհանուր պարտադիր են, գործում են անմիջապես և չեն պահանջում հաստատում կամ վավերացում որևէ մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից, այսինքն՝ ունեն նորմատիվության հատկանիշներ: Այս պատճառով որոշ գիտնականներ դրանք համարում են իրավունքի աղբյուր (ձև):

Սակայն Վ. Ս. Ներսեսյանցը համարում է, որ ՌԴ Սահմանադրական դատարանի

¹³ Судебная практика как источник права. М., 2000. С. 24.

¹⁴ Пиголкии Л. С. Толкование норм права и правотворчество: проблемы соотношения \ \ Закон: создание и толкование. М., 1998. С. 70.

¹⁵ Соловьев В. Ю. Судебная практика по гражданским и уголовным делам в Российской Федерации. М., 2003.

որոշումները նորմատիվային ակտի կամ առանձին նորմերի՝ Սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ զուտ իրավակիրառիչ են, քանի որ չեղյալ չեն հայտարարում ոչ սահմանադրական ակտերը, այլ միայն ճանաչում են դրանք կիրառման ոչ ենթակա և միայն այդ կարգավիճակում են պարտադիր¹⁶: Նույն դիրքորոշումն ունի նաև Օ. Ե. Կուտաֆինը, ով նշում է, որ ՌԴ Սահմանադրական դատարանի որոշումները միայն կիրառում են սահմանադրական նորմերը սահմանադրական իրավական ակտերի կամ առանձին նորմերի նկատմամբ, դրանով իսկ արձանագրելով վերջիններիս համապատասխանությունը Սահմանադրությանը: Այն փաստը, որոնք դրանք կիրառման համար պարտադիր են, ունի նույնպիսի բնույթ, ինչպիսին ունեն նորմատիվային բնույթ չունեցող բոլոր մյուս իրավական ակտերի պարտադիր լինելը¹⁷:

Դժվար է չհամաձայնել հեղինակավոր գիտնականների փաստարկների հետ: Այնուամենայնիվ. հայտնի է, որ նորմատիվային կարգավորումը տարբերվում է անհատականից (մասնավորապես՝ իրավակիրառումից) նաև իր պարտադիր լինելու բնույթով: Անհատական (իրավակիրառիչ) ակտը պարտադիր է կոնկրետ հասցեատիրոջ համար, իսկ նորմատիվային ակտը համընդհանուր պարտադիր է: ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումների համընդհանուր պարտադիր լինելը սահմանված է օրենքով և այն դժվար է ամոտեսել, առավել ևս հավասարության նշան դնել նման որոշման պարտադիր լինելու և ցանկացած այլ իրավակիրառիչ ակտի պարտադիր լինելու միջև: Ամրացած դոկտրինայի համաձայն՝ իրավակիրառիչ ակտը սահմանում, փոխում կամ չեղյալ է հայտարարում կոնկրետ անձնաց իրավունքներն ու պարտականությունները, այնինչ նորմատիվային բնույթի ակտը վարքի կանոններ է սահմանում մարդկանց անորոշ շրջանակի համար: Իրավակիրառիչ ակտը «սպառվում է» մեկանգամյա կիրառմամբ, իսկ նորմատիվային ակտը ունի բազմակի կիրառում և գործում է անկախ այն բանից՝ առաջացել, թե դադարեցվել են ակտով նախատեսված կոնկրետ

իրավահարաբերությունները: Նորմատիվային ակտի սահմանադրականության մասին Սահմանադրական դատարանի որոշումը ունի նորմատիվության բոլոր հատկանիշները և հակառակը՝ նրան բնորոշ չեն իրավակիրառիչ ակտի վերը նշված հատկանիշները:

Ուստի ճիշտ է **Լ. Ա. Մորոզովան**, ով գրում է, որ հակասահմանադրական ճանաչված ակտը, եթե անգամ չեղյալ չհայտարարվի համապատասխան մարմնի կողմից, դադարեցնում է իր գործողությունը և ոչ մի այլ մարմին կամ պաշտոնատար անձ չի կարող հղում կատարել նման ակտի կամ դրանով հիմնավորել իր որոշումը¹⁸: Սահմանադրական դատարանի որոշումը, որի արդյուքում ակտը կամ նրա առանձին դրույթները կորցնում են ուժը, հանգեցնում է դրանց վերացմանը իրավական համակարգից, փաստացի չեղյալ հայտարարվում, դրանով իսկ փոփոխությունների հանգեցնելով նորմատիվային-իրավական տիրույթում, հետևապես իրավունքի սուբյեկտների իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության իրականացման մեջ, այսինքն՝ թողնում են իրավակարգավորիչ ազդեցություն հասարակական հարաբերությունների վրա¹⁹:

Ոչ միանշանակ գնահատականներ կան նաև Սահմանադրական դատարանի այլ որոշումների նկատմամբ (Սահմանադրության մեկնաբանման վերաբերյալ և իրավասության մասին վեճերի վերաբերյալ գործերի դեպքում): Չափազանց հստակ է արտահայտվում **Մ. Կ. Բազալյը**: Նրա կարծիքով՝ «սահմանադրական իրավունքի աղբյուրների թվին են պատկանում ՌԴ Սահմանադրական դատարանի այն որոշումները, որոնք սահմանում են Դաշնության սուբյեկտների սահմանադրությունների և կանոնադրությունների, օրենքների և այլ նորմատիվային ակտերի համապատասխանությունը Ռուսաստանի Սահմանադրությանը, ինչպես նաև կարգավորում են իրավասության մասին վեճերը, մեկնաբանում Սահմանադրությունը»²⁰:

Քննվող գործերի վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումները իրավունքի աղբյուր (ձև) ճանաչելը հիմնվում է այն բանի վրա, որ դրանց կարգավորման ըն-

¹⁶ Судебная практика как источник права. М., 1997. С. 34, 40.

¹⁷ Кутафин О. Е. Источники конституционного права Российской Федерации. М., 2002. С. 145.

¹⁸ Морозова Л. А. Նշվ. աշխ., էջ 22.

¹⁹ Лазарев Л. В. Правовые позиции Конституционного Суда России. М., 2003. С. 53.

²⁰ Баглай М. В. Конституционное право Российской Федерации. М.: Норма, 1999. С. 27.

թացքում ՀՀ Սահմանադրական դատարանը ձևավորում է իրավական դիրքորոշումներ, որոնք որոշումների հետ միասին կրում են համընդհանուր պարտադիր բնույթ:

Սահմանադրական դատարանի իրավական դրույթների իրավաբանական բնույթի հարցը իրավաբանական գիտության առավել քննարկվող խնդիրներից մեկն է: Սահմանադրական դատարանի որոշումներում ամրագրված իրավական դրույթները, որոնք պարունակում են սահմանադրական նորմերի մեկնաբանություն կամ պարզաբանում են օրենքի սահմանադրական-իրավական իմաստը, հանդիսանում են նրա որոշումների էությունը, միջուկը, դրանց վրա են հիմնվում ՀՀ Սահմանադրական դատարանի ամփոփիչ եզրակացությունները՝ նրա որոշումների եզրակախիչ մասում:

Ն. Վ. Վիրտուկը Ռուսաստանի Ղաշնուքյան Սահմանադրական դատարանի իրավական դրույթները դիտում է որպես «Ռուսաստանի Ղաշնուքյան Սահմանադրական դատարանի ընդհանուր բնույթի իրավական պատկերացումներ (եզրակացություններ), որպես Ռուսաստանի Ղաշնուքյան Սահմանադրական դատարանի կողմից Ռուսաստանի Ղաշնուքյան Սահմանադրության մեկնաբանման արդյունք և նրա կողմից օրենքների և այլ նորմատիվային ակտերի սահմանադրական իմաստի հայտնաբերում Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակներում, որոնք վերացնում են սահմանադրա-իրավական անորոշությունը և ծառայում որպես իրավական հիմնավորում Ռուսաստանի Ղաշնուքյան Սահմանադրական դատարանի վերջնարդյունքային որոշումների համար»²¹:

Առավել ճշգրիտ է ներկայանում **Լ. Վ. Լազարևի** դիրքորոշումը: Մասամբ համաձայնելով **Ն. Վ. Վիրտուկի** հետ՝ **Լ. Վ. Լազարևը** նշում է, որ նրա տված սահմանումը բավարար չէ իրավական դրույթ հասկացությունը բացահայտելու համար²²: Իսկապես, իրավական դրույթի սահմանումը դոկտրինալ կատեգորիայի միջոցով (իրավական պատկերացումներ), որը միայն նրա նախատիպն է, չի բացահայտում այդ երևույթի, էությունը: Ղրա համար Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները նա դիտում է որ-

պես նորմատիվային- ինտերպրետացիոն սահմանումներ, որոնք հանդիսանում են դատական սահմանադրական մեկնաբանման արդյունք, Սահմանադրական դատարանի վերջնարդյունքային որոշման իրավական հիմք և ունեն ընդհանուր և պարտադիր բնույթ: Իրավական դրույթների նորմատիվությունը դրսևորվում է նրանում, որ դրանք հանդիսանում են ընդհանուր և հրամայական բնույթի պաշտոնական որոշումներ²³:

Մինչդեռ նրանք, ովքեր չեն ճանաչում Սահմանադրական դատարանի իրավաստեղծ լիազորությունները, համարում են, որ սահմանադրական նորմերը մեկնաբանելիս կամ օրենքի սահմանադրական-իրավական իմաստը պարզելիս Սահմանադրական դատարանը իրավունքի նոր նորմեր չի ստեղծում: Մեկնաբանման ընթացքում իրավունք չի ստեղծվում՝ գրում է **Օ. Ե. Կուտաֆինը**, այլ միայն պարզվում է, սահմանվում է պետական կամքը, որն արտահայտվում է նորմատիվային ակտով: Կարևոր է հստակ սահման անցկացնել արդեն գոյություն ունեցող նորմերի պարզաբանման և իրավական նոր որոշումների ստեղծման միջև²⁴:

Ինչպես արդեն նշել ենք վերևում, իրավունքի մեկնաբանման ակտը ուղղակի իմաստով չպետք է պարունակի իրավունքի նորմ, հետևաբար չի կարող դիտվել որպես իրավունքի աղբյուր (ձև): Սակայն Սահմանադրական դատարանի որոշումների նկատմամբ չի կարելի արտահայտվել նման կտրուկ ձևով: ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումների վերլուծությունը իրավական դրույթներ գտնելու համար ցույց է տալիս, որ մի շարք դեպքերում իրավական դիրքորոշումներ ձևակերպելիս Սահմանադրական դատարանը դուրս է գալիս սահմանադրական նորմերի պարզաբանման շրջանակներից և փաստացի ստեղծում է նորերը:

Այսպես, եթե մենք ընդունում ենք ՀՀ Սահմանադրական դատարանի իրավական դրույթների նորմատիվ-իրավական բնույթը, իսկ որոշ դեպքում դա միանգամայն ակնհայտ է, ապա Սահմանադրական դատարանի՝ իրավական դիրքորոշումներ պարունակող որոշումները փաստացի կարելի է համարել իրավունքի աղբյուր (ձև):

²¹ Виртук Н. В. Конституционное правосудие в России (1999-2001 гг.): Очерки теории и практики. С. 111.

²² Лазарев Л. Թ. Նշվ. աշխ., էջ 71.

²³ Նույն տեղում, էջ՝ 74, 75:

²⁴ Кутафин О. Е. Предмет конституционного права. М., 2001. С. 223.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Վահե ՍԱՅԱԴՅԱԼ

ՀՀ պետական կառավարման ակադեմիա

Ուսումնասիրել պետություն-եկեղեցի կամ կրոնական կազմակերպությունների փոխհարաբերությունները, նշանակում է քնարկել անձի, պետության, հասարակության բազմաշերտ հարաբերությունների կարևորագույն կողմերը: Դրանով կարելի է բացահայտել տվյալ հասարակության և պետության մեջ կրոնական կազմակերպությունների անդամների կրոնական-քաղաքացիական իրավունքները, ազատությունները և հոգևոր դաստիարակության որակական բնութագիրը: Յուրաքանչյուր հասարակության և պետության համար նշյալ հիմնահարցերի առկայությունը առաջնային խնդիրներից է:

«Կրոնական կազմակերպություն» հասկացության իմաստաբանական նշանակությունը հասկանալու համար դիմենք «կրոն» բառի ստուգաբանությանը: Ըստ Հ. Աճառյանի «կրոն» բառն առաջացել է «կիր» (կրել) արմատից ու «ոն» (օն) մասնիկից և ստուգաբանվում է որպես կարգ, կանոն, վարք, օրենք, սովորություն, վարդապետություն, հավատք¹: Ս. Մալխասյանցի բացատրությամբ այն նշանակում է ծես, արարողություն, կարգ, աստվածապաշտություն, ինչպես նաև դեն, աղանդ², փիլիսոփայական սկզբունք, վարդապետություն³: Հաշվի առնելով այն փաստը, որ կրոնական կազմակերպություններն ունեն հասարակական կազմակերպության կառուցվածք, հարկ ենք համարում սկսել հասարակական կազմակերպությունների հասկացության վերաբերյալ օրենքի սահմանումից:

Հասարակական կազմակերպությունների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ հասարակական կազմակերպությունը՝ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների մեջ չբաշխող (ոչ առևտրային կազմակերպությունը)

հասարակական միավորման տեսակ է, որում իրենց շահերի ընդհանրական հիման վրա, օրենքով սահմանված կարգով, միավորվել են ֆիզիկական անձինք՝ ՀՀ քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող ան-

¹ Աճառյան Հ. Հայերեն Արմատական բառարան: Երևանի պետական համալսարանի հրատ., Երևան 1926թ., հատոր 2, էջ 685: Տե՛ս նաև Հայոց Լեզուի Նոր Բառարան. Գնել Արքեպս. Գեղեճեան, Փարամազ Կ. Տօնիկեան եւ Արտաշէն Տէր Խաչատուրեան: Կ. Տօնիկեան եւ Որդիք Հրատարակչատուն, Պէյրուք, 1992, էջ 1080:

² Հմմտ. Մայիլյան Ս., Ժամանակակից աղանդները Հայաստանում, աղանդները, նրանց դասակարգումը և առանձնահատկությունները, Ս.Էջմիածին. 2000թ. էջ 17, ծանոթագրություն 1-ին:

³ Մալխասյանց Ս. Հայերեն բացատրական բառարան, ՀՍՍՌ պետական հրատ., Երևան 1944թ., հատոր 2, էջ 509:

ծինք՝ իրենց ոչ կրոնական հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջումները բավարարելու, հասարակության նրա առանձին խմբերին նյութական և ոչ նյութական աջակցություն և ապահովելու, հանրագուտ այլ գործունեություն իրականացնելու նպատակով⁴:

Կրոնը Աստվածության մասին պատկերացումները ներկայացնող համակարգ է մարդու և Աստծո միջև հոգևոր հարաբերություններում⁵, որն իր արտահայտությունն է գտնում հավատի միջոցով, իսկ այդ հարաբերությունը տեղի է ունենում աստվածապաշտության, ծեսի ընթացքում: Եթե կրոնն «իր իսկական իմաստով» բնութագրվում է Աստծո հետ հաղորդակցվելու ձգտումով, կապով, ապա աղանդավորական (պաշտամունքների) մտածելակերպում ամեն ինչ պարփակվում է կամ աստվածացված առաջնորդի, կամ աստվածացված ամենակարող «կրոնական կազմակերպության» մեջ:

Կրոնական կազմակերպությունը իրենից ներկայացնում է սոցիալական խումբ, որը ձևավորվում է որոշակի նպատակների իրականացման համար: Նման խմբերի անդամները որոշակի պարտականություններ են ստանձնում, և նրանց միջև ձևավորվում են ոչ միայն անձնային հարաբերություններ, այլև պաշտոնական, օրինակ՝ «քարոզիչ և հավատացյալ»: Սույն բնութագրական տվյալները վերաբերում են գրեթե բոլոր կրոնական կազմակերպություններին:

Կրոնական կազմակերպությունը քաղաքացիական հասարակության յուրահատուկ ինստիտուտ է, քանի որ դրա գործունեությունը մի կողմից ազդում է անձի արժեքային կողմնորոշիչների և աշխարհընկալման ձևավորման վրա, իսկ մյուս կողմից այն հանդես է գալիս որպես յուրահատուկ միջնորդ պետության, անձի և ազգային եկեղեցու փոխհարաբերություններում:

Եկեղեցին կրոնական կազմակերպության այն տեսակն է, որին բնորոշ է հոգևոր

ականների և հավատացյալների միջև ձևավորված պարզ, թափանցիկ ընդլայնված համակարգ: Եկեղեցին կատարում է կրոնական տեղեկատվության մշակման, ուսուցման, ինչպես նաև հոգևոր, ազգային մշակութային արժեքների պահպանման և փոխանցման ազգապահպան գործունեությունը, միևնույն ժամանակ զբաղվելով՝ ազգաբնակչության հոգևոր գիտելիքների ուսուցման գործընթացով: Եկեղեցին, որպես կանոն, ունի ավելի շատ հետևորդներ, իսկ մյուս կրոնական կազմակերպությունները (աղանդներ)⁶՝ համեմատաբար փոքր թվով հետևորդներ, ինչպես նաև անդամակցության կամավոր վերահսկողություն, այլ կրոնական կազմակերպություններից սահմանազատվելու ձգտում և աշխարհիկ կյանքից մեկուսացում, սեփական դիրքորոշումների և արժեքների մերժում, այլախոհների հանդեպ ընդդիմության և անհամադրոժողակալության ցուցաբերում և այլն:

Կրոնագետների կարծիքով կրոնական կազմակերպությունների առաջացումը օբյեկտիվորեն պայմանավորված է ինստիտուցիոնալացման պրոցեսի զարգացմամբ, որի պատճառներից մեկը համարվում է եկեղեցուց հավատացյալների մի մասի առանձնացումը՝ դավանաբանական ուսմունքի և պաշտամունքի փոփոխման հիման վրա: Որոշ կրոնագետներ էլ պնդում են, որ կրոնական կազմակերպությունը մարդկանց մի խումբ է, որը միավորվել է Աստվածաշնչի՝ ինչ-որ մեկի կողմից արած մեկնաբանության շուրջ: Այն բնութագրվում է ուղղադավան քրիստոնեությունից կատարված էական շեղումներով, որոնք վերաբերվում են քրիստոնեական հավատի հիմնարար վարդապետություններին և հատկապես այն փաստին, որ Աստված մարդեղացել է Հիսուս Քրիստոսի կերպարանքով⁷:

Դարեր շարունակ բացառությամբ համաշխարհային կրոնների, Հայաստանում հայ Առաքելական սուրբ եկեղեցուց դուրս՝

⁴ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը ընդունվել է՝ ԱԺ-ի կողմից (ՀՕ- 268, 04.12.2001), սկզբնաղբյուրը ՀՀ ՊՏ 2001.12.27/42(174):

⁵ Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 2, Երևան 1974թ. էջ

⁶ Անգլերեն «աղանդ» բառը գալիս է լատիներեն «cultus» բառից, որը «colere» «որևէ աստվածության պաշտել կամ երկրպագել» նշանակող բայի ձևերից մեկն է: «Cultus» բառն ընդհանուր բառ է, որը նշանակում է երկրպագություն, պաշտանմունք՝ անկախ այն բանից, թե խոսքը մասնավորապես որ Աստծուն է առնչվում:

⁷ Ջոշ Մաք-Դաուել, Դոն Սոյուարտ, մոլորեցնողները, Երևան 2002թ., էջ 12:

ցանկացած կրոնական կազմակերպություն համարվել է «հերձված կամ աղանդ»⁸: Այսօր այդ բառերը կարելի է հոմանիշներ համարել հասկանալի պատճառներով, ընդ որում «հերձվածը»⁹ աստիճանաբար դուրս է մղվում գործածությունից՝ տեղը զիջելով «աղանդին», որն ընդգրկում է նաև հերձվածի իմաստն ու նշանակությունը¹⁰: Կրոնա-

օրենսգրքում ընդունել է «աղանդ» տերմինը՝ օրենքին կցելով երկրում գործող 179 աղանդների ցուցակ, որոնք ճանաչված են որպես վտանգավոր՝ անձի և պետության համար, ինչպես նաև վերջիններս բնութագրվում են որպես մարդու գիտակցությունը վերահսկող, կործանարար կազմակերպություն¹⁴: Ուշագրավ է նաև այն փաստը, որ «Եհովայի վկաներ», «Դիտարանի ընկերություն», «Սայենթոլոգիայի եկեղեցի», «Միավորման եկեղեցի» (կամ՝ Մունի աղանդ), «Կրիշնա գիտակցության ընկերություն», «Տրանսցեն-

«...Կրոնական կազմակերպությունը քաղաքացիական հասարակության յուրահատուկ ինստիտուտ է...»

դենտալ մեդիտացիա» (SU), «Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցի» (մորմոններ), «Սպիտակ եղբայրակցություն» և Շրի Չինմոյեմի շարժում տոտալիտար աղանդները Ֆրանսիական միջնախարարական հանձնաժողովի կողմից որակվել են որպես «վտանգավոր», իսկ «Սայենթոլոգիայի եկեղեցին» **Գերմանիայում** համարվում է կիսաքրեական հոգեբանական աղանդ: Հանդգված ենք, որ մեր ազգային շահերից է բխում ընդօրինակել վերը նշված եվրոպական պետությունների փորձը, որպեսզի ստեղծվի «աղանդների»՝ վտանգավոր կրոնական կազմակերպությունների գործունեությունը «ուսումնասիրող պետական հանձնաժողով», քանի որ այդ դեպքում ավելի ճանաչելի կլինեն նրանց գործունեությունը հասարակության, պետության կողմից և կկանխվեն նրանց կողմից հնարավոր իրավախախտումները: Ինչպես նաև պետք է

գետները սրանց թվին են դասում 20-րդ դարի կեսերին ի հայտ եկած կրոնական կազմակերպություններին՝ որպես բացառություն սրանց մեջ են մտնում նաև համեմատաբար ավելի վաղ՝ 19-րդ դարում առաջացած՝ «հիսուս քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցին» (մորմոնները) և Եհովայի վկաները, որոնց կրոնագետները կոչում են՝ «տոտալիտար աղանդներ»¹¹, «քայքայիչ կրոնական կազմակերպություններ»¹²: «Աղանդ» բառը, որ նախնական շրջանում դիտվել է որպես հերձված, դեն, հերետիկոսություն¹³ բառերի հոմանիշ, այսօր ձեռք է բերել առավել նվազ նրբիմաստ, քան հերետիկոսություն բառն է: Մեջբերենք նմանատիպ կրոնական կազմակերպությունների գործունեությունն ուսումնասիրող և կարգավորող նորմերը՝ եվրոպական որոշ պետությունների փորձը: Օրինակ՝ **Ֆրանսիայում** 2001թ-ին Ազգային ժողովը քրեական

⁸ Մալխասյան Ա., ՀԼԲԲ: Նոր Հայկազյան բառարան: Աղանդի քիչ հանդիպող հոմանիշ անվանումներից է «դեն» բառը:

⁹ Եզընկայ Վարդապետի Կողբացիոյ, Եղծ Աղանդոց: Թիֆլիս, 1914թ. էջ 8:

¹⁰ Հնում հերձված ասելով նկատի են ունեցել եկեղեցու դավանանքի այս կամ այն մեկնաբանությունը չնդունող, կամ այլ կերպ քարոզող կրոնական ուղղություններին, մինչդեռ աղանդ ասելով հասկացել են ոչ քրիստոնեական կրոնները: Տարիների ընթացքում այդ երկուսը միախառնվել են իրար և այսօր ավելի գործածական է դարձել «աղանդ» անվանումը, թեև վերջիններս առաջարկում են իրենց անվանել «այլադավաններ»:

¹¹ Новые религиозные организации России деструктивного и оккультного характера, Справочник, Миссионерский отдел Московского Патриархата, Православный Миссионерский фонд Русской Православной Церкви, Белгород, 1997г, С. 428.

¹² Кривельская Н, Секта: Угроза и поиск защиты, Фонд “Благовест”, Москва, 1999г., С. 93.

¹³ Քրիստոնյա Հայաստան, Հանրագիտարան, **Աղանդ**, Հայկական Հանրագիտարան գլխավոր խմբագրություն, Երևան 2002թ. էջ 32-34:

¹⁴ Ֆրանսիայի օրենքը «վտանգավոր աղանդավորական կազմակերպությունների մասին» 17.05.2001թ 11-րդ հոդված:

ապահովվի վերջիններիս գործունեության թափանցիկությունն ու մատչելիությունը ինչպես պետության, հասարակության, այնպես էլ ՁԼՄ-ների, և այն կազմակերպությունների համար, որոնք հետաքրքրվում են վերջիններիս մասին տեղեկություններ ստանալով:

Կրոնական կազմակերպությունները բաժանվում են մի քանի դասի՝ «արևմտյան», «արևելյան» և «նոր դարաշրջանի» կամ «նոր դարի» աղանդներ: Այս աղանդների որոշ դրույթներ միմյանց մասնակիորեն համընկնում են, բայց դասակարգման համար մենք կօգտագործենք դրանց սկզբունքային դիրքորոշումները:

Արևմտյան աղանդներ: Սրանք սովորաբար այն աղանդներն են, որոնք անջատվում են քրիստոնեությունից և ժխտում վերջինիս հիմնարար սկզբունքները: Նրանք օգտագործում են Աստվածաշունչը՝ որպես իրենց հիմնական աղբյուրներից մեկը և Հիսուս Քրիստոսին՝ որպես կենտրոնական դեմք: Սովորաբար իրենց հռչակում են քրիստոնեության միակ ճշմարիտ ներկայացուցիչներ:

Արևելյան աղանդներ: Այս աղանդները Հիսուս Քրիստոսին կամ Աստվածաշունչը չեն հայտարարում իրենց կառուցվածքի անհրաժեշտ մասը: Սրանց հիմքում ընկած է արևելյան փիլիսոփայությունը, որի արմատները սերտ են հինդուիզմից, բուդդիզմից ու դաոյիզմից: Նրանք երբեմն հայտարարում են քրիստոնեության հետ իրենց համատեղելիության մասին, բայց, ըստ էության, նրանց դիրքը հիմնված է արևելյան փիլիսոփայության վրա:

Նոր դարի աղանդներ: Սրանք սովորա-

բար փորձում են միավորվել, միատեղել արևմտյան և արևելյան աղանդների համոզմունքները՝ այդպիսով ներկայացնելով տարբեր հավատալիքների մի ընտրաբաղ: Վերջիններիս կողմից Աստվածաշունչը գնահատվում է ըստ արժանավայել, բայց միայն այն ժամանակ, երբ այն նպաստում է իրենց գործի առաջխաղացմանը, Հիսուս Քրիստոսի վերաբերյալ մեջբերումներ են կատարում այն ժամանակ, երբ այն ձեռնտու է իրենց: Նրանց աշխարհայացքը սովորաբար մոնիստական կամ պանթեիստական է¹⁵:

1990-ական թվականների սկզբին ՀՀ-ում առաջ եկավ նոր կրոնական կազմակերպությունների տեսակների դասակարգման մեթոդաբանությունը, որը հիմնականում ծագել էր արևմտյան սոցիոլոգների, հոգեբանների և բողոքական աստվածաբանների աշխատություններից: Լայն շրջանառության մեջ մտան այնպիսի տերմիններ, ինչպիսիք են «պաշտամունքը»¹⁶, որը 20-րդ դարի սկզբին կիրառվում էր ԱՄՆ-ում և Մեծ Բրիտանիայում անվանելու համար կամ ոչ ավանդական կրոնական կազմակերպություններ «աղանդներ», կամ պատմական քրիստոնեության դոգմաներից շեղված միավորումները: Ավելի ուշ առաջացած «ապակառուցողական պաշտամունք» հասկացությունը, որոնց գործունեությունը բնութագրելու համար շեշտը դրվում էր անձին, ընտանիքին և հասարակությանը հասցված վնասի վրա:

Քնարկելով կրոնական կազմակերպության իմաստաբանական նշանակությունը՝ հասկացությունը և տեսակները՝ հարկ ենք համարում մեջբերել կրոնական կազմակերպության սահմանումը և հասկացությունը ըստ «խղճի ազատության և կրոնական կազ-

¹⁵ Ջոշ Մաք-Դաուել, Դոն Ստյուարտ, Մոլորեցնողները, Երևան 2002թ., էջ 13-14:

¹⁶ Գոյություն ունի կրոնական կազմակերպության մեկ այլ տեսակ՝ պաշտամունք: Պաշտամունքը իր գործունեությանը և կառուցվածքով մնան է աղանդին, սակայն ունի իր յուրահատկությունները և տարբերակվող հատկանիշները: Դրանց թվին են պատկանում այն մարդիկ, ովքեր մերժում են իրենց շրջապատող աշխարհի արժեքները, կարգերը, օրենքները և ունեն աշխարհընկալման նմանություն և ընդհանրություններ: Պաշտամունքները կրոնական կազմակերպություններից ամենաազատ են իրենց սովորույթներով, կանոններով և պահանջներով: Պաշտամունքներում հիմնական ուշադրությունը կենտրոնացվում է անհատական փորձի վրա, ինչը բերում է նման մտածելակերպով մարդկանց միավորմանը: Պաշտամունքի հետևորդներին սովորաբար չի արգելվում կապ պահպանել այլ կրոնական կազմակերպությունների հետ կամ այլ կրոն դավանել: Որպես կանոն պաշտամունքը մարդկանց միավորում է, որոնք մնան են աղանդավորներին աշխարհի հանդեպ իրենց վերաբերմունքով, որոնք չեն ընդունում հասարակության մեջ առկա արժեքները: Ժամանակակից պաշտամունքների օրինակներ կարող են ծառայել սպիրիտուալիզմը, մեդիտացիան, հավատքը աստղագիտության հանդեպ և այլն:

մակերպությունների մասին» ՀՀ օրենքի:

Կրոնական կազմակերպությունները համատեղ հավատի, դավանության, ինչպես նաև կրոնական այլ պահանջումների բավարարման նպատակով ստեղծված քաղաքացիների միավորում է: Կրոնական կազմակերպություններ են եկեղեցական ու կրոնական համայնքները, թեմերը, վանքերը, կրոնական միաբանությունները, նրանց կրթական ու հրատարակչական հաստատությունները և այլ կրոնական-եկեղեցական հիմնարկները¹⁷: Քաղաքացիների խումբը ճանաչվում է որպես կրոնական կազմակերպություն, եթե այն համապատասխանում է «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի հետևյալ պայմաններին՝ չի հակասում նշյալ օրենքի 3-րդ հոդվածի դրույթներին և պաշտոնապես գրանցված է: Կրոնական համայնքը կարող է դառնալ կրոնական կազմակերպություն, եթե այն պատմականորեն կանոնացված է որևէ սուրբ գրքի վրա և իր դավանանքով մտնում է համաշխարհային ժամանակակից կրոնական-եկեղեցական համայնքների համակարգի մեջ, ինչպես նաև իր գործունեության հիմք է հանդիսանում որևէ կրոնական ուսմունք, որը ներառում է Աստծո մասին որոշակի գաղափար, զերծ է նյութապաշտությունից, ուղղված է դեպի հոգևոր ուղորտները և ընդգրկում է առնվազն 200 չափահաս հավատացյալ անդամ¹⁸:

Նշենք այն հանգամանքը, որ «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում չի տրվում «սուրբ գիրք» բառի սահմանումը և հետևապես պարզ չէ, թե ինչու «կրոնական կազմակերպություն» ճանաչվելու համար անհրաժեշտ է պատմականորեն ճանաչված «սուրբ գրքի» առկայությունը: Այս դրույթը ըստ էության, հակասում է «Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի» 9-րդ հոդվածին¹⁹: Ինչպես նաև՝ օրենքում տրված չէ «ժամանակակից կրոնական-եկեղեցա-

կան համայնքների համակարգ» ասվածի սահմանումը, ինչը տարընթերցումների առիթ հանդիսանալուց զատ, չիմնավորված դժվարություններ է առաջացնում նաև իրավական դաշտում: Կարծում ենք, որ անհրաժեշտ է նշյալ պահանջը կամ վերանայել, կամ առհասարակ դուրս բերել գործածությունից:

Ուսումնասիրելով նշյալ բնագավառը՝ հանգել ենք այն եզրակացության, որ կրոնական կազմակերպությունները լինում են և՛ կրոնական, և՛ կրթական, և՛ քաղաքական՝ կրոնականությունն օգտագործելով որպես քող: Վերոնշյալ կրոնական կազմակերպությունների բնորոշ օրինակներից է ՀՀ-ում գործող «Հերբալայֆ»²⁰ հասարակական կազմակերպությունը, որը կրոնական ուսմունք չունի, բայց գործելակերպն ամբողջովին կրոնական է կամ ԱՄՆ-ի «ԱԳԱՊԵ» կրոնաբարեգործական կազմակերպության ՀՀ մասնաճյուղը:

Ուսումնասիրելով կրոնական կազմակերպությունների դասակարգումը՝ հարկ ենք համարում անրադառնալ նաև այսօրվա հայաստանյան կրոնական աշխարհի համայնապատկերում առկա կրոնական կազմակերպություններին:

ՀՀ-ում գործում են կրոնական կազմակերպություններ, որոնց գործունեությունը միտված է հասարակության և պետության հիմքերի թուլացմանն ու խարխլմանը, որը հարվածի տակ է դնում արտաքին պետական անվտանգությունը, ինչպես նաև խաթարում է պետության սահմանների անվտանգությունը, թուլացնում է մարտունակությունը և, ի վերջո, հանդիսանում է ազգապառակտիչ հզոր գործոն: Մասնավորապես խոսքը վերաբերվում է «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպությանը: Նշենք, որ այս կրոնական կազմակերպության ներկայացուցիչները հրաժարվում են պարտադիր զինվորական ծառայությունից, ինչը հակասում է ՀՀ մի շարք օրենքներին: Նրանց մեկ-

¹⁷ «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը, ընդունվել է՝ (ՀՕ-138, 06.07.1991), սկզբնաղբյուրը ՀՀԳԽՏ 1991/12:

¹⁸ «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը հոդված 5-ի «ե», ընդունվել է՝ (ՀՕ-138, 06.07.1991), սկզբնաղբյուրը ՀՀԳԽՏ 1991/12:

¹⁹ Կոնվենցիա մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին, Եվրոպայի խորհուրդ, 4 նոյմբերի 1950թ., հոդված 9:

²⁰ Աղանդների պատմության մեջ նորագույն երևույթ է մեր երկրում հայտնի առևտրային ուղղվածություն ունեցող «Հերբալայֆ» կրոնական կազմակերպությունը, ter-hambardzum.com. «Հերբալայֆ», 24.07.2011, Գլխավոր էջ:

նաբանմամբ իրենց հավատքին դեմ է զենք վերցնելը, քանի որ, ինչպես իրենք են հիմնավորում, Աստվածաշնչյան հայտնի արտահայտությունը՝ «սուր վերցնողը սրով կրնկրնի» (Մատթ. 26), հենց այդ է քարոզում: Մինչդեռ ըստ ՀՀ Սահմանադրության 46-րդ հոդվածի պահանջների, յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել ՀՀ պաշտպանությանը²¹: Իսկ ՀՀ Սահմանադրության 14.1 հոդվածի համաձայն բոլոր մարդիկ հավասար են օրենքի արջև²²:

«... Կրոնական կազմակերպությունները համատեղ հավատի, դավանության, ինչպես նաև կրոնական այլ պահանջմունքների բավարարման նպատակով ստեղծված քաղաքացիների միավորում է: Կրոնական կազմակերպություններ են եկեղեցական ու կրոնական համայնքները, թեմերը, վանքերը, կրոնական միաբանությունները, նրանց կրթական ու հրատարակչական հաստատությունները և այլ կրոնական-եկեղեցական հիմնարկները...»

Զինապարտության մասին ՀՀ օրենքը ևս հռչակում է, որ զինապարտությունը Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելու քաղաքացիների սահմանարկան պարտականությունն է²³: Իսկ այլընտրանքային ծառայության մասին ՀՀ օրենքը ամրագրում է, որ այլընտրանքային է համարվում ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունը, որը կապված չէ զենք կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու հետ՝ ծառայությունն իրականացնելով ինչպես զինվորական, այնպես էլ քաղաքացիական հիմնարկներում²⁴: Սակայն վերջիններս ոչ միայն խախտում են երկրի գլխավոր օրենքի պահանջները, այլև հրաժարվում են նույնիսկ այլընտրանքային զինվորական ծառայությունից, ինչպես նաև այլընտրանքային քաղաքացիական ծառայությունից: Նախընտրելով ենթարկվել ազատազրկման՝ սեփական հավատքի համար: Այս կրոնական կազմակերպության ներկայացուցիչները, իրենց հավատքի պահանջների համաձայն, չեն ընդունում նաև

«արյան փոխներարկումը» անգամ իրենց երեխաների համար, քանի որ դա խիստ հակասում է իրենց հավատքին՝ ինչը շատ դեպքերում պատճառ է հանդիսանում անդառնալի հետևանքների:

Ամփոփելով և վերլուծելով «խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին ՀՀ օրենքի» մի շարք հոդվածներ՝ եկել ենք այն եզրակացության, որ հարկ է ընդունել բնագավառը կարգավորող օրենսդրական փաթեթ, որում կսահմանվի կրոնական կազմակերպությունների տեսակները՝ հատկապես հասարակության և պետության համար վտանգավորները: Այնուհետև սպառնիչ կերպով կսահմանվի նաև կրոնական կազմակերպության հասկացությունը իր ողջ նշանակությամբ:

Կարծում ենք, որ վերոգրյալ օրենքների փոփոխությունները և լրացումները կկարգավորեն բնագավառում առկա խնդիրները և բացթողումները, որոնք հրատապ լուծման կարիք ունենալուց բացի, ունեն շատ կարևոր դերակատարություն պետության և հասարակության անվտանգության բնականոն գարգացման հարցում, որը երաշխիքն է առողջ և իրավապաշտպանված հասարակության ունենալու համար:

²¹ «ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով)» 46-րդ հոդվածը ընդունվել է (27.11.2005) Սկզբնաղբյուրը ՀՀ ՊՏ 2005.12.05 հատուկ թողարկում հոդ. 1426:

²² նույն տեղում հոդված 14.1:

²³ «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի, 3-րդ հոդվածը (ընդունվել է՝ 16.09.1998 ՀՕ-250) Սկզբնաղբյուրը ՀՀ ՊՏ 1998.10.16/26(59):

²⁴ «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը խմբ. (ընդունվել է՝ 22.11.04 ՀՕ-162-Ն):



ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 77, 2013

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ-95

- Հոբելյանական միջոցառումներ..... 2
- Աղվան ՀՈՎՍԵՓՅԱՆ – Առանց հասարակության վստահության հնարավոր չէ արդյունավետ պայքարել հանցավորության դեմ2
- ՀՀ նախագահ Սերժ ՍԱՐԳՍՅԱՆԻ ողջույնի ուղերձը10

ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ընդունել է ՀՀ գլխավոր դատախազը13
- Նշանակումներ ՀՀ դատախազության համակարգում15

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

- Գոռ ԱԼՈՅԱՆ – Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների բնութագիրը ըստ արտասահմանյան որոշ երկրների քրեական օրենսդրության.....16

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԻՐԱՎՈՒՆՔ

- Վահրամ ԱՎԵՏԻՍՅԱՆ – Կորպորատիվ արժեթղթերը և դրանց շրջանառության իրավական կարգավորումը ՀՀ-ում..... 24

ՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

- Եղիշե ԲԱԶՈՅԱՆ – Պառլամենտական վերահսկողության տեսակները..... 33

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

- Վիլիկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ – Արդարությունը որպես իրավական կատեգորիա միջնադարյան իրավագետների հայեցակարգերում40

ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՀԱՐՑԵՐ

- Արթուր ԶԱՆՈՅԱՆ – Մասնագետի հատուկ գիտելիքների կիրառման քրեադատավարական հիմնախնդիրները..... 45

ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

- Տիգրան ԹՈՐՈՍՅԱՆ – Դատական պրակտիկան՝ որպես իրավունքի աղբյուր..... 53

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ

- Վահե ՍԱՅԱԴՅԱՆ – ՀՀ-ում գործող կրոնական կազմակերպությունների իրավական բնութագիրը58